ՍՈՒՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8 1890 — ՕԳՈՍՏՈՍ — 1890 № 8

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

		էջեր	
1	ԳԱՐՇԻՆ-ից Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	1055	Նկարիչներ։
2	ՄԽԻԹԱՐԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍ . . .	1078	Երկու ճանապարհ։
3	ՊՈՕՇԵԱՆՑ ՊԵՐՃ	1087	Բզզկ (վերջ)։
4	ԱՐՄԻԵՆՅԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ . . .	1121	Մայր (բանաստեղծութիւն)։
5	» » . .	1123	Մի հաւատար (բանաստեղծութիւն)։
6	» » . .	1124	Տխուր վէպ (բանաստեղծութիւն)։
7	ՀԱՅՆԷՅ-ից Զ. ԲԱԼՈՒՊԵԱՆ. .	1125	Մի աստղ չեղեց... (բանաստեղծ.)։
8	Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ.	1127	Սէրը (բանաստեղծութիւն)։
9	ԼԷՕՊԱՐԴ-ից. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ.	1128	Ննջիր լաւիտեան... (բանաստեղծ.)։
10	ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ ԱՐՇԱԿ . . .	1129	Գերմ. գպրոց դրութիւնը (վերջ)։
11	Ա. Քչ.	1140	Գրախօսութիւն
12	Ն..	1144	Թղթ. Արտ.—Ստենլէյ և Էմին փաշա։
13	ՍԻՐՈՒՆԻ, Մ..	1164	Ճանապ. լիչատակարան. Վենետիկ.
14	ՄԱԳԱԹԵԱՆ ԵՂԻՇԷ	1176	«Արձագանք»-ի ճշմարտախօսութիւնը

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԹԻՖԼԻՍ

Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

Типографія М. Д. Ротиніанца, на Гол. просп. соб. д. № 41.

1890

ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8 1890 ՕԳՈՍՏՈՍ 1890 № 8

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՈՍՏՈՄՅԱՆՑԻ
1890

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Августа 1890 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

ՆԿԱՐԻՉՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ՎԱՍԻՕԼՕԴ ԴԱՐՇԻՆԻ)

(Թարգմ. Տիգրան Յովհաննիսեան)

Ա.

ԴԵԴՈՎ

Այսօր ինձ այնպէս եմ զգում, կարծես մէջքիցս ահագին սար վայր ընկած լինի։ Անասելի բախտաւորութի՛ւն։ Կորէ՛ք ինժեներ ու սատիրներ, հեռո՛ւ գործիքներ ու կանխահաշիւներ։

Բայց ամօթ չէ՞, որ այսքան ուրախութիւն է պատճառում ինձ խեղճ մօրաքրոջս մահը և ինչո՞ւ. միայն նորա համար, որ նորա թողած ժառանգութեան շնորհիւ ես այժմ կարող եմ դուրս գալ ծառայութիւնից, թողնել պաշտօնս։ Ասենք, նա մեռնելիս խնդրեց ինձ բոլորովին անձնատուր լինել իմ սիրած գործին և այժմ ես ուրախանում եմ, մասամբ և նորա համար, որ կատարում եմ նորա ջերմ ցանկութիւնը։ Երէկ էր... Ինչպէս զարմացաւ մեր ղբէ-խաւորը, երբ որ իմացաւ, թէ ես պաշտօնս թողնում եմ։ Իսկ երբ ես բացատրեցի նրան ծառայութիւնից դուրս գալուս պատճառը, մնաց ապշած։

1. —Գեղարուեստի սիրի՞ց... Հը՛մ... խնդիրք ունի՛ք։

Էլ ոչինչ չասեց, շուտ եկաւ ու գնաց։ Ինձ էլ հէնց այդ էր պէտք և միա՛յն այդ։ Ես ազա՛տ եմ, ես նկարի՛չ եմ։ Սրանից բարձր էլ ի՞նչ երջանկութիւն կը լինի։

Սիրաս ուզեց գնալ մի տեղ, հեռանալ մարդկանցից և Պետերբուրգից. նաւակ վարձեցի ու գետովը դուրս եկայ Ծովը։ Ջուրը, երկինքը, հեռու՝ արևում փայլող քաղաքը, Ծովեզրի՝ կապոյտին տուող՝ անտառները, կայմերի ծայրերը Կրոնշտատի նաւակայանում, յետ ու առաջ սլացող բազմաթիւ շոգենաւերը և մոտովս սահող առագաստանաւերն ու մակոյկները—բոլորը կարծես առաջւանը չը լինէին. բոլորը այս անգամ ինձ ուրիշ կերպ էին երևում։ Այդ բոլորը իմն է, այդ բոլորը իմ իշխանութեան տակ է, այդ բոլորը ես կարող եմ վերցնել, դուրս բերել կտաւի վերայ և դնել գեղարուեստի ոյժին զմայլած ամբոխի առաջ։ Ասենք արջը չը սպանած մորթին ծախել չի լինի, ես հօ՝ դեռ այնքան էլ մի երևելի նկարիչ չեմ...

Մակոյկը կորելով ջրի մակերևոյթը արագ առաջ էր գնում։ Թիավարը, որ մի բարձրահասակ, առողջակազմ ու գեղեցիկ երիտասարդ էր՝ կարմիր շապիկ հագած, անդադար շարժում էր թիերը՝ մէկ կռանում էր առաջ, մէկ յետ էր ձգւում, սաստիկ առաջ մղելով նաւակը ամեն մի շարժումից յետոյ։ Արևը մայր էր մտնում և այնպէս շլացուցիչ կերպով խաղում էր նորա երեսին ու կարմիր շապկի վերայ, որ իմ մէջ ցանկութիւն ծագեց նկարել նորա պատկերը. միշտ հետս ունենում եմ կտաւի կտորներ, ներկեր ու վրձիններ արկղիկում։

—Մի՛ թիավարի, մի բոպէ հանգիստ նստի. ուզում եմ պատկերդ նկարել, ասացի ես։

Թիերը վայր դցեց։

—Այնպէս նստի, իբր թէ թիերը վրայ ես բերում։

Նա վերցրեց թիերը, թափով տարաւ բերեց նրանց այնպէս, ինչպէս թռչունը թափահարում է թևերը, և այդպէս սառած մնաց այդ գեղեցիկ դիրքում։ Ես շտապով քաշեցի մատիտով եղերագիծը (контуръ) և սկսեցի նկարել։ Մի առանձին հրճւանքով էի շաղախում ներկերը։ Ես գիտէի, որ էլ ամբողջ կեանքումս ոչ ոք ինձ նրանցից չի բաժանի։

Թիավարը շուտով սկսեց յոգնել, նորա դէմքի կորիճ արտայայտութիւնը շուտով փոխուեց, դարձաւ թմրած ու տաղտկացած։ Նա սկսեց յօրանջել և մի անգամ մինչև անգամ թևով երեսը սրբեց, որի համար նա պէտք է դլուխը ծռէր դէպի թիակը։ Շապկի ծալ-

քերը բոլորովին անպատրաստ։ Սիրտս ուզում էր ճաքել։ Ջիգրս գալիս է, երբ որ նկարելու օրինակը շարժուում է։

—Մի քիչ հանգիստ նստի, եղբայր։

Նա ծիծաղեց։

—Ի՞նչ ես ծիծաղում։

Նա ամոթխած կերպով ժպտաց և ասաց.

—Զարմանքս է գալիս, աղա։

—Ի՞նչն է զարմանքդ բերում։

—Այն որ, կասես՝ ես հազարգիւտ բան եմ, որ ինձ քաշում էք. կարծես՞ պատկեր քաշելիս լինէք։

—Հէ՛նց պատկեր էլ գուրս կը գայ, սիրելի բարեկամ։

—Ինչների՞դ պէտքն է։

—Վարժութեան համար։ Ա՛յ, կը քաշեմ, կը նկարեմ փոքր պատկերներ, յետոյ կը սկսեմ մեծերն էլ նկարել։

—Մեծե՞րը։

—Հա, թէկուզ տասը արշինանոց։

Նա լռեց, յետոյ լուրջ կերպով հարցրեց.

—Սրբի պատկերներ էլ կարող էք նկարե՞լ։

—Սրբի պատկեր էլ կարող եմ. բայց ես միայն հասարակ նկարներ եմ քաշում։

—Հասկացայ։—Նա ընկաւ մտածմունքի մէջ և նորից հարցրեց։

—Ինչի՞ համար են։

—Ի՞նչը։

—Այդ նկարները...

Ի հարկէ՝ ես նրան գեղարուեստի նշանակութեան մասին դասախօսութիւն չը կարդացի, այլ միայն ասացի, որ այդ նկարներին լաւ գին են տալիս, հազար, երկու հազար բուբլի և աւելի։ Նա բոլորովին զոհ մնաց իմ պատասխանովը. դրանից յետոյ էլ ոչինչ հարց չը տուեց։ Էտիւդը շատ լաւ դուրս եկաւ (շատ զեղեցիկ են մայր մանող արևով լուսաւորուած շիլա շապկի վառ գոյները) և ես տուն վերադարձայ բոլորովին երջանիկ։

Բ.

ՐԵԱԲԻՆԻՆ։

Առաջիս կանգնած է Ծերունի Տարասը, որից մենք պէտք է պատկեր օրինակենք. նա շատ ձգած է, պրոֆեսսոր Ն-ը պատուիրել է ձեռքը գլխին դնի, որովհետև դա «շատ կլասիկական դիրք է» [1]։ Զորս կողմն լիքը մարդիկ են, այդ իմ ընկերներս են, որոնք, ինչպէս և ես՝ նստած են նկարակալների (мольбертъ) առաջ, ներկերի պնակներն ու վրձինները ձեռներին։ Ամէնի առաջին նստած է Դեդովը, որ թէև պէյզաժիստ (բնութեան տեսարաններ նկարող) է, բայց շատ եռանդով նկարում է Տարասի պատկերը։ Դասատանը ներկերի, ձէթի ու բևեկնի (терпентинъ) հոտ է կանգնած. տիրում է խորին լռութիւն։ Ամէն կէս ժամից յետոյ Տարասին հանգիստ է տրւում. նա նստում է փայտէ արկղի ծայրին, որ պատուանդանի տեղ էր բռնում մինչև այդ ժամանակ, և «օրինակից» դառնում է հասարակ մերկ Ծերունի, խաղացնում է երկար ժամանակ անշարժ մնալուց փայտացած ձեռներն ու ոտները, կառավարում է առանց թաշկինակի և այլն»։ Աշակերտները խնդում են նկարակալների շուրջը, նայելով միմեանց նկարածներին։ Իմ նկարակալի մօտ միշտ լիքն են լինում. ես գեղարուեստական ճեմարանի ամենաընդունակ աշակերտների թւում եմ համարւում և մեծ յոյս եմ տալիս դառնալու «մեր դասագլուխներից» (корифей) մէկը. այդ «մեր դասագլուխներից մէկը» յայտնի գեղարուեստական կրիտիկոս պ. Վ. Ս-ի խօսքն է, որ արդէն վաղուց ասել է, թէ «Ռեաբինինից վերջը մարդ դուրս կը դայ»։ Դորա համար է, որ բոլորը նայում են նկարին։

Մի հինգ բոպէից յետոյ բոլորը նորից նստում են տեղները, Տարասը բարձրանում է պատուանդանի վերայ, ձեռքը դնում է գլխին ու մենք սկսում ենք ներկել, ներկել...

Ու այսպէս ամէն օր։

Զանձրանալի է, չէ՞։ Ես էլ վաղուց համոզւել եմ, որ այդ

---

[1]) Այստեղ թարգմանութիւնը չի կարող արտայայտել այն բոլորը ինչ որ կայ բնագրում։ Բնագրում դուրս է բերած ապաւաղած ռուսերէն լեզուով խօսքով գերմանացի պրոֆեսսոր.—«общенъ классишескій поза»

բոլորը շատ ձանձրանալի է։ Բայց ինչպէս, որ շոգեհան խողովակը բաց՝ շոգեկառքը կամ պէտք է գլորւի բելսերի վրայով, մինչև որ գոլորշին հատնի կամ թէ բելսերից դուրս թռկերով երկաթէ ու պղնձէ հրեշային սարքից բեկորների կոյտ դառնայ, այնպէս էլ ես... Ես բելսերի վերայ իմ. Նրանք պինդ գրկում են իմ անիւները. իսկ եթէ նրանցից դուրս դամ, ի՞նչ կը լինի այն ժամանակը։ Ես՝ ինչ էլ լինի՝ պէտք է անպատճառ գլորւելով հասնեմ կայարանին, չը նայելով որ այդ կայարանը ինձ մի խաւար փոս է թւում, որի մէջ ոչինչ ջոկել չի կարելի։

Ուրիշների ասելով այդ գեղարւեստական գործունէութիւն է։ Որ այդ գեղարւեստական բան է խօսք չը կայ, բայց թէ այդ գործունէութիւն է...

Յուցահանդէսի նկարներին նայելիս, ի՞նչ եմ տեսնում նրանցում։ Պատատ, որի վերայ քսած են ներկեր այնպիսի դասաւորութեամբ, որ զանազան առարկաներից ստացած տպաւորութիւնների նման՝ տպաւորութիւն են գործում։ Մարդիկ նայում են ու զարմանում. այդ ո՞նց են ներկերը այդպէս հնարքով դասաւորել։ Էլ ուրիշ ոչինչ։ Դրա մասին ամբողջ հատորներ, անթիւ դրքեր են գրւել. Նրանցից շատը ես կարդացել եմ։ Բայց այդ Տէները, Կարիերները, Կուզլերները ու առհասարակ գեղարւեստի մասին գրող բոլոր հեղինակները, Պրուդոնն էլ հետը հաշւելով, ոչինչ չեն ասացուցանում։ Նրանք խօսում են թէ ի՞նչ նշանակութիւն ունի գեղարւեստը, իսկ իմ գլխումը, կարդալուց, անպատճառ մի միտք է ծագում «եթէ որ նա նշանակութիւն ունի»։ Ես չեմ տեսել սկի, որ լաւ պատկերը մարդու վերայ լաւ ազդեցութիւն գործած լինի. էլ ինչո՞ւ պէտք է հաւատամ այդ ազդեցութեանը։

Ինչու հաւատամ։ Հաւատալը որ ինձ պէտք է, անհրաժեշտ է, բայց ի՞նչպէս հաւատամ։ Ինչպէս համոզւեմ, որ ամբողջ կեանքիս ընթացքում չը պէտք է ծառայեմ բացառապէս ամբոխի յիմար հետաքրքրութեանը (դեռ լաւ է որ հետաքրքրութեանը ծառայեմ և ոչ ուրիշ բանի, օրինակ, զզւելի զգացմունքներ գրգռելուն) և մի որ և է հարատացած երկոտանի փորի մնափառութեան, որ ասում, առանց շտապելու կը մտնենայ իմ սիրելի նկարին, իմ հոգուց բղխած, սրտից քամած նկարին, որ ոչ թէ վրձինով ու ներկով,

այլ նեարգերով ու արիւնով եմ նկարել, ու կմրթմրթացնի՝ «հը՛մ... ոչի՛նչ», ձեռը կը կոխի ուռած գրպանը, կը շպրտի ինձ մի քանի հարիւր բուբլի ու կը տանի նրան ինձանից։ Կը տանի նրան յուզմունքներիս, անքուն գիշերներիս, դարդերիս ու ուրախութիւններիս, հրճւանքներիս ու հիասթափումներիս հետ։ Ու նորից կսկսես միայնակ թափառել ամբոխի մէջ։ Կսկսես մեքենայաբար նկարել դիմացիդ օրինակից երեկոյեան, մեքենայաբար նկարել նոյնը առաւօտեան, արագ յառաջադիմութեամբդ զարմացնելով պրոֆեսսորներիդ։ Ինչի՞ համար ես անում այդ բոլորը, ո՞ւր ես գնում։

Ահա չորս տարի է արդէն ինչ ծախել եմ վերջին նկարս, իսկ նոր նկարի համար դեռ ոչ մի միտք չի ծագել գլխումս։ Շատ լաւ կը լինէր, եթէ մի բան ծագէր երևակայութեանս մէջ։... Մի կարճ ժամանակ կընկնէի կատարեալ մոռացութեան մէջ. կը խորասուզուէի նկարիս մէջ, կը փակուէի երևակայութեանս աշխարհում ինչպէս վանքում, միայն նկարիս վերայ կը մտածէի։ «Ո՞ւր, ինչո՞ւ» հարցերը՝ աշխատելու ժամանակ անհետանում են. գլխումդ մի միտք կայ միայն, միայն մի նպատակ և նրա իրագործելը քեզ զւարճութիւն է պատճառում։ Նկարը մի ամբողջ աշխարհ է, որի մէջ ապրում ես և որի առաջ պատասխանատու ես։

Այդտեղ անհետանում է կենսական աշխարհային բարոյականութիւնը. դու ստեղծում ես քո նոր աշխարհում նոր բարոյականութիւն և նորա մէջն ես զգում քո արդարութիւնը, արժանաւորութիւնը կամ ոչնչութիւնն ու ստութիւնը, ինքնուրոյն կերպով, անկախ կեանքից։

Բայց միշտ նկարել չի կարելի։ Իրիկնապահի մութը ընդհատում է պարապմունքդ, դառնում ես դէպի իրական կեանքը, և նորից լսում մշտական հարցը «ինչո՞ւ», որ չի թողնում քնես, զցում է տենդի մէջ. շուռ է շուռ ես գալիս անկողնում, նայում ես մութ տարածութեանը, կարծես խաւարի մէջ մի տեղ գրած լինի այդ հարցի պատասխանը։ Եւ քնում ես առաւօտուայ դէմ մեռելի նման, որ զարթնես ու ընկնես երազի մի ուրիշ աշխարհ, որտեղ ապրում են միայն քեզնից ծնունդ առած պատկերները, որոնք մարմնանում ու պարզում են քո առաջ կատաւի վերայ։

—Ինչո՞ւ չէք նկարում, Բեաբինին, բարձր ձայնով հարցրեց ինձ հարևանս։

Ես այնպէս խորասուզուել էի մտածմունքներիս մէջ, որ ցնցուեցի լսելով այդ հարցը։ Պնակը բռնած ձեռքս թուլացել կախ էր եղել. վրձինները ցիր ու ցան թափուել էին յատակի վրայ։ Նայեցի էսիւդիս. նկարած պրծած էր և լաւ նկարած. Տարասը՝ կարծես՝ կենդանի կանգնած լինէր կտաւի վրայ։

— Վերջացրել եմ, պատասխանեցի Հարևանիս։

Դասն էլ վերջացաւ։ Տարասը իջաւ արկղի վրայից, սկսեց շորերը հագնել, բոլորը թխթխկացնելով հաւաքում էին իրանց բաները։ Սկսեցին բարձրաձայն խօսել։ Մօտեցան ինձ, գովեցին։

— Մեդա՛լ, մեդա՛լ... Ամենալաւ էսիւդն է, ասում էին ոմանք։ Միւսները լուռ էին, նկարիչները չեն սիրում միմեանց գովել։

Գ.

ԴԻԴՈՎ

Ինձ թւում էր, թէ դասընկերներս ինձ յարգում են։ Ի հարկէ, պէտք է ասել, այդ բանում ազդեցութիւն ունի մասամբ և իմ՝ համեմատաբար՝ պատկառելի տարիքը,—ամբողջ ճեմարանում միայն Վոլ՛սկին է ինձնից մեծ։ Այո, գեղարուեստը զարմանալի ձգողական զօրութիւն ունի։ Այդ Վոլ՛սկին պաշտօնաթող օֆիցեր է, մօտ քառասուն և հինգ տարեկան, բոլորովին սպիտակած մազերով. հերոսութի՛ւն չէ միթէ այդ հասակում մտնել ճեմարան, նորից սկսել սովորել։ Բայց շատ տոկուն՝ կերպով աշխատում է. ամառը առաւօտանից մինչև երեկոյ էսիւդներ է քաշում՝ ինչ եղանակ էլ լինի, մի տեսակ անձնուրացութեամբ. ձմեռը ցերեկով անդադար էսիւդներ է քաշում, իսկ երեկոյեան նկարում է։ Երկու տարուայ մէջ մեծ յառաջադիմութիւն է արել, չը նայելով որ բնականից շատ էլ մեծ ձիրք չ՝ունի։

Ա՛յ, Բեաբինինը-ուրիշ բան է. սատանի ընդունակութիւններ ունի, բայց՝ միւս կողմից՝ սարսափելի ծոյլ է։ Զը կարծեմ նրանից նշանաւոր բան դուրս գայ, թէև բոլոր երիտասարդ նկարիչները նորա երկրպագուներն են։ Մանաւանդ օտարոտի է թւում ինձ նորա սէրը դէպի բէալական ասուած նիւթերը. նկարում է տրեխներ, դիւղացու կապա, կարծես առանց այդ էլ աչքներս չի յոգնել իսկական տրեխ-

ներից. բայց գլխաւորն այն է, որ համարեա սկի չի աշխատում։ Երբեմն նստում է և մի ամսում այնպիսի պատկեր է նկարում, որ բոլորը դուում են, թէ հրաշք է. ասենք այն էլ են ասում, որ տեխնիկայի կողմից շատ թերութիւններ ունի (իմ կարծիքով՝ նորա տեխնիկան շատ ու շատ թոյլ է). իսկ յետոյ մինչև անգամ էսպէս քաշելն էլ է թողնում, մեայլ ման է գալիս ու ոչ ոքի հետ չի խօսում, մինչև անգամ ինձ հետ, թէև, երևում է, ինձնից այնքան չի փախչում, ինչքան միւս ընկերներից։ Տարօրինակ պատանի է։ Շատ զարմանալի են թւում ինձ այդպիսի մարդիկ, որ չեն կարողանում կատարեալ բաւարարութիւն գտնել գեղարուեստի մէջ։ Չեն կարողանում դրանք հասկանալ, որ ոչ մի բան այնպէս չի նսեմացնում մարդու, ինչպէս գեղարուեստական ստեղծագործութիւնը։

Երէկ նկարս վերջացրի, դուրսը դրեցի որ հասարակութիւնը տեսնի, ու այսօր արդէն եկել էին գինը հարցնելու։ 300-ից արժան չեմ ծախի։ Արդէն 250 էին տալիս. իմ կարծիքով մի անգամ որ նշանակեցիր գինը, էլ չը պէտք է պակսեցնել։ Այդպիսիներին յարգում են գնողները։ Այժմ հօ՛ սկի չեմ պակսեցնի, քանի որ նկարս անկասկած կը ծախուի. նկարի նիւթը ընթացիկ ու դուրեկան է—ձմեռուան վերջալոյս. ծառերի սև բները նկարի առաջին մասում լաւ պատկերանում են շառագունած երկնքի վրայ։ Կ.-ը այդպէս է նկարում և ի՛նչպէս լաւ են գնում նորա բաները։ Ասում են՝ միայն այս ձմեռ քան հազարի չափ աշխատել է։ Վատ չէ, կարելի է ապրել։ Չեմ հասկանում, ինչպէս են կարողանում մի քանի նկարիչներ աղքատ մնալ։ Ա՛յ, Կ.-ի ամենափոքր կտաւի կտորն էլ զուր չի կորչած, ծախւում է։ Պէտք է դուզ վերաբերուել գործին, մինչև նկարը վերջացնելը—դու նկարիչ, բանաստեղծ ես, հէ՛նց որ նկարեցիր, պրծար-գնա տուէարական ես, ու ինչքան ճարպիկ տանես գործդ, այնքան լաւ է։ Հասարակութիւնն էլ մեզ է շատ անգամ աշխատում խաբել։

Դ.

ՐԵԱԲԻՆԻՆ

Ես կենում եմ Սրեզնի Պրոսպեկտ փողոցում և օրէնը չորս անգամ անց ու դարձ եմ անում գետեզերքում, ուր ափին են մնում օտարազգի շոգենաւերը։ Ես սիրում եմ այդ տեղը, նա ինձ շատ նիւթ է տուել նկարներիս համար. ինձ դուր է գալիս այնտեղի խայտաճամուկ տեսարանը, եռ. եկող կեանքը, իրարանցումը ու աղմուկը։ Այդտեղ նայելով անուորդներ (воротъ) ու բեռնաքաշ ձախարակներ պտտող, հակեր կրող ու բարձած սայլակներ քաշող մշակներին ես սովորեցի նկարել բանւոր մարդու պատկեր։

Ես տուն էի գնում պէյզաժիշտ Դեդովի հետ։ Դա մի բարի մարդ է, անմեղ, ինչպէս և իւր պէյզաժը, ու սատոիկ սիրահարւած է իւր արուեստի վերայ, Ա՛յ, դորա համար կասկած ասած բանը գոյութիւն չունի. տեսածը նկարում է. գետ տեսաւ գետ կը նկարի, ճահիճ տեսաւ ճահիճ կը նկարի։ Ինչի՞ պէտքն է այդ գետը, այդ ճահիճը,—այդպիսի հարց երբէք նորա մտքով չի անց կենայ։ Նա, ըստ երևոյթին, կրթւած մարդ է, գոնէ՝ ինժեներ է աւարտել։ Պաշտօնը թողել է. փառք Աստծու, մի ժառանգութիւն է ստացել, որի շնորհիւ կարող է առանց աշխատելու ապրել։ Այժմ նկարում է ու նկարում. ամառը՝ առաւօտեանից մինչև երեկոյ նստած դաշտում կամ անտառում էսքիզ է քաշում, ձմեռը առանց հանգիստ առնելու յօրինում է արշալոյս, վերջալոյս, անձրևի, ձմեռուայ, գարնան սկիզբն ու վերջը և այլն։ Ինժեներութիւնը մոռացել է, և չի էլ ցաւում, որ մոռացել է։ Միայն, նաւահանգստի մօտով անցնելիս յանախ բացատրում է ինձ ահագին թուչի ու պողպատէ զանգւածների—մեքենաների մասերի, կաթսաների և շոգենաւից ափը վայր բերող ուրիշ այլ և այլ առարկաների նշանակութիւնը։

—Նայէ՛ք, ինչ ահագին կաթսայ են բերել, ասեց ինձ երէկ Դեդովը խփելով ձեռնափայտով մի կաթսային։

—Մի՞թէ մեզանում չեն կարողանում շինել, հարցրեցի ես։

—Մեզանում էլ են շինում, բայց քիչ, չի բաւականանում։ Տեսնում էք, ինչ շատ են բերել։ Շատ էլ անպիտան են շինած.

պէտք կը լինի այստեղ նորոգել, տեսնո՞ւմ էք, կապը բացւում է։ Ա՛յ, այստեղ էլ կապակալներն են թուլացել։ Գիտէ՞ք, ինչպէս են այդ շինում։ Որ իմանաք, դժոխային աշխատանք է։ Մէկը նստում է կաթսայի մէջ ու ունելիքով (քեալփաթին) նեքսուից բռնում է մեխի ծայրը, ինչքան ուժումը կայ դէմ տալով նրան կուրծքը, իսկ դրսուից վարպետը թակում է մուրճով ու այսպիսի մեխի գլուխ է շինում։

Նա ցոյց տուեց ինձ մի շարք ուռուցիկ մետաղէ կոճակներ կաթսայի կապի ուղղութեամբ։

—Այդ հո՛ նոյնն է թէ կրծքին խփեն։

—Այո, միևնոյնն է։ Մէկ օր փորձեցի մտնել կաթսայի մէջ, շորս մեխ սնդացնելուց յետոյ հազիւ կարողացայ ինձ դուրս քցել կաթսայից։ Կուրծքս բոլորովին ջարդւել էր։ Իսկ սրանք մարդ չի հասկանում թէ ինչպէս՝ կարողանում են սովորել այդ բանին։ Ասենք, ճանճի նման սառկոտում են, մէկ երկու տարի մի կերպ դիմանում են, յետոյ, եթէ չեն·էլ մեռնում, էլ համարեա ոչինչ բանի պէտք չեն գալիս։ Հեշտ բան չի ամբողջ օրը կուրծքը դէմ տալ ահագին «մուրճ»-ի հարուածներին, այն էլ կաթսայում, խեղդող օդում, երեք տակ ծալ եկած։ Ձմեռը երկաթը սառում է, իսկ նա ցրտում պէտք է նստի կամ պարկի երկաթի վերայ։ Ա՛յ, այն կաթսայում,—տեսնո՞ւմ էք այն կարմիր, նեղ կաթսան,—նստել էլ չի լինի, պարկի կողքիդ վերայ ու կուրծքդ դէմ տուր։

Դժուար գործ է այդ խլուկների (глухаръ) արհեստը։

Խլո՛ւկ։

—Այո՛, բանուորներն են այդ անունը կպցրել նրանց։

Այդ շառաչիւնից շատ անգամ նրանք խլանում են։ Եւ ի՞նչ էք կարծում, շա՞տ են ստանում նրանք այդ դժոխային աշխատանքի համար։ Մի քանի զրօշ։ Որովհետև դրա համար ոչ հմտութիւն է պէտք, ոչ շնորհք, այլ լոկ մարմին...։

Եթէ իմանայիք, Ռեաբինին, որքան ծանր տեսարաններ են ներկայանում մարդուս այդ բոլոր գործարաններում։ Ես շատ ուրախ եմ, որ մշտապէս հեռացայ այդտեղից։ Սկզբում, կեանքիցս ձանձրանում էի, նայելով այդ տանջանքներին... Ինչ եմ ասել բնութեանը. նա ոչ ոքի չի նեղութիւն տալիս և ոչ էլ նեղութիւն է զգում երբ

որ մարդ, ինչպէս օրինակ նկարիչները, ուզում է օգուտ քաղել նրանից...։

Նայէ՛ք հլա, նայէ՛ք, ինչ մուգ գոյն է, յանկարծ ընդհատեց նա իւր խօսքը, ցոյց տալով երկնքի վերայ,—ներքևը, ա՛յ, այնտեղ, ամպի տակը... հիանալի՛ է։ Մի քիչ կանաչին է տալիս։ Ա՛յ, դէ արի ու այդպէս նկարի, հէնց ի՛սկը այդպէս—ոչ չեն հաւատա՛յ։ Ճիշտ որ լաւ է, չէ՞։

Ես յայտնեցի հաւանութիւնս, թէև ճիշտն ասած, ոչինչ հիանալի բան չէի գտնում Պետերբուրգի երկնքի կեղտոտ—կանաչ կտրում, և ընդհատեցի Դեդովի խօսքը, որ սկսել էր հիանալ էլի մի ինչ որ «գոյնով» մի ուրիշ ամպի տակ։

—Ասէք, խնդրեմ, որտեղ կարելի է տեսնել այդ խլուկներին։

—Երթանք միասին գործարան. ես ձեզ ամէն բան ցոյց կը տամ։ Թէ կուզէք, մինչև անգամ վաղը կարելի է գնալ։ Ով է իմանում միաք ունէք նկարել այդ խլուկի պատկերը։ Չեռ քաշէք, չարժի. մի՛թէ սկի աւելի ուրախ բան չը կայ նկարելու։ Իսկ գործարան, եթէ կամենաք, թէկուզ հէնց վաղը գնանք։

Այսօր գնացինք գործարան, ման եկանք, նայեցինք։ Խլուկին էլ տեսանք։ Նա կծկած նստած էր կաթսայի մի անկիւնում և դէմ էր տուել կուրծքը «մուրճ»-ի հարուածներին։ Կէս ժամ նայում էի նրան. այդ կէս ժամում իմ «մուրճ»-ը մի քանի հարիւր անգամ բարձրացաւ ու իջաւ։ Խլուկը կծիկ կծիկ էր գալիս։ Ես կը նկարեմ նրա պատկերը։

Ե.

ԴԵԴՈՎ։

Բեաբինին այնպիսի յիմար բան է ուզում անել, որ խելքը գլխին մարդու մտքովն էլ չի անցնի։

Անցեալ օրը նրան տարայ մետաղի գործարանը. ամբողջ օրը ճեացինք այնտեղ ամէն բան նայեցինք, ես ամէն բան բացատրում էի նրան (սպասածիս հակառակ՝ մասնագիտութիւնիցս շատ քիչ բան եմ մոռացել), վերջապէս, նրան տարայ կաթսայ շինելու բաժանմունքը։

Այնտեղ այդ ժամանակ մի ահագին կաթսայ էին շինում։

Բեաբինինը մտաւ կաթսայի մէջ ու կէս ժամ նայում էր, թէ ինչպէս է բանւորը մեխի ծայրը բռնում ունելիքով։

Այնտեղից դուրս եկաւ գունատ ու յուզուած. յետ դառնալուց ամբողջ ճանապարհին լուռ էր։ Իսկ այսօր ինձ յայտնում է, թէ արդէն սկսել է նկարել այդ խլուկ-բանւորի պատկերը։ Այ քեզ զաղափար։ Այ քեզ պօէզիա կեղտի մէջ։ Այստեղ ես կարող եմ ազատ, առանց ոչ ոքից ու ոչնչից քաշւելու, ասել այն, ինչ որ ամէնքի առաջ ի հարկէ չէի ասի. իմ կարծիքով, այդ ուսկայնին ուղղութիւնը գեղարւեստի մէջ բոլորովին անհեթեթ, անճոռնի բան է։ Ում պէտքն է Բեպինի հռչակաւոր «Նուրլակներ»-ը։ Խօսք չը կայ, հիանալի են նկարուած. բայց սիսր էլ ոչինչ։ Ո՞ւր է գրանում գեղեցկութիւն, ներդաշնակութիւն, չքնաղութիւն։ Իսկ գեղարւեստը նրա համար չէ՞, որ վերարտադրի բնութեան գեղեցիկ կողմերը։

Ինչ եմ ասել իմ նկարին։ Մի քանի օր էլ որ բանեմ, կը վերջացնեմ իմ խաղաղ «մայիսի առաւօտը»։ Լճակի ջուրը մեղմ ծփում է, ուռերի ճիւղերը ճկւել են ներքև. աղօթարանը շառագունում է, փեսրանման ամպի կտորները վարդի գոյն են ստացել. դատ իվայր ափից իջնում է մի կին ջրքաշը (ведро) ձեռքին ջուր տանելու խրտնացնելով բադերի երամը։ Էլ ուրիշ ոչինչ, հասարակ բան է, բայց ես պարզ զգում եմ, որ այդ նկարում աշխարհքի պօէզիա կայ։ Այ, ա՛յդ գեղարւեստ է։ Դա մարդուս զգում է մեղմ մտախոհութեան մէջ, ամոքում է հոգին։ Իսկ Բեաբինինի «խլուկը» ոչ ոքի վերայ ազդեցութիւն չի գործի, հէնց նրա համար, որ ամէն մարդ կ'աշխատի շուտով փախչել նրանից, որ աչքերը չը ծակեն այդ անճոռնի փալասները ու այդ կեղտոտ ոֆաթը։ Զարմանալի բան է, երաժշտութեան մէջ հո՛ չեն թոյլ տրւում ականջ ծակող տհաճ ձայներ. հապա ինչո՞ւ պիտի մենք իրաւունք ունենանք նկարելու անճոռնի, զզւելի պատկերներ։ Պէտք է խօսել այդ մասին Լ.-ի հետ մի փոքրիկ յօդուած կը գրի, Բեաբինինին էլ մի լաւ կը նեղկի այդ պատկերի համար։

Արժի, տեղն է նրան։

2.

ՐԵԱԲԻՆԻՆ։

Արդէն երկու շաբաթ է, ինչ էլ ճեմարան չեմ գնում. տանը նստած նկարում եմ։ Այդ պարապմունքը բոլորովին տանջել, մաշել է ինձ, թէև յաջող է գնում։ Պէտք էր ասել ոչ թէ թէև, այլ և ս առաւել, որ յաջող է գնում։ Քանի մօտենում է պրծնելուն, այնքան աւելի և աւելի սարսափելի է թւում ինձ նկարածս։ Ինձ թւում է նոյնպէս, որ այդ իմ վերջին նկարն է։

Ահա նստած է նա առաջի կաթսայի մութ խորշում, երեք տակ կծկւած, ցնցոտիներով պատած յոգնած շնչասպառ։ Նրան անհրնար կը լինի տեսնել, եթէ մեխերի համար բացած կոլոր ծակերը չը լինէին։ Այդ ծակերից թափանցող լոյսի շրջանակները ընկնում են նրա հագուստին ու երեսին, ոսկեգոյն կայտերով պսպղեցնում են նրա ցնցոտիների, խճճւած ու մրոտած մօրուքն ու մազերը, կարմրատակած կեղտախառն քրտինքով ողողւած դէմքը, ջլոտ, մաշւած ձեռների ու քայքայւած լայն ու ներս ընկած կուրծքը։ Անդադար կրկնւող զարհուրելի հաւածը դղրդացնում է կաթսան և ստիպում է թշւառ խլուկին բոլոր ոյժը լարել իւր անհրաժեշտ դիրքը պահպանելու համար։ Որքան հնարաւոր էր արտայայտել այդ լարւած ձիգը, ես արտայայտեցի։

Երբեմն վայր եմ դնում պնակն ու վրձինները և նստում եմ պատկերից հեռու, ուղիղ նրա դէմուդէմ։ Ես գոհ եմ նրանից, ոչ մի պատկեր ինձ չի փայփայում, այլ տանջում է։ Այդ նկարած պատկեր չէ, այլ հասած հիւանդութիւն։ Ինչով կը վերջանայ այդ հիւանդութիւնը, չը գիտեմ, բայց զգում եմ, որ այդ պատկերից յետոյ ինձ համար էլ բան չի լինի նկարելու։ Ինչի՞ս պէտք են այժմ թռչնորները, ձկնորները, որսորդները ամեն տեսակ բնորոշ արտայայտութիւններով ու տիպարանին կերպարանքներով. ինչի՞ս պէտք է բոլոր այդ «ժանրի ճոխ աշխարհը»։ Ես էլ ոչ մի բանով այնպէս ազդեցութիւն չեմ գործի, ինչպէս այս խլուկով, եթէ միայն ազդեցութիւն կարող եմ գործել...։

Փորձի համար կանչեցի Վեղովին ու ցոյց տւեցի պատկերս։ Նա միայն ուսերը թափ տւեց ու ասեց «է՛», բարեկամն նստեց, մի կէս

ժամ նայեց, յետոյ լուռ ձեռ տուեց ու դնաց։ Կարծեմ, ազդեց... Բայց նա իշքան չը լինի, նկարիչ է...։

Ես էլ եմ նստում պատկերիս առաջ, ինձ վերայ էլ է ազդում։ Մարդ նայում է ու չի կարողանում աչքը հեռացնել պատկերից, տանջւում է այդ նահատակած կերպարանքի տեղակ։

Մէկ մէկ մինչև անգամ «մուրճ»-ի հարւածներ եմ լսում։ Դա ինձ կը զժւացնի. պէտք է մի բանով ծածկել։

Կտաւը ծածկել է նկարակալն ու պատկերը, իսկ ես էլի նստած նրա առաջ, մտածում եմ անընդհատ այն անորոշ ու սարսափելի բանի մասին, որ այդքան տանջում է ինձ։ Արևը մայր է մտնում փոշոտ ապակիների միջից թեք դեղնագոյն շողք գցելով կտաւով ծածկւած նկարակալի վերայ։ Կասես մարդու կերպարանք լինի։ Կասես «երկրի ոգին» լինի «Ֆաուստում», ինչպէս ներկայացնում են գերմանացի դերասանները։

Wer ruft mich [1])

Ո՞վ կանչեց քեզ։ Ես, ես ինքս ստեղծեցի քեզ այստեղ։ Ես կանչեցի քեզ, բայց ոչ թէ այն աշխարհից, այլ խեղդուկ, մութ կաթսայից, որ դու քո տեսքով սարսափեցնես այս խտակ, լպտած, ատելի ամբոխին։ Արի՛, դու իմ իշխանութեամբ կտաւին մեխւած ոգի, նայի նրա վրայից այս ֆրակներին ու շլեյֆներին, գոռա՛ նրանց, «ես ատող ժանտ եմ»։ Թունաւորի՛ նրանց սրտերը, զրկի նրանց քնից, ճիւաղի նման կանգնի՛ նրանց աչքի առաջ։ Սպանի նրանց հանգստութիւնը, ինչպէս իմն սպանեցիր...։

Հա, ո՞նց չէ... Պատկերը նկարած վերջացրած է, դրած ոսկեզօծ շրջանակի մէջ, երկու ծառայ կը դնեն ուսներին կը տանեն ձեմարան հանդէս դնելու համար։ Եւ ահա նա դրած է զանազան «կէսօրների» ու «վերջալոյսների» մէջ «աղջկայ ու կատուի» կողքին, մի երեք սաժենանոց դաւազանը Վասկա Շիբանովի ոտը խրող Իւան Գրոզնու» մօտ։ Խօսք չը կայ, նրան կը նայեն, կը նայեն մինչև անգամ կը գովեն։ Նկարիչները կսկսեն քննել նկարը։ Բեցենզեանները, ականջ դնելով նրանց խօսակցութիւններին, մատիտով մի բան կը խզբզեն իրենց յիշատակարանների մէջ։ Միայն պ. Վ. Ս-ն է բարձր

[1]) Ո՞վ է կանչում ինձ։

այդ բոլոր կապկութիւններից. նա նայում է, հաւանում է, գովում է, սեղմում է ձեռքս։ Նկարների կրիտիկոս Լ.-ն կատաղութեամբ կը յարձակուի խեղճ խլուկի վերայ, կը գոռգոռայ, «ո՞ւր է սրա գեղեցկութիւնը, ասէ՛ք, ուր է դեղարուեստականը, և կը հայհոյի ինձ ոտից գլուխ։ Հասարակութիւնը... Հասարակութիւնը անցնում է մօտովը անզգայ կամ թէ տհաճ ծամածռութեամբ. տիկինները կասեն մենակ, «ah comme il est laid ce խլուկ» [1]) ու շորոր տալով կ'անցնեն հեռուեալ պատկերին, «աղջկան ու կատուին», որին նայելով կ'ասեն «շատ, շատ սիրուն է», կամ թէ դրա նման մի ուրիշ բան։ Եզան աչքերով լուրջ պարոնները ապուշ կերպով կը նայեն, աչքները կը գցեն պատկերների ցանկին, ոչ էլ բառանչելու, ոչ էլ փռնչացնելու նման ձայն կ'արձակեն և հանգիստ կը շարունակեն ճանապարհները։ Ու գուցէ միայն մի որ և է պատանի կամ մատաղահաս օրիորդ ուշադրութեամբ կանգ առնի պատկերիս առաջ կատուի վերայից նայող հալ ու մաշ աչքերի աղէկտուր հայեացքում կարդայ այն մղկիտը, որ ես ամփոփեցի նրանց մէջ։ Լաւ, իսկ յետո՞յ։ Պատկերը հանդէս դրեցին, առան ու տարան։ Ի՞նչ կը լինի իմ օրս։ Այն, ինչ որ զգացել, ինչով տանջուել եմ վերջին օրերս, կը կորչի՞ անհետ։ Կը վերջանա՞յ ամեն բան միայն վրդովմունքով, որից յետոյ անդորրութիւն կիջնի իմ վերայ, ու կսկսեմ փնտռել անմեղ նիւթեր... Անմեղ նիւթ... Ցանկարծ միտքս ընկաւ, թէ ինչպէս ծանօթներիցս մէկը պատկերների ցանկ կազմելիս գոռաց գրագրին։

— Մարտինով, էլ գրի՛. № 113։ Սիրոյ երկրորդ տեսարան՝ օրիորդը վարդից հոտ է քաշում։

Կսկսե՞մ էլի առաջուայ պէս վարդից հոտ քաշել թէ րելսերից դուրս կը գա՞մ։

Է.

ԴԵԴՈՎ.

Ռեաբինինը համարեա վերջացրել է իւր «խլուկը», այսօր ինձ կանչեց նայեմ։ Ես նրա մօտ գնացի կանխակալ կարծիքով և, հար-

[1]) Օ՛, ինչ անճոռնի է խլուկը։

կաւոր է ասել, կարծիքս պէտք է փոխէի։ Նատ զօրեղ ապաւորութիւն է գործում։ Նատ լաւ է քաշած ու ճարտարութեամբ ներկերը քսած։ Ամենից լաւը այդ ֆանտաստիկական և միւնոյն ժամանակը չափազանց ճիշտ բնական լուսաւորութիւնն է։ Անկասկած՝ նշանաւոր պատկեր կը լինէր, եթէ որ նիւթը այդպէս օտարոտի և վայրենի չը լինէր։ Լ.-ն բոլորովին համաձայն է ինձ, եկող շաբաթ լրագրում կը տպւի նրա յօդուածը։ Տեսնենք ի՞նչ կասի այն ժամանակ Բեաբինինը։ Լ.-ին ի հարկէ դժուար կը լինի քննել նրա նկարը տեխնիկայի կողմից, բայց նա կը կարողանայ խօսել նրա նշանակութեան մասին գեղարուեստի տեսակէտից, որին չի կարելի և չը պէտք է ստորացնել ծառայեցնելով նրան ինչ որ ստոր և անորոշ գաղափարների։

Այսօր Լ.-ն ինձ մօտ էր։ Նատ գովեց նկարս։ Մի քանի նկատողութիւններ արեց զանազան մանր մունր պակասութիւնների մասին, բայց ընդհանրապէս վերցրած շատ գովեց։ Երանի պրոֆեսսորներն էլ նրա աչքով նայէին նկարիս։ Մի՞թէ ես վերջ ի վերջոյ չեմ ստանայ այն, որին ձգտում է ճեմարանի իւրաքանչիւր աշակերտ—ոակէ մէդալ։ Մէդա՛լ, չո՛րս տարի արտասահմանում, այն էլ վարչութեան հաշուով, ապագայում—պրոֆեսսորութի՛ւն։ Զէ, ես չեմ սխալւել, թողնելով այդ տխուր, ձանձրալի զբաղմունքը, այդ կեղտոտ գործը, ուր ամեն քայլում հանդիպում ես մի որ և է «խլուկի»։

Ը.

ՐԵԱԲԻՆԻՆ

Պատկերս ծախեցի. տարան Մոսկուա։ Փողերը ստացայ և, ընկերներիս պահանջով, նրանց համար քէֆ սարքեցի «Գիլենայում»։ Զեմ իմանում, երբւանից է սովորութիւն մտել, երիտասարդ նկարիչների բոլոր քէֆերը այդ հիւրանոցի անկիւնի դահլիճում են կատարւում։ Դա մի բարձր առաստաղով մի մեծ սենեակ է՝ չահով, բրօնզէ կանթեղներով, հնութիւնից ու թուխունի ծխից սևացած զորգերով ու կահկարասիքով, դաշնամուրով, որ իւր կեանքումը շատ չարչարանք է քաշել խամ երաժիշտների անձարձակ մատների տակ։ Մի-

միայն ահագին հայելին է նոր, որովհետև նա տարին մի երկու երեք անգամ փոխում է, այդ լինում է այն ժամանակ, երբ՝ այդ դահլիճում նկարիչների տեղակ՝ ջահել վաճառականներն են քէֆ անում [1]։

Շատ մարդ հաւաքեցին. ժանրիստներ, պէյզաժիստներ ու քանդակագործներ, երկու՝ ինչ որ փոքր լրագրիրների՝ բեցենզենտ, մի քանի կոզմնակի մարդիկ։ Սկսեցին խմել ու խօսել։ Կէս ժամից յետոյ արդէն ամենքը մի տեղ էին խօսում, որովհետև բոլորն էլ քէֆովացել էին։ Ես էլ նոյնպէս միտս է, որ ինձ վեր բարձրացրին ու սկսեցին ճոճել և ես ճատ ասացի։ Յետոյ համբուրեցի բեցենզենտի հետ ու հետը ողջում-թաս (брудершафтъ) խմեցի։ Շատ խմեցինք, խօսեցինք ու համբուրեցինք և ցրեցինք առաւօտուայ դէմ ժամի չորսին։ Կարծեմ, երկու հոգի թեք ընկան քնելու «Վիլենսայի» հէնց նոյն անկիւնի համարում։

Ես հազիւ տուն հասայ ու առանց հանուելու ընկայ անկողնիս վերայ։ Սկզբում ինձ այնպէս էի զգում ինչպէս նաւում ալեկոծութեան ժամանակ, ինձ թւում էր թէ սենեակը ճոճւում ու պտոյտ գալիս, ես ու անկողինս էլ հետը։ Այդ երկու բոպէ շարունակեց, յետոյ քունս տարաւ։

Քունս տարաւ, քնեցի և զարթնեցի շատ ուշ։ Գլուխս ցաւում է. կարծես արճիճ լցրած լինին մէջը։ Երկար ժամանակ չեմ կարողանում աչքերս բանալ. բանալուց յետոյ աչքիս է ընկնում դատարկ նկարասալը առանց պատկերի։ Նա յիշեցնում է ինձ այն բոլորը, ինչ որ վերջին օրերս քաշել էի, և ահա բոլորը նորից, սկզբից... Օխ, Աստուած իմ, պէտք է մի կերպ վերջացնել։

Գլուխս քանի գնում, աւելի է ցաւում, մի տեսակ մշուշ է իջնում վրաս։ Քունս տանում է, զարթնում եմ ու նորից քնում։ Ու չեմ իմանում, մեռելային խաղաղութիւն է չորս կողմս, թէ խլացուցիչ աղմուկ, ձայների քաւոս, օտարոտի ականջի համար սարսափելի։ Գուցէ և այդ խաղաղութիւն է, բայց նրանում մի բան զրնգում ու չիչխիում է, պտտւում ու թռչում է։ Կասես ահագին ահ-

---

[1]) Հարուստ վաճառականները հարբած ժամանակ սիրում են ջարդել հիւրանոցի հայելիները։

ուելի ջրմուղ ջուր է դուրս տալիս անտակ անդունդից, դղրդալով գնում գալիս է, և լսում են թափուող ջրի խուլ որոտումներն ու մեքենայի հարուածները։ Ու այդ բոլորի միջից մի ձայն, մի անվերջ, ձիգ, սրտաճմլիկ ձայն։ Ուզում եմ բաց անել աչքերս, վեր կենալ, մոտենալ պատուհանին, բանալ, լսել կենդանի հնչիւններ, մարդու ձայն, կառքի դղրդոց, շան հաչոց և ազատուել այս անվերջ աղմուկից, Բայց ոյժս չի պատում։ Երէկ հարբել էի։ Պէտք է ճնամ պարկած ու լսեմ, լսեմ անվերջ։

Էլի զարթնում եմ ու նորից քնում։ Նորից մի տեղ մի բան շրխկում ՝ու դղրդում է աւելի ուժգին, աւելի մոտ ու աւելի որոշ։ Հարուածները մոտենում են և խփում են իմ զարկերակի հետ։ Իմ մէ՞ջս են նրանք, գլխո՞ւմս են, թէ ինձնից դո՞ւրս։ Զի՛լ, բա՛ռ, պա՛ռզ... մէ՛կ-երկո՛ւ, մէ՛կ-երկո՛ւ... խփում է մեռաղի ու էլի-մի ինչ որ բանի։ Ես պարզ լսում եմ թուջին (чугунъ) կպչելը. թուջը զոզանջում է ու դողում։ Մուրճը սկզբում խուլ շրըպում է, կարծես կակուղ բանի է խփում, յետոյ աւելի ու աւելի զիլ է ձայն հանում և, վերջապէս, ահագին կաթսան զոզանջում է զանգի նման։ Յետոյ դադարում է, յետոյ էլի սկսում է կամաց, բարձրանում, բարձրանում է և դարձեալ լսւում է անտանելի, խլացնող զոզանջիւնը։ Նա, իսկը այդպէս է. սկզբում կակղացրած, հրաշէկ երկաթին են խփում, իսկ յետոյ երկաթը սառում է. կաթսան զոզանջում է, երբ մեխի գլուխը պնդանում է։ Հասկացայ։ Բայց ա՞յն, այն մի՞ւս ձայները... Ա՞յն ինչ է։ Ես աշխատում եմ հասկանալ, թէ այն ինչ ձայներ են, բայց մշուշի նման մի բան պատում է ուղեղս։ Թւում է, թէ հէ՛ս է կը յիշեմ, հէ՛ս է ա՛յ պատում է գլխումս, պատում է ուղեղումս ու տանջում, բայց ինչ է—չեմ իմանում։ Ինչ անում եմ չեմ կարողանում ըմբռնել... Թող մնայ։ Ես գիտեմ ինչ է, միայն թէ չեմ յիշում։

Եւ աղմուկը շատանում ու քչանում է, երբեմն հասնելով զարհուրելի սաստկութեան, երբեմն կարծես բոլորովին անհետանալով։ Ու ինձ թւում է, թէ աղմուկը չի անհետանում, այլ ես ինքս եմ այդ ժամանակ անհետանում, կորչում մի տեղ, ոչինչ չեմ լսում, չեմ կարողանում ձեռներս շարժել, կոպերս բարձրացնել, աղաղակել։ Մարմինս քարանում է, զարգանդ է ընկնում վրաս, և ես զարթնում

եմ ջերմի մէջ, քրտնքակոխ։ Զարթնում եմ, բայց ոչ բոլորովին, քնից զարթնելով մի ուրիշ քնի մէջ եմ ընկնում։ Թւում է ինձ, թէ դարձեալ գործարանում եմ գտնւում, բայց ոչ այն գործարանում, որտեղ Դեդովի հետ էինք։ Սա աւելի ահագին ու մռայլ է։ Զորս կողմից տարօրինակ, չը տեսնւած ձևի, վիթխարի վառարաններ են. բոցը խուրձ խուրձ դուրս է թռչում նրանցից ու մրոտում շինութեան, արդէն վաղուց ածուխի նման սևացած՝ պատերն ու կտուրը։ Մեքենաները շարժում են ու չխչխկում, և ես հաղիւ եմ անցնում պտտւող անիւների ու արագաշարժ, տատանւող փոկերի (ремень) միջով։ Ոչ մի տեղ մարդու նշոյլ չի երևում։ Հեռւում մի տեղ աղմուկ ու դղրդոց է լսւում. այնտեղ են բանում։ Այնտեղից կատաղի աղաղակների ու զարհուրելի հարւածների ձայներ են գալիս. վախենում եմ այնտեղ գնալ, սարսափում եմ, բայց կարծես մէկը ինձ բռնում ու քաշում է, և հարւածները քանի գնում աւելի սաստկանում են, աղաղակները քանի գնում աւելի ահռելի են դառնում։ Եւ ահա, այդ բոլորը խառնւում իրար, դժոխային աղմուկ է դառնում և ես տեսնում եմ... Տեսնում եմ, տարօրինակ, անձռնի էակ գալարւում է գետնին ամեն կողմից վրան թափւող հարւածներից։ Մի ահագին խումբ մարդիկ ինչով պատահի թակում են։ Այդտեղ բոլոր իմ ծանօթներս կատաղած դէմքերով խփում են մուրճերով, քլունկներով, փայտերով, բռունցքներով այդ էակին, որին չեմ կարողանում համապատասխան անուն ջոկել։ Ես դիտեմ, որ դա—էլի նա է. վազում եմ առաջ, ուզում եմ գոռալ, «Կացէ՛ք, դադարեցէ՛ք, ինչո՞ւ էք թակում» և յանկարծ տեսնում եմ մի զուտաս, այլանդակւած, զարհուրելի մի դէմք, զարհուրելի, որովհետև այդ իմ սեպհական դէմքս է։ Ես տեսնում եմ, թէ ինչպէս ես ինքս, մի ուրիշ ես ինքս, բարձրացնում է մուրճը, որ կատաղի հարւած հասցնի...

Այն ժամանակ մուրճը ընկաւ իմ գագաթիս։ Ամեն բան անհետացաւ, մի քիչ ժամանակ գիտակցութիւնս դիւրըմբռնում էր մի տեսակ խաւար, խաղաղութիւն, դատարկութիւն ու անշարժութիւն, իսկ մի քիչ անցնելուց յետոյ ինքս էլ ուր որ անհետացայ, կորայ...

Բեաբինինը ուժասպառ մինչև երեկոյ պարկած էր անկողնում. վերջապես այլազգի տանտիկնոջ միաքը գալով, որ իւր տնտրը այսօր ոչ մի անգամ սենեակից դուրս չի եկել, խելքը կտրեց մոտս նորա մօտ. տեսնելով խեղճ երիտասարդին, որ թաւալւում էր սասպիկ տենդի մէջ և զառանցում էր, վախեցաւ, ինչ որ բացականչեց իւր անհասկանալի բարբառով ու ուղարկեց աղախնին բժշկի յետևից։ Բժիշկն եկաւ, զարկերակը նայեց, ականջ դրեց, ինչ որ քթի տակին ասաց, նստեց սեղանի մօտ, դեղատոմսը գրեց ու գնաց, իսկ Բեաբինինը շարունակում էր տապակ տապակ գալ ու զառանցել։

Թ.

ԳՆԴՈՎ

Խեղճ Բեաբինինը հիւանդացել է երեկուայ քէֆից յետոյ։ Գնացի մօտը, պարկած էր ուշասպառ։ Տանտիկինը մօտն է, նա է պահում հիւանդին։ Տանտիկնոջը փող տուեցի, որովհետև Բեաբինինի սեղանի արկղում մի կոպէկ էլ չը կար, չեմ իմանում, անիծեալ կինն է բոլորը թռցրել թէ, կարելի է, բոլորը թողել է Վիէննայում։ Պէտք է ասած, երէկ կարդին քէֆ արեցինք. շատ ուրախ անցաւ. ես ու Բեաբինինը ողջում-թաս խմեցինք։ Լ.-ի հետ էլ խմեցի։ Շատ լաւ հոգու տէր է այդ Լ.-ն և ինչպէս լաւ է հասկանում դեղաբեռը։ Ոչ ոք այնպէս չի հասկացել այն, ինչ որ ես ուզել եմ արտայայտել իմ պատկերով, ինչպէս նա իւր վերջին յօդուածում. չեմ կարող ասել որքան շնորհակալ եմ նրանից դորա համար։ Պէտք է մի փոքրիկ բան նկարել, ձ և Կլեւեր մի բան, և ընծայել նորան։ Նա, լաւ միտս եկաւ, նորա անունը Ալեքսանդր է. վաղը չէ արդեօ՞ք նորա ծնունդը։

Բայց խեղճ Բեաբինինի բանը շատ կարող է վատանալ. նորա մեծ պատկերին դեռ շատ կայ վերջանալու, իսկ մրցանակի օրը մօտենում է։ Եթէ հիւանդութիւնը մի ամիս քաշեց, մէդա՛լ չի տանայ։ Այն ժամանակ—մնա՛ս բարև արտասահման։ Ես մի բանով շատ ուրախ եմ, որ, պէյզաժիստ լինելով, նորա հետ չեմ մրցում, իսկ նորա ընկերները՝ երևի՝ ուրախութիւնից ձիաները շփում են։ Ինչ բան չի, մի տեղ ասելանում է։

Բայց Բեաբինինին անխնամ չի կարելի թողնել, պէտք է տանել հիւանդանոց։

Ժ.

ՐԵԱԲԻՆԻՆ

Այսօր, երկարատև ուշասպառութի՛ց սթափելով, երկար ժամանակ աշխատում էի հասկանալ թէ որտեղ եմ։ Սկզբում մինչև անգամ չէք կարողանում հասկանալ, որ այդ աչքիս առաջ ընկած երկայն սպիտակ ծրարը իմ սեպհական մարմինն է վերմակում փաթաթած։ Մեծ դժուարութեամբ գլուխս դէպի աջ ու ձախ դարձնելով, որից ականջներումս սկսեց խշշալ, ես տեսայ աղօտ լուսաւորուած մի սենեակ երկու կարգ մահճակալներով, որոնց վերայ պարկած էին վերմակներում կոլոլուած հիւանդներ. յետոյ մի ինչ որ ասպետ պղնձէ զրահներով, որ կանգնած էր սպիտակ վարագոյրները քաշած մեծ պատուհանների արանքին և որ, ինչպէս յետոյ երևաց, ահագին լուցարանն էր, Քրիստոսի պատկերը անկիւնում աղօտ վառուող կանթեղով, երկու ահագին պատի վառարան։ Լսեցի հարևանիս հանդարտ, ընդհատուող շնչառութիւնը, մի հեռու տեղ պարկած հիւանդի հեծկլտող հառաչանքը, մի ուրիշի հանդարտ ֆշշոցը և պահապանի հսկայական խոմփոցը. պահապանին երևի յանձնել էին հսկել գիշերը մի վտանգաւոր հիւանդի, որ՝ կարելի է՝ դեռ կենդանի է, կարելի է արդէն մեռել է ու պարկած է այստեղ նոյնպէս, ինչպէս և մենք, կենդանի մնացածներս։

Մենք կենդանի մնացածներս... «կենդանի եմ», մտածեցի ես և մինչև անգամ կամաց արտասանեցի այդ բառը։ Եւ յանկարծ հէնց որ գիտակցեցի, թէ ես հեռու եմ մահից, թէ առաջիս դեռ ամբողջ կեանք կայ, որին ես անպատճառ կը կարողանամ ուզածս ուղղութիւնը տալ (օ՛, անպատճառ կը կարողանամ) հոգիս լցուեց մի տեսակ քաղցր, ուրախ ու մեղմ խանդաղատանքով, որ ես չէի զգացել մանկութիւնիցս ի վեր և ես, թէև դժուարութեամբ, պտտուեցի կողքիս վերայ, ոտներս կուչ ածեցի, ձեռքս դրի գլխիս տակը և քնեցի բոլորովին այնպէս, ինչպէս մարդ քնում է երեխայ ժամանակը, երբ՝ պատահում է՝ զարթնում ես գիշերը անկողնում մօրդ կողքին, երբ քամին թխթխկացնում է պատուհանը, բուքը ողբաձայն ոռնում է վառարանի ծխնելոյզում, տան գերանները ճռճռում

են սասիկ ցրտիցը, և սկսում ես կամաց լաց լինել կամ վախից համ էլ մորդ վերկացնելու համար, նա զարթնում է, քունը գլխին համբուրում է քեզ, խաչակնքում է և դու հանգստանում, կծիկ ես գալիս ու քնում ես քաղցր զգացմունքով փոքրիկ սրտումդ։

Տէ՛ր Աստուած, որքա՜ն թուլացել եմ։ Այսօր փորձեցի վերկենալ ու գնալ իմ մահճակալիս մօտիցը դիմացի հարևանիս, տենդից առողջացող մի ուսանողի, մահճակալի մօտ. քիչ էր մնում վայր ընկնէի կիսաճանապարհին։ Բայց գլուխս մարմնից շուտ է առողջանում։ Նոր որ ուշքի եկայ, համարեա ոչինչ չէի յիշում, մինչև անդամ մօտ ծանօթներիս անունները դժուարութեամբ էի մտաբերում։ Այժմ բոլորը յիշում եմ, բայց ոչ անցեալ իրականութեան, այլ երազի նման։ Այժմ նա ինձ չի տանջում, չէ։ Հինը անցել է անդառնալի կերպով։

Դեղոնը այսօր ինձ մի կապոց լրագիրներ է բերել, որոնց մէջ գտնում են իմ «խլուկը» ու նրա «Առաւօտը»։ Մենակ Լ.-ը չի գտել ինձ։ Ասենք, այժմ ինձ համար միևնոյնն է։ Այդ հեռու, շատ հեռու է ինձանից։ Դեղոնի համար շատ ուրախ եմ։ մեծ ոսկի մէդա՛լ է ստացել ու շուտով արտասահման կը գնայ։ Շատ գոհ ու բախտաւոր է, էլ ասել չի լինի, ժպիտը երեսիցը սկի վայր չի գալիս։ Ինձնից հարցրեց, թէ այս տարի հիւանդութիւնս խանգարեց միտք ունեմ եկող տարի մրցումին մասնակցելու։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս աչքերը չռեց երբ որ ես նրան պատասխանեցի, «ոչ»։

—Կատակ չէ՞ք անում։

—Բոլորովին լուրջ եմ ասում, պատասխանեցի ես։

—Հապա ի՞նչ պէտք է անէք։

—Տեսնենք, մի բան կանեմ էլի։

Նա իմ մօտից բոլորովին շւարած գնաց։

ԺԱ.

ԴԵԴՈՎ։

Այս երկու շաբաթը անորոշութեան, յուզմունքի, անհամբերութեան մէջ անցկացրի և միայն այժմ հանգստացայ, նստելով Վարշավայի երկաթուղու վագոնը։ Հաւատալս չի գալիս. է՛ս—ճեմարանի թոշակաւոր, նկարիչ, է՛ս—չորս տարով արտասահման եմ գնում աբեստոս կատարելագործելու համար։ Vivat Akademia։

Բեաբինի՛ն, Բեաբինի՛ն։ Այսօր փողոցում երբ որ կառք էի նստում վօկզալ գնալու համար պատահեցի նրան։ Շնորհաւորում եմ, ասում է, ինձ էլ շնորհաւորեցէք»։

—Ինչի՞ շնորհաւոր եմ։

—Հէնց այս բոպէիս քննութիւն տուեցի ուսուցչական սեմինարիա մտնելու։

Ուսուցչակա՛ն սեմինարիա։ Նկարի՛չ, տաղա՛նդ։ Գիւղում հօ՛ բոլորովին կը կորչի։ Գիժ չէ, բա ինչ է։

Այս անգամ Դեդովի ասածը ճիշտ դուրս եկաւ. Բեաբինինը, իրաւ որ, յաջողութիւն չունեցաւ։ Բայց դրա մասին յետոյ, մի ուրիշ ժամանակ կը խօսենք։

ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ

(Հատուած №-ի յիշատակարանից)

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

Ա.

Ուսանողական փոքրիկ սենեակում
Ապրում էինք մենք երկար տարիներ,
Ուրախ թէ տրխուր արագ սրլանում,
Անցնում էին այն երջանիկ օրեր։
Ո՛չ որպէս ընկեր, ծանօթ կամ օտար,
Թէև խեղճ որդիք նոյն հայրենիքի,
Մենք սիրում էինք հոգով չափ իրար,
Որպէս ծընունդներ մի մօր արգանդի։
Նոյն էր մեր սիրտը, նոյն էր և հոգին.
Նոյն երազ, տեսիլ, նոյն ոսկի յոյսեր
Երևում էին երկուսիս աչքին,
Նոյն էին և մեր կեանքի տանջանքներ։
Ա՛խ, խորին վրշտով, որպէս մի անդարձ
Կորուսած անգին ու քաղցր յիշատակ,
Ես միտս եմ բերում հիմա այն հանդերձ,
Որ փոփոխակի, երկար ժամանակ,
Ներկայ էր լինում երկուսիս ուսին
Համալսարանի սիրած դասերին։
Եւ ի՞նչ չէի տալ ես, եթէ հընար

Լինէր յետ բերել հիմա վարկեանն
Անցած օրերի, այն քաղցած, թըշուառ
Ու ծարաւ կեանքի, որ քաղցր էր սակայն
Իւր ընկերական անոահման սիրով,
Իւր ջերմ համբոյրով, իւր երդումներով
Հաւատարմութեան գիշերեան մթնում՝
Իրար գրկի մէջ միակ անկողնում...

Բ.

Անցան այդ օրեր: Մենք ուրախ ուրախ
Հեռու հայրենիք դարձանք միասին,
Երդուեցանք վերջին անգամ անխարդախ
Զաւակներ լինել այդ տարաբաղդին.
Երդուեցանք սիրել ամբողջ մարդկութիւն.
Սիրել ամեն ազգ, կըրօն ու լեզու,
Սիրել հարըստին, սիրել գիւղացուն,
Համարել եղբայր մեզ ամեն մարդու:
Երդուեցանք պաշտել խեղճին, թըշուառին,
Ամոքել ցաւեր, սըրբել արտասուք,
Սեղմել կըրծքերիս հալածեալներին,
Լինել միշտ նոցա անյողդողդ նեցուկ...

Գ.

Այդ օրից ահա մենք բաժանուեցանք.
Նա մընաց Տրփիխիս, ես թողի իսկոյն
Այդ ուրախ կեանքի, վայելքի քաղաք
Եւ ըշտապեցի մի հեռու անկիւն,
Դէպ'ի աննըշան, կորած մոռացուած
Մի փոքրիկ աւան, որ թանկ էր սակայն
Ինձ համար, որպէս ծանօթ ու սիրած
Օրօրոց վաղուց անցած մանկութեան:
Եւ ապրում եմ ես այնտեղ մինչ այսօր...
Ապրում եմ անվիշտ, խաղաղ, բաղդաւոր

Կին ու զաւակի սիրող շրջանում,
Յարգուած ու պատուած, որպէս մերձաւոր,
Շինականների միշտ բաց տներում.
Ապրում եմ նոցա եկեղեցու մէջ,
Իմ ձեռակերտած ուսումնարանում,
Աշակերտներիս զարթ հոգու մէջ,
Գիւղացիների անկեղծ սրտերում.
Ապրում իմ հիւանդ ու տառապեալի
Անկողնի առաջ նըստած ժամերով
Եւ անօգնական խեղճ կարօտեալի
Յարկի տակ՝ նորա վիշտն ըսփսփելով.
Ապրում եմ ծերի, երիտասարդի
Դագաղի մօտին տրխուր կանգ առած
Եւ ուրախ խընճոյք ու հարսանիքի
Սեղանի վերայ ժըպտադէմ նըստած.
Ա՛հ, ապրում եմ ես լայնարձակ դաշտում,
Թաւուտ անտառի զով ըստուերի տակ,
Ուր անտես թրռչուն ծառի ճիւղերում
Իւր գարնանային հընչում է նըւագ.
Ապրում եմ առւի կանաչ ափերին,
Քաղցրը տաղերում նորա կարկաջի,
Եւ ոսկեգանգուր արտերի միջին,
Մաղիկների մէջ հոտով մարգերի։

Գ.

Թո՛ղ պարզ, անպաճոյճ լինի իմ տընակ,
Թո՛ղ ցամաք լինի երբեմն և իմ հաց,
Ես չեմ երազել երբէք մի այլ կեանք
Պալատների մէջ անհոգ անցուցած։
Խաղաղ է իմ սիրտս և պարզ իմ հոգին.
Մրռայլ մըտածմունք, յուսահատ խոհեր,
Անբուժելի վիշտ ու ցաւ դառնագին
Չեն վըրդովում իմ արթնութեան ժամեր.
Իսկ լուռ գիշերով, երբ ամենայն ինչ

Հանգած է գիւղում խորին քընի մէջ,
Ուր չը կան շըփոթ, տարաժամ քըրքիջ,
Կէս գիշերային երգ ու պար անվերջ,
Ուր զեղխ, անառակ սխտ ու մոլութիւն
Չեն վարագուրում մըթուլթեան քօղով՝
Անձայն յարկի տակ անդորը է իմ քուն՝
Փայփայւած սիրոյ անոյշ երազով...

Ե.

Անցել են երկար, երկար տարիներ։
Ուղիղ, անվըրէպ բըռնած այս ուղին
Միշտ առաջ առաջ դըրել իմ քայլեր
Եւ մօտ իմ ահա կեանքիս վաղճանին...
Մերուլթեան ալիք ահա ծածանում,
Ահա փայլում են ճակատիս վերայ,
Մըթնում են աչքերս, ոտներըս դողում—
Վաստակած մարմնի ցաւերն են դոքա։
Բայց մօտ է, ոչինչ, և իմ գերեզման։
Այնտեղ կը հանդչիմ անցաւ, անվըրդով
Արդէն անսահման օրեր-յաւիտեան՝
Ես կը բաժանւիմ կեանքից ժըպտալով.
Ու քաղցրը այնտեղ կը լինի իմ քուն՝
Իմ ձեռքով տընկած ուռենու տակին,
Ուր, գիտեմ, որդիքս ամեն իրիկուն
Կը կարդան աղօթք իմ յիշատակին։

Զ.

Բայց կար և մի վիշտ իմ խաղաղ կեանքում.
Նա մըռայլում էր երբեմն իմ ճակատ,
Նա բորբոքւում էր երբեմն իմ սըրտում՝
Քամելով աչքիցս արցունք յուսահատ։
Այդպէս փոթորիկ պարզ օրւայ դէմքին
Ձըգում է երբեմն իւր սև վարագոյր,

Այդպէս ժլատերես ծովի հայելին
Կատաղի հողմեր դարձնում են փրփուր.
Բայց անցնում է հողմն, անցնում է մրրիկ
Եւ պարզ է կրկին երեսն երկնքի,
Ուրախ են նորից ծածանուող ալիք
Անխրոով է սիրտն հանդարդւած ծովի։

Է.

Այդ վիշտն էր թրշուառ վախճանն ընկերիս...
Վաղուց, շատ վաղուց ես չէի տեսել
Նորան՝ երբ յանկարծ ինձ դէպ՝ի Տրփխիս
Խընդրում էր մի օր արագ ըշտապել։
Քանի օրից յետ այնտեղ էի ես։
Թոզոտ, անլուայ, դիւղական շորով
Մըտնում եմ նորա շրքեղ դռնից ներս.
Ես բարձրանում իմ մարմար սանդուղտով։
Կոկւած, զարդարւած ըսպասաւորն ինձ
Զբննում է յայտնի կասկածն աչքերում.
Ես անհամարձակ մըտնում իմ դահլիճ
Ու լուռ ապշութեամբ չորս կողմըս նայում։
Լայն և ընդարձակ տարածւում է նա
Անվերջ շարքերով պատուհանների,
Թաւշեայ որմնաթուղթ պատերի վերայ,
Փայլում է յատակն իբրև հայելի.
Բարձր առաստաղից կախւած են ջահեր.
Անհուն բիւրեղի խաբուսիկ ծովում
Տեսնում եմ ես խրլճալի պատկեր.
Խաղում է հանդարդ երկիւղն իմ սրտում.
Մանիշակագոյն թաւշի գորգւածքով
Շարւած են այնտեղ բազմոց և աթոռ,
Պատկերներ փայլուն շրջանակներով,
Շողշողուն գէնքեր, արձան ու սափոր...

Ը.

Մընում եմ կամաց նորա նընջարան.
Ա՛հ, անգին ընկեր, միթէ դու ես այդ,
Համբուրում եմ ես կարօտով նորան,
Նորա դալկացած երես ու ճակատ.
Համբուրում եմ ես կիսալոյս աչեր,
Վաղահաս ալիք անզօր ծերութեան,
Հիւծւած, բարակած, դեղնագոյն ձեռներ.
Եւ արիւնաքամ շուրթեր ու բերան։
Նա լուռ է. միայն կաթ-կաթ արտասուք
Թափւում է շրքեղ վերմակի վերայ,
Պողում է ծընոտն հանդարտ, կամացուկ,
Անձայն տանջանքով հեկեկում է նա։
Մեռելանրման փրռւած անկողնում
Երկար, անմրռունչ դիտում է նա ինձ,
Ծածկել խոլին ցաւս ինձ չէ յաջողում,
Անզուսպ կաթիլներ գընում են աչքից...

Թ.

«Ընսրհակալ եմ, ընկեր, քեզանից,
Պողդողաց նորա ձայնը լալագին,
Այս վերջին ժամին չ'ուրացար դու ինձ,
Որպէս ուրացայ ես քեզ, իմ անգին։
Ես քեզ կանչեցի, որ դէթ մի անգամ
Նորից քո առաջ իմ սիրտս բանամ,
Ասեմ իմ ցաւեր, վրշտերս պատմեմ,
Քո գիրկ ու թևիդ հոգիս աւանդեմ։
Ա՛հ, շատ, շատ տարիք բարդւել է յանցանք,
Իբրև ծանրը քարը, իմ խրղճիս վերայ,
Այն օրից 'ի վեր, երբ բաժանւեցանք,
Զարչարւում եմ ես անվերջ, անխընայ...

Ժ.

«Տեսնում ես այս տուն. վաղուց չէ՛, որ ես
Զարդարել եմ այն պալատների պէս.
Վաղուց չէ, որ ես շքեղ ու փարթամ
Առատ սեղանի ճաշակել եմ համ.
Բայց առաջ... առաջ... աղքատ մուրացկանն
Երբէք չէր լինել թըշուառ ինձ նման.
Անգործ էի ես երկար ժամանակ...
Ես չէի կարող գտնել աշխատանք
Այս գործ—աղմըկի ահագին ծովում,
Ուր ամենայն մարդ՝ հաստատ իւր տեղում,
Արհամարհանքով նայում է նորան,
Ով ներս է մըտնում ձեռներն ընդունայն։
Ես խընդրում էի, բաղխում տարիներ,
Բայց անհիւրընկալ մըշտափակ դրռներ
Տեսնում էի ես միայն առաջիս
Ու ամեն անգամ տըրտում յետ գալիս
Ամօթի գոյնն էր խաղում երեսիս.
Այսպէս օրից օր սաստիկ ու սաստիկ
Զարչարում էր ինձ անողորմ կարիք.
Օ՛, ո՛րքան անհաց անցել են օրեր,
Որքան յուսահատ ու դառըն ժամեր
Փողոցների մէջ գիշերեան մըթին,
Երբ չը կար վրկայ իմ արտասուքին.

ԺԱ.

Ոչ ոք չէր մեկնում ինձ ձեռք օգնութեան
Այլ ընդհակառակ կեղծաւորական
Դիմակի տակից բարեկամների
Ես տեսնում էի միայն չարութեան
Միայն հեգնութեան թունալից ոգի։
Զայրանում էր սիրտս. հոգիս վըշտալից

Մարդկութեան անկեղծ ու ջերմ պաշտողից
Դառնում էր նորան ատող, թշնամի
Նույն իսկ ինձ համար աննրկատելի...
Ես սողում էի միշտ վայր, դեպ'ի վայր...
Ոսկի երազներ, իղձեր անհամար
Այնքան խընամքով հոգուս խորքերում
Մարդկութեան համար պահած վայվայած
Օդն էին ցընդում կամաց առ կամաց...
Ընկե՛ր եմ, ընկե՛ր, արդէն իմ սրտում
Զուներ գոյութիւն մեր սիրոյ երգումն
Եւ մի օր այնտեղ առանց երկիւղի
Ես դրտայ նախանձ, վրէժ կատաղի
Դէպ'ի ինձ մերժող, հալածող աշխարհ,
Դէպ'ի ամեն մարդ, հարուստ թէ թշուառ...

ԺԲ.

Այդ օրից 'ի վեր ես գանձ դիզեցի...
Հաստատ, անմոռաց բերան սերտեցի
Ես աշխարհային կեանքի կանոններ—
Սուտ, զրպարտութիւն, խաբէութիւններ,
Դաւաճանութիւն, որոգայթ, ոճիր,
Վաշխ ու կողոպտումն անխիղճ, անխրտիր։
Եւ ահա, ահա, չորս կողմդ նայիր,
Տես կաթիլ կաթիլ այն վարպուրից
Ծորում է արիւն վերմակիս վերայ,
Տես, տես արտասուքն հեղեղում է ինձ,
Այն մերկ բազմութեան աչքերից է դա.
Լրսում ես աղմուկ, շշփոթ, աղաղակ,
Դոքա զոհերս են այնտեղ հաւաքուել,
Օ՛, տո՛ւր, տո՛ւր նոցա այս թաւիշ վերմակ,
Այս մետաքս շապիկ, այս բարձ ոսկեթել,
Տո՛ւր նոցա վերջին քարեր պալատիս,
Վերջին պաճուճանք փարթամ շորերիս,

Տուր ամեն, ամեն, իմ անշունչ մարմին,
Թող մաս մ ասս ցրուեն դաշտերի միջին...

ԺԳ.

Մեռաւ նա. երազ, տեսիլ ահռելի
Չը թողեց Հանգիստ աւանդել Հոգին,
Եւ նա տանջուեցաւ ցուռով սոսկալի
Մինչ թըշուառ կեանքի վարկեանը վերջին.
Ամբոխ՝ խընկարկու ոսկու արծաթի,
Չը թողեց ինձ լուռ թաղել այն դիակ
Ու ճառ-ցոյցերով այն տարաբաղդի
Անպատուեց 'ի զուր տրխուր լիշատակ.
Եւ ես ոչ ոքի աչքերում այնտեղ
Չը տեսայ մի պարզ կսկիծ արցունքի.
Եւ բաժանեցի նորա տուն ու տեղ
Ուր արագ, արագ գիւղ ըշտապեցի...

ԲԱԴԷ

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ

Նուէր մեծ. բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցին։

(Նարտնակութիւն և վերջ [1])

ԼԱ.

ԵՐԵԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Գոս պատերազմն Իրանից յետոյ բերեց մեզ խաղաղութիւն և անհաւատալի արմատական յեղաշրջութիւն. ամէն բան, ամէն կարգ ու կանոն դլխիվայր շրջուեցան և հիմնական փոփոխութեան ենթարկուեցին, սովորական կեանքի և կենցաղավարութեան մէջ այնպիսի զարմանահրաշ նորոգութիւններ կատարուեցին, որ լսողի անձն է սարսափեցնում. յետ մնացին նշանաւոր հարուստ տներ ու վաճառականներ և յառաջ եկան անպայտ ու կորած մոլորածներ, ոչ միայն քաղաքները բարեզարդուեցին, գիւղերի մէջ ևս հին հին գետնափոր որջերի փոխարէն մինը միւսից յետոյ բուսան փառաւոր շէնքեր ու շինութիւններ, ռամկի միջից մեծ մեծ ձեռնարկութիւններ սկսեցին աննշան անձնաւորութիւններ և անընդունակ համարուած ու արհամարհուած մարդիկ։

---

[1] Տե՛ս «Մուրճ»-ի 1889 թ. № 12 և 1890 թ. № 1, 2, 3, 4 6։

Ամենքեան հաւատացած էին, և բնական էր, որ խաղաղութեան հետ միասին կեանքի պայմանները կամ նոյնն էին մնալու, կամ շատ չնչին զանազանութեան տակ պէտք է ընկնէին, բայց դու ոչ մեռնիս, այնպիսի խառնակութիւն և բաբելոնեան աշտարակաշինութիւն կատարուեց ամեն հանգամանքներում, որ հաւատ ընծայելը մի և նոյնն էր, թէ հոգին սեւացնել։

Կարճ միջոցում բոլն ազգային աւանդական սովորութիւնները, ապրուստի եղանակը, լեզուն, նիստ ու կացը, նահապետական դարերով սրբազործուած և արիւնի մէջ մակարդուած ծերերի պատուապահութիւնը, ծնողասիրութիւնը, պարզ սակաւապէտութիւնը, եղբայրական անբաժանութիւնը, մինչև անգամ հագնելիքի և ուտելիքի տարազն ու գները միանգամայն, կարծես, մի սատակիչ հրեշտակի սրի յառաջ դուրս վռնտուեցինև նոցա տեղը պատուաստուեցին կեանքին, տեղական պայմաններին, երկրի դիրքին խորթ և օտարոտի նորութիւններ։

Մինչև պատերազմը՝ ցորենի խալուարը (30 փութ) երեք մանէթից եթէ չորսի էր բարձրանում, սով և վերնային պատիժ էր համարուում. պատերազմի ժամանակ քառասուն մանէթի հասաւ, ամենքի բերանը բաց թողեց, ամենքին շուարացրեց, իսկ կուիրը վերջանալուց յետոյ՝ քսան և հնգից ցած չ՝իջաւ և թանգ չէր թուում։ Պանիր, իւղ, բրինձ, միս, հաւկիթ գին չ՝ունէին. պանրի լիտրը (12 գրվանքայ), յիշում եմ, երկու չուրուկ ապասի էր (ապասին վեց կոպէկ հաշուեցէք), իւղի լիտրը՝ 2000 դեան (60 կոպէկ), բրինձը նոյնպէս երկու չուրուկ ապասուց չէր բարձրացած, ձուի հարիւրը՝ երեք շահի կէս, որ այսօրուայ հինգ կոպէկն է։ Պատերազմը դադարեց՝ իւղի լիտրն երկու մանէթ դարձաւ, բրինձ ու պանիրը 40 կոպէկի եղան, ձուի հարիւրը՝ 20—25 կոպէկ, և ոչ ոքի ապշութիւն չէր պատճառում։

Այն օրից ցայսօր է, ահա, ամեն բարիք կրկնակի և եռակի սուղ են, և մեզ համար տանելի ու սովորական են թուում։

Զը գիտեմ, կընտելանայ՞ն, մեզպէս, կարճ ժամանակում այս փոփոխութեանը մեր այն պապերը, որոնք իրանց կրած նեղութիւններն և դժուար ապրուստը նկարագրել են իրանց գերեզմանաքարերի, կամ եկեղեցիների պատերի վերայ։ «Ես հարիւրը մի փող

ձու առայ, ասուն պահեցի, թող պարծենայ՝ ով այսուհետև կարողանայ աշխարհքումն ապրել և ընտանիք կառավարել։

Միամիտ և պարզ մարդի՛կ, իրանց հարիւր փողը՝ ո՞վ գիտէ՝ մեր շահու կամ դահեկանի քանի՞ հարիւրերորդական մասն է. եթէ փողը հաշուենք ներկայ տաճկական փարան, որ կոպէկի ութերորդ բաժինն է, այն ժամանակ մեր երջանիկ պապը մի կոպէկով ութ հարիւր ձու է վայելել և տրտնջացել ժամանակի սղութեան վերայ։

Վերջապէս բարեբաղդ էին նոքա, որ մեր օրերը չը տեսան, եթէ ոչ, բոպէական կաթուածի կը հանդիպէին։

Եւ ահա այսպէս, տասն և իններորդ դարի երկրորդ կիսաշրջանը մի ընդհանրական չը տեսնուած յեղափոխութիւն կատարեց ռուսահայոցս կեանքի մէջ, մի վերափոխական տակնուվրայութիւն, որ դժուար թէ աշխարհի ստեղծագործութիւնից մինչև օրս որ և է դար սորա մի հարիւրերորդական մասը կատարած լինի։

Նոյն արագութեամբ դարիս վերջին կէսն իւր դրոշմը դրեց և մեր մտաւոր շարժման վերայ. յիսնական թուականի պատերազմից յառաջ այբը քաղաքներումն էլ ուռկանով էին որսում, թող թէ գիւղերումը. իսկ այսօր ուսումը հաց ու ջրի չափ դոյութեան խնդիր է դարձել։

Մինչև ռուսի ոտքը Շիրակի դաշտավայրը դնելն ո՞վ էր երազած թէյ և նորա գործածութիւնը, հեշտաեռ, ապակեայ բաժակներ, յաղճապակի պնակներ, փայլուն սուաներկով ջնարած կօշիկ և կրկնակօշիկներ, ռուսական ֆուրաժկա կոչուած գլխարկ՝ ոչ ոքի մտքով չէր անցկացած, մեր գործածականներն էին մաքուր ջուրը, սերն ու մածունը, անխառն գինին, կաւէ գաւաթը, քերեղանը, կամ պղնձէ մաքուր կլայեկած մարթաբէքը, ինքնաձեռագործ տրեխը, կամ ամենաշուայլը՝ մաշիկ ասուած ոտնամանը և այծի մորթու (սեկ) երեսով սրածայր դիւրագին լափչինները։

Զեմ մոռանում, երբէք, մի ծաղրական դէպք, որի մէջ կեանքի բնաւորութիւնն է որոշակի արտափայլում։

Յովհաննէսը Թիֆլիզումն ուսանում էր. մի ամառ նա վերադարձել էր իւր ընտանիքի տեսութեանը. նա հագին ունի եւրոպական կիսակօշիկ՝ առանց երկայն պարանոցի. Յովհաննէսը մի աղքատ գիւղականի որդի էր։

Մի քանի մարդիկ տեսնելով նորեկի կոշիկները, ենթադրում են, թէ մի հարուստի հնոտիներ են՝ երիտասարդին ընծայած։ Այնու ամենայնիւ նրանք բաւական են դատում հարցնել, թէ որքան է վճարել Յովհաննէսն իւր հին կոշիկներին։

—Հին չեն, դուրս գալուց երկու օր յառաջ եմ գնել ութ մանէթի, պարզութեամբ պատասխանում է Յովհաննէսը։

Բոլոր լսողները զարմացմամբ աչքերը չռում են և նախատում խեղճ ազգային իւր պոզաւոր սառնասրտութեան համար։

—Տօ՛, քամի փչո՛ղ, ութ մանէթը մի այդու գին է և ոչ մի զոյգ ճաքերը (պաբանոց) կորած, մրով սևացրած, փողոցում գտած կոշկի, կշտամբում է Յովհաննէսին նորա ընկերներից մէկը. Երևանի մէջ ամենից թանգավաճառ կոշկակարն է շայիր Գիւրջի—Նաւին, որ մի մանէթից վեր կոշիկ չի ծախել. այն էլ՝ ամեն մարդ հօ՛ յիմար չէր, որ մանէթը շպրտէր. Գիւրջի-Նաւուն կարել տուողները գլխաւորապէս երգերի սիրահար աղաներն են, որոնք գիշերը մինչև առաւօտ երգել են տալիս և փոխարէնը մի մանէթ են տալիս, մի զոյգ կոշիկ էլ վերադիր առնում։

Այս խօսքերն ասողն այն անձն էր, որ երկու-երեք ամիս յետոյ՝ պատերազմի բորբոք ժամանակը՝ յանկարծական հարստութեան տէր եղաւ և մի օր էլ վերոգրեալ կոշիկների նմանին Աղէքսանդրօպոլումն ութ մանէթ վճարեց և հագած գիւղը մտաւ։

Երեկ տրեխ, այսօր կիսակոշիկ։

Ժամանակի հոսանքի ազդեցութիւնից ազատ չը մնաց և մեր Բղդէն, կամ առաւել լաւը՝ խօջա Բաղդասարը։

Նա իւր կարմիր ալաջայ օսմանեան արխալուղի վերայ սև ֆերեռ-ին հագաւ, ուսի ֆուրաժկան գլխին դրեց և թեաւ թիֆլիզ կապալառուի հետ իւր հաշիւը վերջացնելու։ Ասում են, իւր խեղճ տիրոջ ոտքերը սառը ջրումը թողեց։ Թիֆլիզեցի փորձուած կապալառուն՝ նա՝ որ իւր կեանքումը տասնաւորի նտենդանտների և հարիւրաւոր նրանց ստորադրեալ ատիճանաւորների հետ գործ է ունեցել, որ բազմաշատ կոմիսիոներ ու գործակատարների զատկական ձուի նման ատամին է տուել, օգտել, օգտուել՝ Բղդէից օձիք պատասխելով՝ երդուել է իսպառ դադար տալ շահաւէտ ձեռնարկութեանը, միայն թէ միւս անգամ մի ուրիշ Բղդէի չը հանդիպի։

Վերադարձաւ Բղդէն, ժպտալով, իւր անտեսութեան հաշիւը վերջացնելու տեղից և, ինչպէս ասում են, լա՛ւ վերադարձաւ, լա՛ւ եկաւ։ Ծոց ու գրպանը առած։

Բղդէն մուսացութեան տուեց իւր Կիզի-մատուռը, իւր խոստացած մատաղները, էլ չէր զարմանում իւր Դշխոյ Հեղինէի փոսոսկիների վերայ, այժմ նա եռապատիկն ունէր՝ այն՝ էլ աշխատած սեպհական խելքով։

Դեռ չը հասած Երևան՝ փոսոի սալակի վերայ նստած՝ նա կապեց իւր ապագայ գործունէութեան ծրագիրը։

Նորա առաջին գործը պէտք է լինէր Նողիկին առնելն և ապա Երևան փոխադրուելը։

Բղդէին քաջ յայտնի էր ջհուտա Աղաջանի թշուառ վախճանը, նա ինքն ուրիշների հետ ներկայ էր հանդուցեալ զոհի թաղմանը և թաշկինակն աչքերից ու դէմքից չէր հեռացնում։ արդեօք սրտանց կսկիծ ու մորմո՞ք էր զգում իւր բարերարին կորցնելու համար, թէ մի ներքին խղճահարութիւն երեսի վերայ պատկերանալուցը վախենում էր։

Բղդէն Կարբուց հեռանալուց յետաջ՝ այցելել էր լեզուն կապուած և ուշքը կորցրած Բաղինենց Սահակին, ցաւակցութիւն էր յայտնել նորա անբաղդ հօրը, և այսօր համոզուած լինելով, որ Սահակը վաղուց արդէն հայր Աբրահամի գոգումը բազմած կը լինի, նա հաստատ յոյս ունէր, որ ինքը կը գայ և երկու օրից յետոյ անարգել տէր կը լինի Նողիկին, կը թողնի բոլորովին Կարբին, իւր մօրը կը յանձնի նորաշէն տունը ու ինքը՝ պարսիկ բէգզադէի և խանզադէի նման՝ ձեռքի մէջ կառնի սիրուն թասլանիկի (էՈՂԷ) ոտքերը կաշկանդող անեւոյթ շղթան, կամ թէ կը բռնի նաշխուն կաքաւի սփածանելիքով պատած վանդակը և կը տանի կը բազմեցնի Երևանումը մի ժամանակաւոր վարձովի պալատում, մինչև ինքը մի կողմից ընդլայնէ իւր վաճառականական գործառնութիւնը և միւս կողմից մի շքեղ շէնք կառուցանելով տեղաւորի նորա մէջ իւր նազելոյն։

—Օ՛հ, հոգուդ մատա՛ղ, սիրուն աղջի՛կ, սրանից աւելի բարեբաղդ վիճա՞կ, քսակդ լիքը, ջահել ու անմեղ հարսը կողքիդ, կե՛ր, խմի՛, ուրախացի՛ր ու գրկիդ մէջ պինդ սեղմի՛ր։

Ինքնամոռացութիւնը Բղդէին վերացական աշխարհը տարաւ,

նա կարծեց, թէ իւր առջևը նստողն իւր սրտի առարկան է և նա տարածեց բազուկները ու թևերի մէջ ամուր խտրտեց փոստի սայլորդին։

—Հաւա՛ր... օգնեցէ՛ք, ձիանց սանձը ձեռքից թողեց և ճիչ ու գոռոց բարձրացրեց սայլորդը՝ կարծելով անշուշտ՝ թէ անծանօթ ճանապարհորդի միտքը դէպի ինքը չար է։

Լաւ էր, որ Բղդէն շուտ սթափուեց և ձեռքը ձիանց երասանակին հասցրեց, .ապա թէ ոչ, երկուսն էլ ջարդ ու փշուր պէտք է խորտակուէին մօտակայ ձորի մէջ։

Նա իւր արարքը վերագրեց աչքերի մթագնութեանը և ուշագնացութեանը, որով սայլորդն ապահովացաւ։

ԼԲ.

ԱԼՄԱՍՏ ԽԱԹՈՒՆԸ.

Ոսկրաբոյժ Ալմաստ Խաթունը շատ յուսահատ է, քիթ ու մուրթը քաշ է արել, հետը խօսել չի լինում, եօթը հարցմունքին մի կարճ պատասխան գժուարութեամբ է տալիս, օրական երկու պատառ կերակուր հազիւ է ուտում, կերածն էլ ջանովը չի անցնում։

—Ո՞վ է ոսկրաբոյժ Ալմաստ Խաթունը և ի՞նչ է նրա տրամութեան շարժառիթը։

—Այս պատուաւոր անձնաւորութիւնը Կարբու երևելի աներից մէկի տանտիկինն է, նա այրեցած է իւր հարսնութեան առաջին տարիներում, բայց պահպանել է ընդհանուրի աչքումն իւր աղայ ամուսնու ժամանակին ունեցած պատիւն ու յարգանքը։ Կարբու ողջ գաւառը սիրում է Ալմաստ Խաթունին և ճանաչում. համարեա՛ ամէն գիւղում գտնուած է։

Ալմաստ Խաթունը թէև այսօր միջին հասակի կին է, բայց չի կորցրել իւր պատանեկական թարմութիւնն և սքանչելի գեղեցկութիւնը. մի ժամանակ նա նշանաւոր գեղեցկուհու հռչակ է վայելել, այսօր էլ վայելում է։ Նրա խոշոր և նշաձև աչքերը, թանձր և կամարակապ յօնքերը, երկայն և խիտ արտևանունքը, լայն ճակատը, բոլորակ այտերը՝ ափներումն սպիտակ և հեռահետ վարդի գոյնի փոխուող, չափաւոր և սակաւ ինչ սուր քիթը, փոքրիկ բերանը,

նուրբ և կարմրաշաղ շրթունքը, լուսնաձև կզակը, բարակ իրանն և բութ ու ձուաձև գլուխը միացնող լուսափայլ պարանոցը, այս ամենը համերաշխ են նրա առոյգ և փարթամ կազմուածքին։

Ալմաստ Խաթունն անկասկած շատ փոքրահասակութիւնից է ճաշակել Բայազիդումն ամուսնական քաղցրութիւնը, կամ թէ օրիորդ ժամանակը խիստ զգոյշ և ծածուկ է պահուած եղել ծնողական յարկի ներքոյ, ապա թէ ոչ, վայրենի քուրդը, կամ հէնց կրակոտ հայ երիտասարդը չէին հանգստանալ բարբարոս դարումը՝ մինչև չը յափշտակէին չքնաղ աստուածուհուն։

Ալմաստ Խաթունը մինչև հիմա էլ մերժում է իւր խնամաքարին նստող շատ երկրորդ ամուսինների առաջարկը։

Նրա մերժելու գլխաւոր հիմնակէտը տեսիլքի մէջ իրան ազդուած յայտնութիւնն է եղել։ Իւր պատմածին համաձայն՝ նա շատ տխուր էր, որ զրկուելով թանգագին և հռչակաւոր ամուսնուց՝ դէթ չի արժանացել զաւակի հոգս քաշելու շնորհքին, և թէպէտ տհաճ կրկին աշխարհք մտնելուն, բայց զաւակ ունենալու բուռն ցանկը ձգտել է նրան՝ այրիութեան տարելիցքը կատարելուն պէս՝ առաջին դիմողին ձեռքը տալ, միայն թէ արժանաւոր մայր լինելու փափագին։

Եւ ահա, մի գիշեր, մինչ հանգստեան աղօթքն էր մրմնջում, Ալմաստ Խաթունին թուեցաւ, որպէս թէ ինքը Կարբու ձորումն աղցան էր քաղում. յանկարծ բարձր ժայռի կատարից մի քաջակազմ երիտասարդ դահավէժ փռուեց իւր առջևը և ջարդ ու փշուր եղաւ։ Ալմաստը շփոթուեց, մոլորուեց և երկար ժամանակ չէր վստահանում մտնենալ անծանօթ թշուառ աղամարդին, որ արենաթաթաւ հագիւ շարժուում էր։

—Ի՞նչ ես ապշել ու սառած մնացել, Ալմա՛ստ, չե՞ս տեսնում առաջիդ մորթած հաւի նման թրպրտացողին, լսում է նա իւր հանգուցեալ մօր սպառնալից, յանդիմանական ձայնը, որ կանչում էր երկնքից։

—Ի՞նչպէս կարող եմ ես՝ մի ջահել կին՝ մտնենալ մի օտարական աղամարդի, ծակ բերանն ինձ կրակը կը դնի, կայրի, բամբասչոր կանի, երկրի երեսին թքանքատեղ կը դառնամ, գողահար, ահահար պատասխանում է Ալմաստը։

—Չէ, զաւա՛կս, չէ՛, մարդը վերջին շնչումն է, օգնութեան կարօտ է, դա կարող է անտէրութիւնից զոհ դնալ քո կեղծ ամօթխածութեանը, մի՛ քաշուիր, մօտ գնա, դանակդ հանիր, պատառոտիր հագուստը և դարման տար՝ ընչով կարող ես։

Ալմաստը ոգի է առնում, յառաջ է վազում և կիսաշունչ մարդին դրախտահալած Ադամ պապին նմանացնելուց յետոյ՝ գոնում է նրա բոլոր ոսկրները կոտրատուած և մանրոտուած, ինչ տեղ ձեռք ձգում, իրան թուում է, թէ տաշեղի փշրանք են իւր բռնումը։

—Ես սրան ի՞նչ կարող եմ անել, մայրի՛կ, Լոզման բժիշկն ինքը պատանն ուսին գերեզմանից վեր կենալ, չի կարող օգնել, սրա ոսկրոտիքների մէջ ողջ տեղ չի մնացել։

—Սրիր դանակդ քարի վերայ, քերթի՛ր փշրուած տեղերի մորթը և սկսիր մէկ մէկ միացնել ոսկրներն ու կրկին կարել, կարկրել, հրամայում է Ալմաստին իւր մայրը։

Մօր պատուէրը բառացի կերպիւ կատարում է այրի դուստրը, երկար ժամանակ պարապում է կիսամեռ հիւանդին բուժելով, քանիցս փակում և նորից շարում է սիալմամբ դասաւորած ոսկրները, մինչև որ բոլորովին տեղաւորում և կարգի է բերում փշրուածքը։

Այնուհետև մօր ազդելովը Ալմաստը վերցնում է կտաւը, շրէշով ձուով և խնկով սպեղանիք (էպիթրոս, պլասթիր) է պատրաստում, կոտրուածները նրանով ծածկում և տախտակներով կապկպտում։

Երեք դիշեր տեսիլքը կրկնուում է Ալմաստի աչքին։

Վերջին անգամին մայրն այս է հրամայում.—այսուհետև, իմ սիրելի դո՛ստրս, Աստուածանից դուստացար սնդղչութեան (ոսկրաբուժութիւն) շնորհք, փոխանակ մի երեխայի հոգս քաշելու, որը քո մտածութեան առարկան է դառել, քո վզին բարձուում է թշուառ խեղերի և անդամալոյծների հոգածութեան ծանրութիւնը, մինչև որ շունչդ եղունգիդ ծայրին է (ֆանի կենդանի է), սուրբ պարտքդ համարիր առաջին դիմողին օգնութիւն հասնելու, գնա՛, կոտրածը կապի՛ր, առողջացրո՛ւ և ոչ մի փող վարձատրութիւն մի՛ ստանար. գործի՛ր, մի՛ ամաչիր, մի՛ քաշուիր, վերքը բաց արա՛, դարմանիր՝ ինչ սեռի և հասակի լիներ հիւանդդ։

Այն օրից այսօր է, որ Ալմաստ Խաթունն առաջին սնդղին (ոսկրաբոյժ) է մեր գաւառումը և հաւատարապէս օգնում է մե-

ծին ու փոքրին, արուին և իգին, նա տղամարդ է՝ տղամարդկանց համար, կին արմատ է՝ կանանց օգնելու։

Մատ երկու տարի է՝ օրն երեք անգամ շարունակ այցելում է Ալմաստ խաթունը Բատինենց Սահակին, քակում, արձակում է վերքը, դարմանում է, բայց մաղաչափ օգնելն անկարանում է։

Գարսիկ Բէգզադէ հրացանի գնդակն, ինչպէս յայտնի է, փշրել էր Սահակի ձախ ուսագլուխը. Վնասուածքը մի գնդակատեղ էր, բայց ոսկրի կտորը չը կար, կոտրուել, թռել էր գնդակի հետ միասին։ Ալմաստ խաթունն իւր կեանքումն այսպիսի դէպքի չէր պատահել, ի՞նչ անէր խեղճը, հօ՛ չէ՞ր կարող ուրիշ ոսկրի կտորով մէջ տեղի դատարկութիւնը կարկատել։ Իսկ եթէ Ալմաստ խաթունի ձեռքից չէր գալիս Սահակին բժշկել, այդ արդէն յայտնի նշան էր, որ միակ յոյսը Աստուծոյ ամենազօր աչն է մնացել։

Ողորմելի Բատինենց Կարապե՛տ, ապաբաղդ հա՛յր, աչքի առաջին յայտնապէս տեսնում էր իւր զաւակի օր ըստ օրէ մաշուել հիւծուելը և չէր վստահանում, բերանը չէր զօրում մի խօսք հարցնել Ալմաստ խաթունից, մի՛ գուցէ պատասխանը յուսահատական լինէր։

Եւ այդպէս իսկ էր, Ալմաստ խաթունը Սահակին այցելելու օրից նրան խնամք էր տանում, բայց ոչ մի փոփոխութիւն հիւանդի դրութեան մէջ չէր նշմարուում. Սահակը միակերպ անզգայ ընկած էր, իրան չէր իմանում, նորա կերակուրը մի քանի կաթիլ արգանակ էր, որ բերանն էին լցնում. ոչ տնքո՛ց, ոչ վրնո՛ց, ոչ ասե՛լ, ոչ խօսի՛լ, ոչ շարժուի՛լ չը կար, միակ կենդանութեան նշանը քթերից դուրս փչած արտաշնչութիւնն էր և այլ ոչինչ։

Ո՛վ ասես, չէր գալիս Սահակին տեսութիւն, ամեն մի այցելող դուռը դուրս գնացածին պէս՝ մի յուսահատ բացատական շարժում էր անում գլխով և յոգոց քաշելով՝ ափսոսում։

Կար սակայն մինը, որ բոլորից առաւել մեծ կարիք էր զգում Բատինի թուռանն այցելելու՝ և այդ շնորհքը նորան արգելուած էր։

Քանի՞ցս անգամ Եողիկն աղաչել, թախանձել է իւր մօրը՝ Նրան տես գնալու՝ իրան էլ հետը տանել, բայց սառն յանդիմանութիւնն է իւր պատասխանն եղել։

—Ի՞նչպէս, աղջիկն իւր երեսի ջուրը, ճակատի մեռոնն այնպէս կորցնի, որ վստահանայ պտակ չը գնացած՝ իւր սկեսրայրենց

շեմքը տրորել, թէ ես իմ նշանածին տե՞ս եմ գնում. ո՞չ ապաքէն դրանով նա իւր սկեսրայրի ու սկեսուրի գլուխն է տրորում, իւր ծնողաց անունն է խայտառակում, իւր օրիորդութեանն է արատ բերում, բոլոր հասարակութիւնն է արհամարհում։ Միւս անգամ չը համարձակուիս պռունկդ պռնկիդ դիպցնելու, սև սրտի աղջի՛կ, թէ չէ մազերդ հատ հատ գլխիցդ կը քաղեմ, գետինը մտնի՛ս դու։

Այս կծու կշտամբանքներներով Աղաջանի այրին դուռն իւր աղջկայ երեսին շրխկացնում էր, նրան սիւնի տակին արտասուակոլոլ էր անում և ինքը գնում էր փեսացուին տես։

—Ա՛յ դու ծակծկոտուելու, անպատկառ աղջի՛կ, դեռ մինչև հիսի երեսիդ վրայ ընկա՞ծ ես, մի երեկոյ աչքերը շատ լալուց կարմրատակած՝ վերադարձաւ Նողիկի մայրը և հրամայեց. շո՛ւտ, վերկա՛ց, տեղեր քցիր՝ վեր թափուի՛նք, ես գիտեմ՝ կէս գիշեր չը հասած՝ մեր դուռը կը ծեծեն, Աստուած երկու ձեռքով գլխներիս քար գցեց. էստեղ՝ մեր դուռն երեսներիս փակ թողեց, էնտեղ՝ սև թագ ու պսակդ կապեց. մի երկու ժամից Բոտինենց լոյսը կը խաւարի, նշանածիդ ջահել արևը մեր կը մտնի։

Աղաջանի այրին զղջաց իւր անզգուշութեան համար. նա շատ ուշ գլխի ընկաւ և դուռը բաց թողած՝ հեռատպատաւ վազում էր Կարբու փողոցներից մէկովը իւր աղջկայ քամակից՝ ինչպէս վազում է որսկանի բարակը (շուն) աղուէսի ետևից. խեղճ կի՛ն, իւր աշխատանքն անօգուտ անցաւ, ամօթահար, երեսը ճանգռելով՝ ու նոյնաձեռն յետ եկաւ նա և չը համարձակուեց Բոտինենց տունը մտնելու, ուր երկու-երեք քայլ իրանից յառաջ ներս ընկաւ Նողիկը և դուռը մօր երեսին ծածկեց։

Այս առաջինն էր Նողիկի կեանքումը մօրը հակառակելը։ Նա իրան ձգեց հիւանդի սենեակը և տան մէջ տեղը մնաց կանգնած՝ բերանաբաց և չռած աչքերով։

Նողիկը տարածել էր անգիտակցաբար իւր երկու թևերը, մէկ նայում էր տան մի անկիւնումը փռուած անկողնին և մէկ աչքերը դարձնում էր իրան չորս կողմը հաւաքուածների վերայ։ Կատարեալ բանտից փախած կալանաւորի էր նմանում աղջիկը, որ ազատութիւնը գրկելու յուսով՝ արել է վտահ և վճռական քայլը, բայց իրան շրջապատած է դտել հարիւրաւոր զինուորներով։

—Արի՛, իմ սևաքող հարենացո՛ւս, արի՛, գլուխ գլխի տուէք նշանածիդ հետ, գոռալով յառաջ վազեց Սահակի մայրը և ուզում էր գրկել Նողիկին, բայց մօտ եղողների խօսքերը նրան արգելք եղան։

—Էս ի՞նչ տեսանք, քա՛, խիզա՛ն [1]), էսքան էլ անիրաւութի՞ւն, ա՛յ քեզ անամօթութիւն, աչքերը Նողիկի վերայ տնկած՝ արտասանեցին ներկայ եղող հարևան կանայքը։

—Լռեցէք և դուրս գնացէք ամենքդ, յառաջ եկաւ և կարգադրեց Ալմաստ խաթունը, սրան Աստուած է այստեղ ուղարկել, թողէք վերջին շնչումն իրար կարօտն առնեն։

Ալմաստ խաթունը բռնեց աղջկայ կուռը և յառաջ տարաւ դէպի հիւանդն ու թողնելով նրան հոգևարքի անկողնու մօտ, ինքը դուրս գնաց ուրիշների հետ միասին։

Նողիկը, կարելի է ասել, ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր հասկանում, նորա ծնկները ծալուեցին և ընկաւ անշունչ դիակի վերայ։ Անշունչ ենք ասում և չենք սխալուում, Սահակի թոյլ շնչառութիւնը, համարեա՛, դադարել էր, և միայն մի ամենանուազ տրոփիւն զգալի էր լինում կոկորդի աջ ու ձախ կողմերում։

—Սհօ ջա՛ն, Սհո՛, իմ գլխի տեր Սհո՛, արևիդ մատաղ դնա՛յ քո Նողիկը, վերջապէս ձայն հանեց աղջիկը, չորանա՛ն թուրքի մատները, որ չը խնայեցին քո ջիւան արևիդ, ա՛խ, դու ընչի՞ մօտ գնացիր ուստա Մուրատի գերեզմանին, որ քո կեանքդ էլ փչացնես, իմ գլխիս էլ սև ու մութ բերես, աչքերդ բաց արա, անունիդ մեռնե՛մ, մի խօսք ասա՛, ինձ էլ քեզ հետ տա՛ր, Սհո՛ ջան...

Աղէկտուր խօսքերը դուրս էին թռչում մանկատի օրիորդի շրթունքից, նորա յորդ արտասուքը, առու եղած՝ հոսում էր մեռնողի երեսովը։

Ո՛վ հրաշք, անշունչը շնչաւորուեց, ան կենդանը կենդանացաւ, երկու ամսուան պապանձուած Զաքարիայի լեզուի կապերը քակուեցին, հիւանդի աջ ձեռքն ինքն իրան բարձրացաւ և փարուեց Նողիկի պարանոցովը։

—Նո՛...ղի՛կ... ահա՛ Սահակի շրթունքներից կցկտուր դուրս եկած միակ խօսքը։

---

[1]) Խ ի զ ա ն նշանակում է ընտանիք՝ գլխաւորապէս իգական սեռի։

—Սհօ ջան, Սհօ՛, Շողիկը քեզ զուրբա՛ն, էդ ի՞նչ օրն ես ընկել գլուխ, ախար ինչի՞ մնա գնացիր Թուրքին, որ քեզ վրայ հրացան արձակեր. ախար ես ի՞նչ մեղք էլ գործել, որ Աստուած գլխիս տուեց, աչքս հանեց։

—Թուրքը՛... մեղաւո՛ր... չէ՛ր... Բղէ՛ն... չարչի... Բղէ՛ն...

—Ո՞ւր է Բղէ, Սհօ ջա՛ն, էստեղ Բղէ չը կայ, մենք երկուսս ենք, պատասխան տուեց Շողիկը Սահակի հատ ու կտոր խօսքերին։

—Բղէ՛ն... մարդասպա՛ն Բղէն... Թուրքերը... Բղէի մարդիկն էի՛ն...

—Ի՞նչ, Սհօ ջա՛ն, ասում ես՝ Բղէ՛ն էր դրկել Թուրքերին, ուրեմն ուրիշների ասածներն ուղի՞ղ է։

—Մոզնու վանքն էլ Բղէն կոխել տուեց՝ հօրդ և ինձ սպանել տալու համար, ես Թուրքի բերանից լսեցի, չը գիտեմ՝ ի՞նչ թշնամութիւն ունէր Բղէն մեր դէմ, դժուարութեամբ և ընդհատ բառերով պատմեց Սահակը։

—Ա՛խ, ինձ է յայտնի կօլոս Բղէի թշնամութեան պատճառը, գեսի՞նը մտնեմ ես, որ հօրս ու նշանածիս արենտերը դարձայ, Բղէն կամենում էր ինձ քո ձեռքիցդ խլել, շատ աշխատեց, շատ հնարք գործ դրեց, բայց ատամը չը կտրեց. լուսահոգի հայրս խայտառակեց, հեռացրեց, ես էլ երեսին թքեցի, երեսս շուռ տուի։

—Ուրեմն՝ Բղէն հասաւ իւր փափագին, տարա՛ւ կօլոս չարչին, հօրդ ու նշանածիդ գլուխը կերաւ՝ քեզ ձեռք բերելու համար՝ խոր յուզոց հանելով ասաց Սահակը։

—Ո՛չ, կօլոս չարչին իւր փափագին չը հասա՛ւ, Սհօ ջա՛ն, նա չը տարա՛ւ, այլ տարուե՛ց, կսկիծը մուռացած՝ հաստատապէս վճռեց Շողիկը, քո արևովն և հօրս գերեզմանովն եմ երդւում, որ Աղաջանի աղջիկը Բաղինենց հարսնացուն երբէք կին չի դառնալ իւր հօր ու նշանածի արիւնը թափողին, կամ ես ձեր վրէժը կառնեմ կօլոս չարչուց, և կամ, եթէ չը կարողացայ, գլուխս իմ երկու սիրեկաններիս սիրուն մահի կը տամ։

—Անմման Շողի՛կս... ես այժմ մեռնում եմ հանդիստ սրտով։

Մի բուռն զօրութիւն ոյժ տուեց հիւանդի թոյլ բազկին, Սահակը մտ քաշեց Շողիկի գլուխը և սեղմեց իւր կրծքին։

Վերջին ճիգն է եղել, որով լարուել են հոգեւարքի ջղերը, նո-

բա կոնները թուլացան, մահն իւր սառը թեւը տարածեց ըղձատոչոր երիտասարդի երեսին, նա փչեց իւր շունչը՝ գրկած իւր նշանածին։

—Ա՛խ... Ծուաց Շողիկը և լռեց ու պապանձուեց։

Ալմաստ խաթունը բոլորից յառաջ ներս վազեց և գտաւ նշանածներից մէկին անկենդան և միւսին մեռելի գրկումն ուշագնաց։ Երկու սիրահարների շրթունքները միմեանց պինդ սեղմուած էին։

ԼԳ.

ԹՕՌԱ ԿԱՐՄՐԱԽԷՏ ՁՈՒԿՆ Է ԸՆԿԵԼ.

—Բարի լո՛յս քեզ, ա՛յ Ջրատար Նուշան։

—Բարի՛ն հոգիդ, Ծուտու Նանի՛, համեցէք նստի՛ր։

—Է՛հ, ոչ նստելս է գալիս, ոչ կանգնելս, երկու շաբաթ է օրն երեք անգամ ձեր քուչի գլուխն եմ հանում թէ չէ՝ ծնկներս ծալուում են ու մնում, սիրտս փուլ է գալիս, ճարս կտրուում է՝ էլ յետ քաշ գալով յետ եմ գնում։

—Ի՞նչ կայ։

—Ի՞նչ պէտք է լինի, աչքերս դուրս են թափուում, երբ ձեր դուռն երևում է. ես կարծում եմ՝ թէ էս է՝ պէտք է գամ ու իմ կորած Հոգու աղպէր Աղաջանիս քաղցր զրոյցները լսեմ, բայց որ միաքս է ընկնում, թէ ներս պէտք է մտնիմ ու երկու էրուած, խորոմուած, անտէր, անզլուխ անբաղդների մրմռոցը լսեմ, գլուխս բոց ու կրակ է վառուում։

—Ի՞նչ պէտք է արած, երևի, իմ մեղքն էր, որ Աստուած երեսովս տուեց։

—Դու՝ հո՛ դու, փորձուած կին ես, ոնց որ լինի, կը համբերես, աչքս զո՛ւրս դայ իմ սևատսակ Շողիկի համար։

—Աստցիր ու պրծա՞ր, Ծուտու Նանի՛, էգ ճար կտրածի աղջիկը ոչ գիշերը քուն ունի՝ ոչ ցերեկը դադար, ոչ ուտում է, ոչ խմում է, բերանը նշխարք չի մտնում, հարիւր խօսքին մի պատասխան չի տալիս, հալ ու մաշ է եղել, էսպէս որ գնայ՝ վեց ամիս չի քաշիլ, սև պ մութը գլուխս կը բերի, ինքն էլ էն կորածների ճանապարհովը կերթայ։

—Բաս դու մայր չե՞ս, չե՞ս կարողանում յառաջն առնել։

—Իմ ձեռքիցն ի՞նչ կը գայ, ինքս էլ քշուածի պէս եմ։

—Ի՞նչ ես խօսում, քա՛, Նուշա՛ն, դու էլ հօ՛ երեխայ չե՞ս, մեռածի եաւրիցն ո՞վ է դնացել, որ մենք գնանք, ո՞րս ենք անմահ, բոլորիս ճանապարհն է, վաղ թէ ուշ՝ գնալու ենք, բայց քանի էս կոյր ու փուչ աշխարհումն ենք, պէտք է ապրենք, օր քաշենք. Աստծուն էլ դժուար կը թուի, որ իւր ստեղծած մարմինը մենք տանջում ենք, ո՞վ է հակառակ, ծանր է, անտանելի է, ասեղ չես կորցրել, սարի պէս տղամարդն է դլխիցդ շուռ եկել, թաղաւորա-վայել փեսացուն է երեխիցդ խլուել, մարդ որ հաւի ճուտ է կորցնում՝ սիրտն էրում է. մահը մերն է՝ մենք մահինը. քանի կարող ենք, պէտք է էնպէս անենք, որ բամբասանքի տակ չընկնենք։

—Ի՞նչ բամբասանք, մարդ որ իւր մեռածի համար դարդ անի, էդ բամբասանք է՞։

—Բա՛ս էս լա՞ւ է, որ ծակ բերանը Նողիկիդ վրայ խօսում է, թէ քիթ ու բերանը փաթաթել է ու որբևէրի կնոջ նման սև սուգ նստել. էդ մի՞թէ վայել է ազատ աղջկանը, էդ իւր ողորմած հոդի հօր անունին էլ անարգանք է, քեզ էլ անպատուութիւն է, իրան էլ թքանք է։

—Հօր ու նշանածի համար սուգ պահելն ամօթ է՞։

—Չէ՛, Նուշան ջան, էդպէս չի՛, հօր համար՝ աղջիկն է, պէտք է ցաւի, բայց նշանածի համար՝ չի սաղիլ. դիտես, մէ՛րս, հո՛ղն իմ դլխին, ի՞նչ ձայներ են փողոցէ փողոց քամու մէջ պտրտուում, ծակծկո՛տուին ասողների լեզուները, Նողիկիս պէս ամօթով աղջկայ համար էդ տեսակ բամբասանքնե՞ր.—չորանա՛յ հնարողի բերանը։

—Ի՞նչ են ասում, Տուտու Նանի՛։

—Էս երկ օրն ես տասը կնոջ բերան եմ պատռել ու ճանա-պարհ դրել, ասում են, որպէս թէ, լուսահոդի փեսացուդ դիշերը մինչև լոյս ձեր տանիցը չէր դուրս դալիս, իբրու թէ, իրանց կու-բանալու աչքովը տեսել են, որ երկու նշանածները էդ ու որձ աղու-նիկների նման ժամերով կտուց կտուցի են տուած եղել։

—Հիմիկուայ մարդկանց մէջ, Տուտու Նանի՛, խղճմտանքի կտոր չի մնացել, էն կորած Սհօն երկու տարի էր նշանած էր, դեռ երկու անգամ մեր ծածկի տակ չի եղել, էն էլ օրով ցերեկով, էն էլ՝ վա՛յ ինձ, վա՛յ իմ հոդուն, ես եմ փչացած հոդու եղբօրիցդ թաղուն

տուն բերել, մի երկու ձու իւղի մէջ ջարդել, առաջը դրել, էս մնաշէնի աղջիկն էդպէս ժամանակը գլուխ է առել կորել, մկան ծակերը մտել, ինչքան կանչել եմ, որ գայ, կողքին նստի, սատանի ձիու վրայ նստել է ու չի եկել. սաքի որ վերջն էս էր, շատ էլ լաւ է արել, որ չի եկել։

– Ընչի՞ էդպէս ես խօսում, Նուշա՛ն, Սէօն չէ՞ր, որ Թլիսմի թղթերը ձեռքից խլեց, լուսահոգի մարդիդ տուեց։

—Էն էլ մի բան էր, որ պատահել էր, թէ չէ խեղճն իր աներացուի հետ դեռ երկու խօսք չէր խօսեցել. դրա համար պէտք է բամբասէ՞ն։

—Ո՞ր մէկի բերանին ձեռք դնես, Նուշան ջա՛ն, ասում են՝ տեսնողներ եղել են, որ Սահակն ամէն առաւօտ Աշտարակ՝ իւր խանութը գնալուս՝ գիւղի ներքևի աւերակի մէջ Նողիկիդ հետ քըչը-փըչը է ունեցել, սաքի թէ՝ Նողիկը կուժն ուսին ջրի ճանապարհից միշտ ծռուել, մտել է աւերակը, ի հարկէ՝, գիտէր, որ նշանածն էն տեղ իրան սպասում է։

—Դու էլ հաւատում ե՞ս։

—Ես ի՞նչ գիտեմ, ա՛յ դրանց օրը խաւարի, մէկին չես հաւատում, միւս բանն են մէջ բերում, դեռ կէսը չեմ պատմել, ինչ որ խօսում են ու Նողիկիդ մեղքը քաղում. ի՞նչ էլ հարկաւոր է պատմելը, ես քարասիրտ ե՞մ, որ դաղուած և խաշուած մօր սիրտն ես առաւել կրակեմ ու բորբոքեմ. ախար ես իմ յարգելոր ու պարկեշտ Նողիկիցն էդպէս արարք ո՞նց հաւատամ, ինչ որ երեկի ժամի պատի տակին, արևկողմը նստոտած՝ գլխներիցը դուրս էին տալիս. էդ որ ճշմարիտ լինէր, մենք աւելի մօտիկ չե՞նք, մենք աւելի շուտ չէ՞նք նշմարի՞լ. անմեղ հրեշտակի պէս աղջկայ շաքոմը էդպէս կեղտ փաթաթեն իրանց հոգուն մեղք չի՞։

—Ախար ի՞նչ են ասում, Տուտու նանի՛։

—Սաքի ուղիղ էլ որ լինէր, ամօթ չէր. երեխէքն ի՞նչ կարող էին կարծել, որ իրանցից մէկն ու մէկի օրերը համարած են, ջահէլներ էին, կը մտածէին, թէ էս օր չէ՝ մի ամսից պէտք է խաչ ու աւետարանի տակին միանանք, կ'սկսէին ջահէլութիւններ անել։

—Ատուած իրանց աղջկերանցն էլ էն փորձանքին հանդիպեցնի, ինչ որ իմ երեխին պատահեց, ով որ իմ աղջկայ անունը կ'ուզենայ սևացնել սուտ սուտ զրպարտութիւններով։

—Դու շատ էլ մի՛ տրտնջալ, Շուշան ջա՛ն, ախար ընչի՞ էք պատճառ տալիս, որ սա ու նա լաւ վատ մտածեն, ախար դու ինձ ասա, էն ի՞նչ անելու էր, որ քո աղջիկդ արեց. նշանածի հոգի տալու իրիկունը դուրս պրծաւ, գնաց նրա վրայ ընկաւ, նրա ՀԱՆ-քովը փաթաթուեց, էս օր էլ ինքդ քո բերանովն ես խոստովանում, որ օտար տղայի համար դլուխը մահին է տալիս։

—Դէ պակաս նշանած չի կորցրել, որ չը սիրի, դու և ես էլ, որ նրա տեղ լինէինք՝ կ'անէինք, սիրում էր, հօ՛ սուտ չէր։

—Ո՞վ է ասում, որ չը սիրէր, իւր պարտքն էր, որ սիրէր էլ, խոնարհ էր էլ, բայց քեզ լաւ յայտնի է, որ պատուած, տարինե-րով իրար հետ ապրած մարդ ու կինն իրար մահից յետոյ նորից պատկուում են. ընչի՞ համար դու չես մտածում երեխայի սրտի խոցն առողջացնել, ընչի՞ չես աշխատում մի լաւ տղայ գտնել, ձեռաց նշա-նել, ձեռաց պատկել, որ մինուճարիդ վրայից էլ—ալամի (հոմայնա) լեզուն կորուի, ինքն էլ օր տեսնի ու մխիթարուի։

—Ի՞նչ ես խօսում, Տուտու նանի՛, դեռ խեղճ որբիս հոր երեք քառասունքը նոր է լրացել, դեռ Սհոյի գերեզմանի վրայ դրած մուխը նոր է հանգստացել [1]), դու կամենում ես, որ ես աղջիկ նշանելու և մարդի տալու հոգս քաշե՞մ, կորցրածներիս ամայի դաշտումն էլ դա՞լ։

—Ի՞նչ արած, քո երեխին դարդամահ չ'անելու համար, քո մի հատ զաւակիդ վրայից աշխարհքի ասակուսէն վերացնելու համար՝ պէտք է ատամներդ հուպ տաս, սիրտդ պնդացնես ու պատկենական սովորութիւնի գլխովը թռչես։

—Առաջինը՝ որ ես էդ բանը չեմ անիլ, երկրորդը՝ որ էս բոպէիս ո՞ւր է էնպէս տղայ, որ արժանաւորութիւն ունենայ ու գլխապա-տատ վազի իմ դուռը կարի, իմ աղջկանն առնի. ոչովի մեղադրել չեմ կարող. ո՞ւմ աղջկանը պէտք է ուզեն. աշխարհքին լաւութիւն անող Աղաջանը թաղաւորի պէս իւր ընտանիքի գլխին կանգնած է՞, որ ամեն մարդ իւր համար փառք ու պատիւ համարի նրա հետ բարեկամանալ։ Տնաքանդի մարդն ունեցած չ'ունեցածն անշահ, անհաշիւ սրա նրա վրայ ցրուել է, մի մատը թուղթ ոչ ասել է,

---

[1]) Մեռելը թաղած երեկոյին գերեզմանի վրայ ծուխ են դնում։

ոչ թողել է, որ գիտենանք, թէ ո՞ւմ մօտ ի՞նչ կայ. քանի ասում էի՝ մի՛ անիլ, վրէս վախտ ծիծաղում, վախտ բարկանում էր, հէնց գիտէր, թէ ինքը միշտ կենդանի կը մնայ, ամենքն իրանից կը քաշուին ու ժամանակին տարածը կը բերեն, չեռ կը տան։

—Լուսահոգին, Նուշան ջա՛ն, վատութիւն հօ՛ չի՞ արել. մի՞թէ դու կարծում ես, որ ձեր փողերը կը կորչին, կամ մարդ կը լինի, որ քո դրախտական մարդի լուութիւնը կը մոռանայ։

—Ընչի՞, չը մոռացա՞ւ Սալբու տղայ կօլոս, չարչի Բղդէն, որ մեր փողովը մարդ դառաւ ու երբ կողքերն իւղակալեց, խեղճիս երեսին դուռը թրիկացրեց, հեռացաւ՝ էդ հերիք չէր՝ էնքան իւր չափսը կորցրեց, որ ուզեցաւ աղջկանն իւր նշանածի ձեռքից խլել. գլխներս տարաւ, մարդ ղրկելով. դու էլ հօ՛ ջուհլակի մքուքի պէս գնում գալիս էիր. և երբ որ ծամոնը ցեխին ընկաւ, էդ քո անհոգի, անհաւատ, անաստուած, անխղճմտանք կօլոս Բղդէն թուրքերին կաշառեց, աներոջ ու վեսայի արիւնի մէջ մտաը թաթախեց։

—Ցեռոյ դու աչքովդ տեսա՞ր, որ խօջա Բաղդասարը մարդիդ ու վեսիդ արենալարը դառաւ, հոգուդ մեղք չի՞, որ ամեն քամու բերածի հաւատում ես։

—Ես ի՞նչ դիտեմ, ասում են՝ մեր մահապարտ ինքը Բղդէն է, որ կայ. եթէ ես վկաներ կ'ունենայի, ես գիտեմ, թէ ո՞նց չոք է չոք դիւանի դուռը կերթայի և իմ արիւնը մոնողիցը վրէժս կը լուծէի։

—Տեսնո՞ւմ ես, Նուշա՛ն, դու խօջա Բաղդասարի վրայ բարկացած ես, բայց նա էնքան բարի է, որ ուզում քո տան վրայից սևն ու սուգը վերցնել. քեզ էլ, ինձ էլ, աշխարհքին էլ յայտնի է, որ խօջա Բաղդասարն էսօր մեր երկրի առաջին մարդն է, և եթէ մոքումը դնի, գլխաւոր չինովնիկի ու աղայի աղջիկը կ'առնի, շատերն իրանք են նորա ոտները լիզում, բայց նա ամենքի խնդիրքն երեսի վրայ է թողել և ուզում է քո քանդուած տուն ու տեղը նորից շէնացնել, նա քո աղջիկն ուզում է, որ քո մի հատ սև փողը ուրիշի վերայ չը կորչի։

—Դեռ մինչև հիմի էլ քո կօլոս չարչի Բղդէն մեզանից ձեռք չի քաշում։

—Ա՛յ Նուշան, ինչպէս սեսնում եմ, Աստուած քո խելքէ բո-

լորովին առել է, բաղդն իր ոտովը քո դուռն է եկել, դու քացով տալիս ես. դու ո՞նց չես խօջա Բաղդասարին հաւանում։

—Ամօթ է, Տուտո՛ւ, դու ինքդ լաւ գիտես, որ Պօղոս աղենց ամալայ Սալբու տղէն ուրիշների անները քանդելով՝ խօջա չի դառաւ, մէկէլ՝ որ ես իմ տան գլխի ու փեսացուիս արիւնի տակը մնողին սև մահը կը տամ, որ կոկորդին հուպ տայ, խեղդի, վերջացնի և ոչ թէ աղջիկ՝ որ լանջումն ընկնի։

—Է՛լի ասում եմ, Նուշա՛ն, խեղճ արի քո աղջկանը, մի՛ թողներ որ դարդոտուի, գլխին մի փորձանք բերի, կամ թէ տանը մնայ, անունը կէս փող շինի, դու ինքդ էլ Բաղդասարից մեծ մարդի կին չես, ողորմած հոգի Աղաջանը չէ՞ր, որ խամ կտաւի կապոցի տրոբելուցը՝ ուսի մորթին ամբոլի եզան վզի կաշուց հասուցել էր։

—Դո՛ւրս իմ տանից, ջադուբազ (ՀԿՈՒ) Տուտո՛ւ, մէկ էլ չը համարձակուի՛ս իմ դռնովն անցկենալ, թէ չէ ոտդ կը կոտրեմ, բերանիդ չափը ճանաչի՛ր, իմ տղամարդը ոչ ուրացել է իւր թիկունքի կապոցը և ոչ ուրիշի հացին կոյր է մտիկ տուել, նորա աշխատանքն իր ճակատի քրտինքն էր, նորա հացի մէջ ուրիշի արիւնը չի խառն եղել, էգիպտի մարդը քո գովածն է, որի մի քանի սև փողն աչքերդ շլացրել են, հոգիդ սևելիս, ուզում ես իմ աղջկանն անբաղդացնես, գնա՛, հեռացիր, ասում եմ, յետինն ու առաջինը լինի՛, միւս անգամ իմ աղջկայ անունը բերան չը բերես, թէ չէ ինքը որ լսի, սիրտը վիրաւորուած է, էնպէս խօսքեր կասի քեզ, որ կը մնաս գլխիդ վերայ պտրտուելով։

—Չէ՛, Նուշա՛ն, չէ, քո Նողիկը խելօք աղջիկ է, կանչիր, թող գայ, եթէ ես մի քանի խօսքով նրան կամքի չը բերի, եթէ նա օրն էսօր Սալբու տղայի նշանը չը վերկալաւ, դու երեսիս թքիր։

Կանչելու հարկաւորութիւն չ՝եղաւ, Նողիկը ներսի սենեակումն, ինչպէս երևեցաւ, լսել էր մօր և Տուտուի խօսակցութիւնը, նա դուռը բաց արեց և դուրս եկաւ։

Մայրն աղջկանը տեսնելուն պէս՝ զարմացքով և սարսափով յետ յետ գնաց՝ ձեռքերն օդումը տարածելով։

—Հասկանում եմ, մայրի՛կ, դու իրաւունք ունիս զարմանալու և աղջկանդ վրայ բարկանալու, ասաց Նողիկը ծանրախոհ դէմքով, հօրս ու նշանածիս կորցնելու օրից դու առաջին անգամն ես ինձ

տեսնում սանրուած գլխով, հիւսած ծամերով և զարդարուած Բաղդադի Թաշկինակով։ Ես լսեցի քո և Տուտու Նանի զրոյցը, երկար ու բարակ մտածեցի, չափ ու ձև արի և դատայ, որ Տուտու Նանի տատներն ուղիղ են, մեռնողի եռևից մեռնելն յիմարութիւն է, ինձ վայել չի ջահել օրս սևացնել ու քո տխրութիւնի վրայ աւելի տխրութիւն բերել. արի մայրի՛կ, մոռանանք անցկացած բաները, արիւնն արնով չեն լուանալ, համաձայնի՛ր Տուտու Նանի խօսքին, վերցրու Սալբու տղի նշանը։

—Զալ օձը կծի լեզուդ, քրքրուելու պտո՛ւղ, էդ քո խօսքե՞րն են, դու չէի՞ր ասում, թէ հաստատ գիտես, որ հօրդ ու նշանածիդ սպանել տուողը Բղդէն է, ինքդ չէի՞ր, որ ասում էիր, թէ մինչև Բղդէի մի բուռն արիւնը չը խմես, քո ծարաւդ չի կտրուիլ. հիմի ո՞ր սատանէն քեզ իր թօսի մէջը խճճեց, ի՞նչ անցկացաւ, որ հօրդ ոսկրները դեռ դերեզմանումը չը հանգստացած՝ դու ուզում ես նորա մահուան պատճառի վիզն ընկնել, գետինը պատռուի՛, քեզ դեվեր (դեպի վայր) տանի։

—Էրուած սիրտը շատ բան կասի, մայրի՛կ, աղաչում եմ, մի բարկանալ ինձ վրայ, լսիր մի անգամ քո աղջկանը և թող Սալբու տղէն նշան բերի։

—Ապրի՛ իմ խելօք աղջիկը, բեր էդ քո նաշխուն աչքերդ պաչեմ, որ օրինաւոր ես խօսում, ընտուր են ասում՝ հիմիկուայ ջահէլներն իրանց մեծերից աւելի խելք ու հասկացողութիւն ունին, Նողիկի գլուխն իւր կրծքի մէջ սեղմելով դարձաւ Տուտուն դէպի Աղաջանի այրին։

—Լսիր ինձ, Նուշան, գոգիդ քարերը թափիր (դամոզո-էջ), երեխի խօսքն աւետարանի կողքի գրուածիցն է, սրա սիրտը մի՛ կտրիլ, սա անդին ջաւահիր (գոհար) ու մարգարիտ է, սրա մեղքի տակը մի՛ մնալ, սրա սիրտը վկայում է, որ Բաղդասար աղայի նման արար աշխարհքումը փեսացու չես ճարիլ, աչքի լուսի նման կը պահի քո աղջկանը։

—Տուտու Նանի հոգին էլ վկայում է, որ Սալբու տղէն լաւ փեսացու է, մայրի՛կ, թէ չէ պատաւ կին է, մի ոտը գերեզմանումն է, ընչի՞ պէտք է իմ մեղքն ընկնի, էնպէս չի՞ Տուտու Նանի, մէջ մտաւ Նողիկը։

—Ը՛... ը՛... ը՛... այսինքն... հա՛... Բաղդասար աղէն... դէ՛ մարդ ենք... ո՞վ գիտէ, դէ՛... բայց լաւ տղայ է... հոգիս վկա՛յ, կմիմաց պատաւ ը։

—Դէ տեսա՞ր, մայրի՛կ, որ Տուտու նանն իւր հոգւովն երդում է ուտում. եթէ էդպէս է, ինդրում եմ, դու համաձայնես, ես էլ, թէպէտ մինչև օրս ատում էի Բղդէին... ոչ, ոչ... Բաղդասարին, բայց հիմի Տուտու նանի խօսքովը սիրեցի..., հը՛, մայրի՛կ, ի՞նչ ես լռել, աղաչում եմ, խօսք տուր։

Այս խօսքերով Եողիկը փարեց մօր պարանոցովը։

Տուտուն չը նկատեց, որ մօր ու աղջկայ մէջ մի քչփչուն տեղի ունեցաւ։

—Ի՞նչ արած, Տուտու նանի՛, կերուի, երեխես ճակատի գիրն էսպէս էր, գնա Սալբուն ասա՝, թող նշան բերեն, յայտնեց վերջապէս Եուշանն իւր հաճութիւնը։

—Բայց մի պայմանաւ, Տուտու նանի՛, աւելացրեց Եողիկը, որ հարսանիքը շատ չուշացնի, նշանը ծածուկ լինի, իսկ հարսանիքը փառաւոր, և մինչև պսակի օրը մեր դուռը չը բանայ։

—Աչքի՛ս ու գլխիս վրայ, ազիզ ջա՛ն, հէնց էս իրիկուն, եթէ կ՚ուզես, նշանդ կը բերենք, մի շաբաթից յետոյ էլ գլուխդ կը կապենք, պսակ կը տանենք։

—Կարմրախտ ձուկը թօռս ընկաւ, մտածում էր Տուտուն՝ շտապելով դէպի Բղդէի պալատը։

Այս գործողութիւնը կատարուեց Բղդէի Թիֆլիսից վերադարձի առաջին և եթ շաբաթը։

Բղդէի առաջին գործն եղել էր Տուտուի ձեռքով այս վերջին փորձն էս անել.—եթէ չը յաջողուի, բռնութեամբ դուրս կը քաշեմ տանից, վճռեց Բղդէն, այժմ էլ Աղաջան չը կայ, որից քաշուիմ, Բատինենց Սհօ չը կայ, որ ճանապարհիս քար ձգի (արգելք լինել)։

Ոչինչ միջոցներ պէտք չ՚եղաւ, մի կերպասեայ կարմիր գլխի ծածկոց և մի մատանի նոյն երեկոյին Տուտուի ձեռքով նշան ուղարկուեց Բղդէի կողմից Աղաջանի տունը։

ԼԴ.

ԽԱՉԵՂԲԱՅՐ

Շատալիր կշեռքի մի թաթը ոսկի լցրու, միւսումն ինձ նստացրու, քաշի՛ր ու ինձ տուր, լաւութիւնս ի՞նչպէս պէտք է վճարես, ձեռաց ինամախօս գնալս ու հարսանիքիդ փլաւի հոտը աշխարհքովս վեր անելը մին եղաւ։

—Հա՞, վերի ոտումը պատրաստ է՞ր, ատնութեամբ պատասխանեց Բղդէն Տուտուին, երբ վերջինս հեւալով ներս ընկաւ, աւոտիքը տուեց, չէ՞ դու երբ որ Փամբակաձորից Թլխամի թղթերը բերիր ու Ջհուտ Աղաջանի շեմքի տակ թաղելու ժամանակ Բատինենց Սհօյի ձեռքը ձգեցիր, յոյսդ կարեցիր՝ թէ այսուհետև Շողիկն ինձ համար պաս դարձաւ։

—Բաս ինձ ո՞նց գիտես, իմ լեզուն հարիւր թլխամ ածի, պարծեցաւ պառաւը։

—Ուրեմն նշանածի անունով թուլանալ չէս գալը, որբևէրի ինոջ պէս քիթ ու մռութը փաթաթելն աչքակապութիւն է՞ր. ես սպասում էի, որ քեզ քարհալած բոլիկ կը փախցնեն. խեղճ Սհօ՛, նա էլ հաւատացած է եղել, թէ Ջհուտ Աղաջանի զարմը՝ զժուած ու ցնդած՝ իր համար գլուխը մահի պէտք է տար. ուղիղ է ասած՝ թէ կին արմատին հաւատացող ազամարդն իր ձեռքով իր որոդայթը կը պատրաստի, չէ՛, Շողիկ ջա՛ն, չէ՛, ինչքան էլ քեզ սիրեմ, ինձ քեզանից առելի կը հաւատամ, ինձ արածացնել չես կարող, ես Բատինի թոռը չեմ, ինձ խօջա Բաղդասար կասեն։

—Վո՞յ, ա՛յ աղայ, Բաղդասար ջա՛ն, ընդուր են ասում՝ թէ քեզ էլ չը պէտք է հաւատալ, դեռ խեղճ աղջիկը ձեռքդ չի ընկել, վրան իրաւունք ես բանացնում. դու հէնց կարծում ես, թէ ձեռաց, խօսքը բերանից թռաւ թէ չէ՝ մէր ու աղջիկ ոտքերս փաթաթուեցի՞ն, չէ սիրելիս, եօթը գալի աւեսարան եմ կարդացել մօրն առանձին, աղջկանն առանձին. շատախօս օձ աւսոնեղի (թովիչ) նման էնքան տուտ ու ուղիղ փչել եմ, բերանս փրփրակալել է. դեռ մայրը ողորմութիւն էր, աղջկանը մինչև ճանապարհի բերի, հոդիս բերանս եկաւ։

—Ի՞նչ էր դուրս տալիս, ինձ չէ՞ր հաւանում։

—Ա՛յ քեզ մատաղ, քեզ ո՞վ կարող է փուղ դնել (պակասութիւն դնել), քեզ Աստուած է հաւանել, Նողիկն էն էր ասում, թէ ինքն ուխտ է արել՝ աշխարհ չը մտնել, սև պէտք է հագնիմ, ասում էր, վարպետ (կոյս) պէտք է դառնամ, հօրիցս մնացածը խունկ ու մոմի պէտք է տամ ու մինչև մահս հօրս ու նշանածիս գերեզմանների վերայ ճրագլոյս վառեմ իրիկուն առաւօտ։

—Եւ յետոյ էդպէս շո՞ւտ մոռացաւ խոստումը։

—Ա՛յ ողայ, ախար դու ո՞ւմ ջանս ուզենաս, որ սարսափ չը ձգես, ասացի՝ որ մեր խօջա Բաղդասարն էնպէս կ'անի, որ մէր ու աղջիկ մի կոր հացի կարօտ կը մնաք, ասացի՝ որ դու իրրև թէ, երդում կրակ ես անում, թէ էն հնարքը դործ կը դնես, որ Աղաջանի պարտքատէրերից և ոչ մէկը մի սև փող չի մտնար գալ (խոսքանել), յետոյ իրանք չոքէ չոք սոխպուած կը լինին դալ, ոտքերդ փախթաթուիլ, բայց դու քացով կը տաս, փողոց կը շպրտես։

—Մարդարէացել ես, վերջն էդպէս էլ կը լինի։

—Է՛հ, ես որ իմ պարտքը կատարեցի, դործարարի (ոստիկան) նման երկուսի ոտներն էլ իմ փառիս (ոտքս) մէջ խնձեցի, ապրանքը քոնը չլինեցի, դու էլ շուտ արա՛, ձիու խամ քուռակի պէս բերանը սանձ դիր, թամբը մէջքին կապիր, վրէն նստիր, յետոյ երբ որ խամահանուկ եղաւ (ձիաբանեց), ինչպէս քո սիրտը կը ցանկանայ, էնպէս էլ պահիր, ապրանքը քոնը չի՞։

—Ուրեմն վերջին խօսքն ի՞նչ էր։

—Երբ որ մօրն իմ կողմը քաշեցի, աղջիկը շուարեց, մնաց, մի քիչ փնթփնթաց, մրթմրթաց, բայց վերջը ուսերը վեր քաշեց, գլուխը կախեց ու ոտի եկաւ (հպատակեց)։ Տուտու նանի՛, ասեց, Ֆուշտա-Ֆալաքը [1]) գար, ինձ չէր կարող թեքել, բայց քո լեզուն աւելի սուր ու խօսքդ աւելի կարուկ էր, գնա, ինչ որ քո կամքդ կը հաճի, պատասխան տար, միայն խնդիր, որ հարսանիքն շպասեցնի, ինձ աշխարհքի լեզուի տակիցն ազատի։

—Ափսո՛ս իմ մեծ ու պատիկ հնեազներ։ Հիմի նրանք եթէ դործի մէջ լինէին, Մեծ հնեազը խաչեղբայրս կը դառնար, Փոքր

[1]) Ֆուշտա—Ֆալաք նոյնն է ինչ Մենֆեատֆելը։

կնեազը փես-եղբայրս, էն ժամանակը աշխարհքը նախանձու կը տրաքէր։

Այս ցաւն էր որոճում բաւական միջոց Բղդէն Տուտուին ճանապարհ դնելուց յետոյ։

— Ոչի՛նչ, խասը չը գտնողը խամով էլ կը բաւականանայ, կնեազները չեղան, թող Նրանց միրզէն (գրոֆէր) լինի խաչեղբայրս, մխիթարեց ինքն իրան Բղդէն և ձին հեծաւ, քշեց դէպի Զէյվա գիւղը, ուր էր այն ժամանակ գաւառապետի բնակարանը։

Գաւառական գրագիրը սիրով յանձն առաւ Բղդէի խաչեղբայրութիւնը։

ԼԵ.

ՀԱՐՍԱՆԻՔ

Թնդաց Կարբու գաւառը, թէ Բղդէն շուտով պսակուում է ջհուա Աղաջանի աղջկայ վրայ, լողը զարմացքից սառած մնում էր ու իր ականջներին չէր հաւատում. էլ հացակեր չը մնաց, որ խեղճ Նողիկի վերայ բերան չը բանար, ոչ մէկը լաւ չը խօսեց. առաջինից մինչև յետինը դատեցին ու դատապարտեցին հօր ու նշանածի յիշատակը ոտնակոխ անող ապերախտ աղջկանը, բոլորեքեան եկան այն համոզմանը, թէ աղջիկ կոչուածդ, արդարև, վաղի առածի պէս՝ անկարիլ ձմերուկ է, մինչև հարիւր անգամ չը փորձես, չես հասկանալ յատկութիւնը, ամենեքեան կարծեցին, թէ իրանք սխալած են եղել Աղաջանի աղջկայ մասին և թէ մի այդպիսի դիւրահաւան աղջիկ մի օր էլ իւր ամուսնուն կը դաւաճանի, շատերը ուրախ եղան, որ կճուճը գլորուել է ու խաւիը գտել, Բղդէի նման մարդին այդպիսի կին լաւ հատուցումն է։ Նոյն ինքն տէր-Յակովբը, որ Աղաջանի մահից յետոյ մի տեսակ խնամատարի բարոյական պարտաւորութիւն էր յանձն առել իւր վերայ՝ Աղաջանի այրուն ու որբին իւր հովանաւորութեան ներքոյ ունելու՝ նա էլ շատ խոժոռուեց Նողիկի անմիտ ընտրութեան մասին։ Այս ամենը լսում էր Աղաջանի այրին և արտաքուստ լռում, ոչինչ չէր պատասխանում, իսկ ներքուստ, իւր տանը ուզում էր քրքրել, քձձել իւր «աներես ու լպտուած» աղջկանը, որ մի վհուկ Տուտուի խօսքով իւր տան անունը լակ ձու չինեց, պատովը տուեց։

Նողիկին դատափետում էին առաւելապէս իւր ընկերակից աղջիկները, թքում և յանդիմանում էին, թէ նա ոչ նշանաձի համար պէտք է այնպէս տխրէր և ոչ այս չափ շուտ նրան մոռանար և առաջին անգամն իրանց դուռը բաղխողի գիրկն ընկնէր։

Ընկերներին Նողիկը ոչինչ չէր պատասխանում, իսկ մօրը միշտ կրկնում էր, համբերի՛ր, մայրի՛կ, չէ՞ որ ես Տուտուին խօսք տալուս նախապէս քո ականջումը փսփսացի։

Ինձ էլ քեզ հետ յիմարացրիր, ես էլ մի անխելք կին՝ հաւատացի, թէ քո ձեռքիցդ կը գայ կօլոտ Բղդէից հօրդ արիւնը պահանջել. տակից դուրս եկաւ, որ դու մարդի գնալու համար զլուխ ես եղել պատռելիս։

—Ուրբաթ, շաբաթ, կիւրակէ, մայրի՛կ, դու քո բարի աչքովդ կը տեսնես, թէ ես ի՞նչպէս կը ծխեցնեմ դառը մուխը չարչի Բղդէի քթումը։

Եւ Նողիկը մօրը շատ չը վիրաւորելու համար, զլուխ էր առնում, հեռանում։

Վերջապէս, ուրբաթ շաբաթ, կիւրակէն հեռու չէր, շատ վրայ հասաւ։

Բղդէի նորաշէն պալատն առաջին անգամն է ծառայում իւր նշանակութեանը, ասեղ ձգես, գետինը չի ընկնիլ. հրաւիրուածները միայն Կարբու հասարակութիւնը չէ, Քասաղ գետի երկայնութեամբն եղած բոլոր գիւղերի նշանաւոր քէթխուդէքն ու տանուտէրներն այն տեղ են։

Առաւօտեան ութ կամ ինն ժամն է, հարսնաւորները շրջապատած հարսն ու փեսային՝ պսակ են գնում։ Եկեղեցին լիքն է, հանդիսականներով, կարելի է ասել, որ Կարբու եկեղեցին իւր կրկին չէն արած օրը կարդալուց ցայսօր այսքան ժամաւորներ չի տեսել, տէր-Յակովբը, շուրջառաւորուած է և սեղանի առջևը կատարում է պսակի խորհուրդը. նորափեսայի դէմքին յաղթող զօրապետի ինքնասիրութիւն է նկատուում, նա ուրախ է, բայց խոր հոգերանն այդ պայծառ դէմքի ներքոյ մի վրիժառութեան տրամադրութիւն կարող էր նկատել։

Ահա հասաւ բուն պսակի ահաւոր խորհրդի ժամը. տէր Յակովբը հրամայեց հարսն ու փեսային երեսները միմեանց դարձնել. նա

ուրիշ քահանաների նման չը բաւականացաւ Մաշտոցի բառացի ծիսակատարութիւնով, նա փակեց դիրքը և մի քանի պարզ խօսքերով հասկացրեց նորընծաներին իրանց փոխադարձ պարտականութիւնները. ապա խօսքն ուղղելով դէպի նորափեսան՝ հարցրեց Մաշտոցի խօսքերով.—որդեա՛կ իմ, մինչև իմահ տէր ես։

—Տէր եմ, բարձրաձայն խրոխտանօք շեշտեց Բղդէն։

—Իսկ դու՝ որդեա՛կ իմ, մինչև իմահ հնազանդ ես, երկրորդ հարցը տուեց տէրտէրը նորահարսին։

—Ո՛չ մի ժամանակ, երեսի թանձր քօղը յետ ձգելով՝ դուրեց նողիկը։

Ամբողջ հանդիսականները պարզ լսեցին ականջ ծակող, սարսափելի, արտասովոր և տարօրինակ խօսքը։

—Ի՞նչ, աչքերն ոլորելով՝ բարկութեամբ հարցրեց քահանան, ի՞նչ ասացիր։

—Ասացի՛ ու էլի ասո՛ւմ եմ, տէր հա՛յր, դո՛ւք էլ՝ պատուելի հարսանիքաւորնե՛ր, ինձ ներեցէք, որ ամենքիդ նեղութիւն տուի և էստեղ հաւաքուելու պատճառ եղայ, ձեր բոլորի առաջին ես՝ մի որբ ու անտէր աղջիկ՝ համարձակուում եմ թքել եմ հօր ու նշանածի արենտիրոջ երեսին, ես կատարում եմ իմ նշանածին ու հօրս գերեզմանին տուած խօսքս, յայտնում եմ ի լուր աշխարհի, որ հաստատ գիտեմ և հաւատացած եմ, որ իմ հօր արդար հացին կոյր աչքով նայող երախտամոռը երբ որ տեսաւ, թէ քանի հայրս ու նշանածս կենդանի են, ինքը չը պէտք է կարողանայ ինձ իւր ճանդը ձգել, մտքումը դրեց դիւական հնարքներով իւր ցանկութիւնը գլուխ բերել. իմացած կացէ՛ք ամենքդ, որ Մողնու տէրը Գէորգի վանքը կոխել, կողոպտել տուողը չարչի Բղդէն էր. սա ինքը առաջուց վարձած է ունեցել Բ. գիւղացի բէգզադէքանցը, նրանց ձեռքովն է համոզել թուրքերին և վանքի վրայ բերել. սա շատ լաւ գիտէր, որ թէկուզ աշխարհքի նեղ ժամանակն էր թէկուզ ամեն մարդ իւր գլուխն ու ընտանիքը պահելու հոգսումն էր, թէկուզ ամեն դիւղ ինքն իրան դժուար էր պաշտպանում, բայց եթէ մէկը համարձակուէր մեր վանքերին ու եկեղեցիներին դիպչել, ամեն հայ կը մոռանար տուն, տեղ, որդի, ընտանիք, կը թողէր ունեցած չունեցածը թշնամու ձեռքին ու ինքը կը վազէր իւր Աստծու տունը

պաշտպանելու, գիտէր էս անխղճմտանքը, որ եթէ մի փոքրիկ երեխայ էլ գար վանահօր կողմից և յայտնէր, թէ վանքը կործեցին, բոլոր գիւղերը գլխապատառ կը վազէին հայր սուրբի հրամանը կատարելու. շատ լաւ յայտնի էր էս դաժան հոգուն, որ Կարբուց օգնութիւն գնացողների մէջ հայրս ու նշանածս էլ անպատճառ կը լինէին, և եթէ կռուիցն էլ ազատ պրծնէին, իւր վարձած թուրքերը մի տեղ հնարք կը գտնէին սրա օձ խորհուրդը կատարելու։

Ոչ ոք չընդհատեց կրակ կտրած օրիորդին, խորին և մեռեալ լռութիւնը թագաւորել էր եկեղեցումը, ճանճի բզզոցը լսւում էր. ինքը Բղդէն սեւացել, ածուխ էր կտրուել, շրթունքները շարունակ կրծոտում էր, նկատելի էր, որ աշխատում է որ և է պատասխան տալ, բայց կոկորդը ցամաքել, լեզուն բերանումը չորացել էր, չէր շարժում։

—Ես դեռ չեմ վերջացրել, սառնութեամբ ատիճանաբար բարձրացրեց իւր ձայնն աղջիկը. դո՛ւ, կոլոտ Բղդէ՛, փափագիդ մի մասին հասար, ճանապարհդ լայնացաւ, մէջդ ճխացիր, ուրախացար, թէ այս է՝ որ տիրեցիր անտէր աղջկանը, հիմի՝ որ կը խեղդես ու քո կինը կը շինես։ Բայց չէ՛, սխալուա՛ծ ես, քո փորած հորի մէջ ինքդ երկու ոտքո՛վ ես ընկել, Աղաջանի աղջիկը հալալ կաթնակեր է, նա իւր հօր հարազատ զաւակն է, ես ոչ մի ժամանակ քո պէս խեղճերի արիւնը ծծողին կին չեմ դառնալ, ես կոյս եմ և կոյս Հոռոմսիմի (Հռիփսիմէ) նման քեզ պէս խոզին քաշ պէտք է տամ գետնի երեսին, որ հօրս ու նշանածիս գլուխը կերար, գլխակե՛ր, արենխո՛ւմ։

—Ը՛ն... չո՞վ... կը... հա՛ս... տա՛... տե՛ս, կակազեց Բղդէն, բայց Շողիկը ժամանակ չը տուեց շարունակելու. մօտ երկու ամիս է, որ իմ նշանածը սառը գերեզմանումն է, գոչում էր նա, բայց նրա հոգին դեռ չի հանգստացել, դեռ գերեզմանի վերայ անտես, աներևոյթ պտտուում է, ես նրան խօսք եմ տուել մինչև իմ խօսքս չը կատարեմ, Բասիլենց Սահակի հոգին երկինք գնացողը չի. նրա աչքը ճանապարհի է, որ ես քեզանից նրա արիւնի վրէժը պէտք է առնեմ, և կ՝առնեմ. երկու ամիս է, հնարք չի մնացել, որ չը մտածեմ, ուզում եմ էնպէս վրէժ հանել, որ դեռ ոչով լսած ու տեսած չը լինի, կամեցայ խանչալը յատաջ քո սիրտը ցցել, չիտոյ իմ, բայց

մոածեցի, որ քո կեղտոտ արիւնն արժան չէ խառնուել եմ մաքուր արիւնին, ես աւելի լաւ համարեցի այնպէս բան անել, որ դու կենդանի մնաս, բայց ուրախ օր չը տեսնես, խղճմտանքիդ առաջին սեւերես մնաս, խղճմտանքդ ճանգերով սատանայ դառնայ ու սիրտդ ճանգռտորի. ես գտայ այդ բանի հնարքը. շատ չի քաշիլ՝ կուրանալու աչքովդ կը տեսնես...

—Բաւակա՛ն է, աղջի՛կս, ուզում էր միջամտել տէր Յակոբը, բայց Նողիկը ժամանակ չը տուեց։

—Ահա՛, կոլոտ Բղդէ՛, ես իմ ասելիքներս ասացի, առ՛, աչքդ կոխի՛ր քո ուղարկած հարստութիւնի քօղը, որը թօռ չինեցիր, ձկան նման ինձ մէջը փաթաթեցիր. բայց ես էն ձկներից եմ, որ թօռդ գլխիդ պատռում ու միջիցը դուրս եմ փախչում։

—Նողիկը կորզեց իւր գլխի զարդերը, իւր բերանը փակող շղարշը և Բղդէին շպրտել. հետն էլ թքեց երեք անգամ նրա երեսին, երկու ամուր ապտակ և իջեցնելով՝ հաստատ քայլերով դուրս գնաց եկեղեցուց։

—Բռնել տուէ՛ք, ո՞ւր էք թողնում փախչի, դարձաւ լացակրկնած Բղդէն դէպի իւր խաչեղբայր գաւառական դրագիրը, այդպէ՞ս պէտք է պաշտպանես բարեկամիդ և քո խաչեղբայրութեան պատիւը։

—Բռնեցէ՛ք, տանուտէ՛ր, յանդուգն աղջկանը, դրա արած անպատուութիւնն ինձ է վերաբերում, ես եմ այսօր այս հարսանիքի գլուխը, հրամայեց դրագիր աղէն սրտամնայ, վիրաւորուած և անզուսպ բարկութեամբ համբերեցէ՛ք, տեսէ՛ք, թէ ես դրան ի՞նչ տեղն եմ ձգում, ոտները քօթուկի [1]) մէջ փաթաթեմ, որ խելքը գլուխը հաւաքի, ինքը գայ իւր նշանածի ոտքերն ընկնի։

—Տանուտէրին կարգադրութիւն անելու. կարիք չեղաւ. ժամաւորները միանգամից դուրս վազեցին և ձայն ձայնի տուած՝ գոչում էին. բռնեցէ՛է՛է՛ք, բռնեցէ՛է՛է՛ք։

Նորափեսայ Բղդէն, երևի ոգևորուած իւր պաշտպան խաչեղբօր խօսքերից՝ գազան էր կտրուել, բազմութիւնը ճեղքելով՝ ամե-

---

[1]) Քօթուկ ծառի հաստ կոճղ է, որի մէջ փակում էին կալանաւորների ոտքերը։

նից յառաջ վազեց նա և հասուէհաս էր Նողիկի հագուստի քղանցը ձեռքը ձգելու՝ ճիշդ Կիզի-մատուռ զանգակատան դրան առաջին, ուր ուզուել էր նորահարսը:

Հա՛, հա՛, հա՛... երեսը դարձրեց աղջիկը դէպի իւր փեսացուն և գլուխը թիկունքի կողմը թեքած՝ քրքջում էր երկար ծորելով իւր անվերջ ծիծաղը: Հա՛, հա՛, հա՛, չարչի Բղդէն ուզում է աղատ թռչունին թռած ժամանակն իւր թոռի (ցանց) մէջ խճճել. ա՛յ, սա՛ է իմ պաշտպանս, սա՛, էս սուրբ Կիզի մատուռը, ո՞նց կը համարձակուիս սրա մէջը մտնել:

Այս խօսքերից յետոյ Նողիկը ներս մտաւ զանգակատունը:

—Դրանից էլ լաւ թոռ չէր լինիլ, հիմի էլ չե՛ս կարող ձեռքիցս ազատուիլ, գոչեց Բղդէն և աղջկայ քամակից ներս ընկաւ մատուռի մէջ:

Ո՛վ սարսափ, Բղդէն քարացաւ՝ և մնաց սառած մատուռի միջնավայրումը, նրա աչքերը սևացան, ականջները խշխշացին, գլուխը պտոյտ առաւ:

—Ի՞նչ էր այս:

Նողիկը վայրի կատուի արագութեամբ մագլցելով՝ վեր է բարձրանում մատուռի կոփածոյ պատի մակերևութի վրայով դէպի զանգակատան կամարակիրները՝ շուտ շուտ վերևից կատաղի հայեացքներ արձակելով իւր թշնամու խրտնած եղան նման չռուած ու պշտացած աչքերին, կատարեալ ծառկուտուս կամ ալաչակչակ (ֆայֆուրիչ) թռչուն էր Աղաջանի դուստրը, որ ծառերի բների վրայով ազատ սորորում էր:

Ահա կանգնած է նա ուղիղ կամարակիրների պատուանդանի յառաջ եկած քարերի վերայ. մի ոտնաչափ տարածութիւն չաղիւ թէ լինէր պատուանդանի լայնութիւնը. կամարակիրներն շինած օրից վայրի աղաւնիներն ու ճնճղուկները միայն են հանգիստ առել Նողիկի ապաստանած տեղումը:

—Նայիր ինձ, կոլոտ Բղդէ՛, զիլ և սուր ձայնով գոչեց աղջիկը, զիլ՝ որքան մի մանկամարդ օրիորդի կոկորդը կրզօր էր:

Բղդէին թռուեցաւ, որպէս թէ ոսկիները դանելու օրուան ահարկու և զարգանդելի թնդիւնն էր, որ այսօր առաւել հուժկու արձագանդ տուեց զանգակատան ներսը, միևնոյն այն օրուան տպա-

ւորութիւնը տիրեց չարաբաղդ չարչու նեարդերի վերայ, նրա աչքին երևաց, իբր թէ սրբավայրը տեղահան եղած՝ տատանում էր և մնա էր փլչելու, Բղդէին լսելի եղաւ մինչև անգամ այն կուանի հարուածը, որ ինքը երկու տարի յառաջ իջեցրեց Կիզի մատուռի պատուհանի քարին, որի տակից նա հանեց ոսկիքը:

Բղդէի միտքն եկաւ առաջին անգամը ոսկիքը գտած օրն արած խոստումը. նա ինքն այս իսկ տեղում ուխտել էր տարեկան հինգ նաւակատեացը մի մի սպիտակ գառը զոհել Կիզի մատուռի սիրոյն, բայց մինչև էսօր և ոչ մի հաւի ձագ չէր մորթել: Ահա՛, այսօր, իւր բաղդաւորութեան օրն ուխտն իւր գլխին խառով է կենում, իւր նշանածին Աստծու սեղանի առաջից իւր ձեռքիցը խլում է:

—Ա՛յ մարդիկ, աղայ խաչեղբա՛յր, հեծկլտում էր տհաս մանուկի պէս Բղդէն՝ գաւնալով իրան շրջապատողներին և գաւառական գրագրին, դուք սիրտ չունի՞ք, դուք ադամորդի չէ՞ք, ընչի՞ էք թողում, որ ջհուտ Աղաջանի աղջիկն ինձ վերայ ծիծաղի, բարձրացէ՛ք, բռնեցէք, բռնութեամբ քարշ տուէք, ժամը կոխեցէ՛ք և իմ վրայ պսակեցէ՛ք,

—Դա աղջիկ չի, դա սատանայ է, դա ալք է, պատասխանեցին ամէն կողմից. մարդը, մարդի որդին կարո՞ղ է էս հայելու պէս կոկ պատը բարձրանալ, սատանի եղունկները միայն կը բռնեն քարերի տաշուածքների խոռոչոթները:

—Ի՞նչ, գեղագ՛յ (ոմարդէ, ցոծ) կօլրա Բղդէ՛, ի՞նչ, դու զօռով ես ուզում ինձ քո կինդ շինել. լսի՛ր, ձիչ արձակեց Շողիկը վերևից, լսի՛ր վերջին խօսքս. դու քո չար ցանկութիւնին չը հասար, հօրս ու նշանածիս արիւնն էսօր վրէժ են պահանջում և ես առնում եմ նրանց վրէժը քեզանից: Հեռո՛ւ, մարդի՛կ, յետ քաշուեցէ՛ք, տեղ տուէ՛ք, ես պէտք է Բղդէի գլխին մի էնպէս խաղ խաղում, որ քանի կենդանի է, ուրախ օր չը տեսնի. քանի էս օրը միտքը բերի, կայէնի նման սար ու ձոր ոռնատակ տայ ու ոչ մի տեղ հանգստութիւն չը գտնի, չէ՛, Բղդէ՛, չէ՛, Բստինենց հարսնացուն դաղանի ճանկը չընկաւ, ես գնում եմ հօրս հրամանով իմ Ահոյի հետ էն տե՛ղ միանալու, էնտե՛ղ, տե՛ս, ահա էնտե՛ղ, երկնքում՝ հրեշտակների կողքին:

Ո՛վ սուրբ Կիզի մատուռ, դու մեղք չը համարես, կանչեց Շո-

ղիկը բազկատարած և գլխի վայր ցած ձգեց իրան ահագին բարձ-
րութիւնից։

Լաւ էր, որ խուժանը սարսափած աղջկայ խօսքերից, ոմանք դուրս փախան և ոմանք պատերի տակ քաշուեցին, ապա թէ ոչ, մի քանիսը կը խորտակուէին, անշուշտ, նրա դիակի ծանրութեան ներքոյ։

Նողիկի դանգը ճեղքուեց, ուղիղը ցրիւ եկաւ մատուռում թափուած քարերի մէջ։

Կիզի-Մատուռի յատակը հարթ չէր. երկրաշարժերն ու Քրիստոսի խաչին թշնամի անհաւատներն ամայութեան դատապարտուած սրբավայրերից շատ սակաւները թողել էին անխախտ. երկարատև ժամանակն իւր աւերչութեան դատակնիքը, ուրիշների թուում, դրել է և Կարբու զանգակատան վերայ, պատերի խախտուածքներից և կամ ուղիղէից ցած գլորուած քարերն և կրային աւազախառն չորացած՝ և քարից առաւել ամրապնդուած շաղախներն ու խճերը ցրուած էին գետնին։

Այս քարերից մէկի սուր անկիւնը ցցուելով Բղդէի զոհի ուղեղի մէջ, վերջ դրեց նրա կեանքին։

Սոյն այս բոպէին մի մարդ՝ արբած զինուորի նման՝ իւր կանգնած տեղը սկսեց տարուբերուիլ, նորա աչքերի կոպերը ծածկուեցին ճակատի ոսկրի ներքոյ, քթածակերը լայնացան, բերանի կապը առաձգական ռետինի պէս ինքնին յետ էր բացուում և կրկին կուչ գալիս, լեզուն հատա շրթունքների վրայով մի թիզ կալս էր ընկել. մի զարհուրելի ճիւաղի կերպարանք էր ստացել ուշակորոյս մոլորուածի, առանց այն էլ՝ դաժան կերպարանքը։ Անհասատատ դրութիւնը կարճատև էր, մի երկու վայրկեան՝ և կիսացնորի ոտքերն անզօր գտնուեցին հաւասարակշռութիւն պահպանելու։ Ինչպէս մի հաստաբուն ծառ, որ փայտահատի սուր կացնի հարուածներից դողդողալով՝ կամենում է, կարծես, մի քանի բոպէ դիմադրել իւր թշնամուն, բայց վերջը ստիպուած է լինում թեքուել մի կողմի վերայ և ահագին թնդիւնով գետնին դիպչել, այդ ձևով տարուբերուեց թշուառականը, մի ճիչ միայն արձակեց և գրկակալով՝ մի կողքի վրայ տարածուեց զանգակատան մէջ։ Եթէ կարած ծառի օրինակը բաւական չը պարզեց վայր ընկնողի դրութիւնը, մենք կարող ենք ամեն

օր սպանդանոցում ներկայ գտնուել մորթուելիք անասունին. ճիշդ համանման կերպով գեղին է ընկնում մսագործի պարանով ոտքերը պրկած մսացու թանձրամարմին եզը, կամ գոմէշը։

Բաւական ժամանակ գեղինը ճանգռտում, ձեռքերն ածում և կոկորդից խռնչիւններ էր արձակում անբաղդ արարածը, ճանգերը բաց ու խուփ էր անում, աշխատում էր բռնել մի ինչ և իցէ առարկայ, սակայն բացի քար ու խճից ոչինչ չը կար։

Ցանկարծ այս մարդու ձեռքը դիպաւ իրանից ոչ հեռու ընկած նողիկի ջախջախուած գլխին, նրա մատները թաթախուեցին նահատակի արեան ճապաղիների մէջ և նա մանկական խաղալու գնդակի նման մի ցատկումն գործեց և ընկաւ մատուռի լուսամտի առաջը, ուր գլորուած էր պատուհանի վրայից երկու տարի յառաջ դուրս կորզած մի քար։

Ողորմելի էակը, կարծես, ծովասոյզ խեղդուողի նման դաւաւ խորտակուած նաւից կտրուած, ալիքների վերայ ծփացող փրկութեան գերանը, նա երկու ձեռքով ամուր գրկեց այս քարը և դադար առաւ իւր չարչարանքից։

Այս չարաբաստիկը մեր բարեբաստիկ նորափեսայ խօջա Բաղդասարն էր, նա յենուել էր, ապաստանել էր այն քարին, որ իւր ձեռքովն էր տեղահան արել լուսամտի պատից, որի տակին նա գտել էր ոսկու բղիկը և խոստացել էր ոսկիները ձեռք բերելուց յետոյ՝ կրկին տեղումն ամրացնել, բայց խոստումն անկատար էր թողել։

Բայց ի՞նչ էին անում այսքան միջոց ականատես հանդիսականները։

—Ամենքը շուարած մնացել էին, բոլորի վերայ տիրել էր մի տեսակ ապշութիւն, ոչ մէկը չէր վստահանում կանգնած տեղից մի քայլ յետ ու յառաջ շարժուիլ, ոչ մի ձայն չէր խանգարում մեռեալ լռութիւնը բացի Բղդէի կաղկանձիւնից՝ որ քարը գրկելուն պէս՝ այն էլ դադարեցաւ։

Վերջապէս գաւառական գրագիր հաղայ խաչեղբայրը՝ ամենքից շուտ սթափուեց, և իբրև վարչութեան գլխաւոր ներկայացուցիչ՝ պրաւ արժանին կարգադրութիւնը։ Նրա պատուիրանաւ մեռածին թողին իւր տեղն ընկած, իսկ քանի մի անձինք մօտ գնացին փերցնելու ուշակորոյս Բղդէին։

Ա՛յ զարմանք, ամենայն ոյժ գործ գնելով հանդերձ՝ չը կարողացան նրանք հեռացնել Բղդէին իւր գրկած քարից, կարծես, նրա եղունգները սրածայր մեխերի պէս ցցուել էին քարի մէջ և չէին պոկ գալիս։

—Թողէ՛ք... հեռացէ՛ք... մի՛ մօտենա՛ք ինձ... ի վերջոյ աչքերը ծանր ծանր յետ բացեց և թոյլ ձայնով արտասանեց Բղդէն։ Հետն էլ յաճախակի քարն էր համբուրում։

Արդա՛ւև, նա տեղիցը կանգնեց, միայնակ գրկեց երկու մարդով հազիւ շարժելի ծանր քարը ու յարմարեցրեց իւր նախկին տեղումը. ապա յետ դարձաւ, և երկու ոտքերի վերայ բևեռուած՝ երկար միջոց ակնապիշ նայում էր իւր՝ զոհին, որ թեւատարած արիւնաշաղախ փռուած էր մատրան միջակէտումը։

Թէ ի՞նչ էր մտմտում Բղդէն այդ վայրկենին՝ ոչ ոք չէր կարող գուշակել, բայց պարզ նկատելի էր, որ նրա ներսումը մի հոգեկան կռիւ էր կատարուում։

Չենք կարող ասել, թէ ո՞րչափ ժամանակ կը մնար նա այս մտածողութեան մէջ, եթէ յանկարծակի նրա աչքովը չ՚ընկնէին իւր արիւնաթաթաւ մատները։

—Ջո՛ւր, ջո՛ւր, ջուր բերէ՛ք, ձեռներս լուանա՛մ, դուրս ընկաւ մատուռից Բղդէն և ջուր գուռալով վազում էր դէպի Քասախ գետը։

Շատ ուշ գլխի ընկան մարդիկը և հետապնդեցին Բղդէին, սակայն անադան էր, ոչ ոք չը կարողացաւ հասկանալ, թէ դէպի ձորի ո՞ր քարափը դնաց նա։ Նորա հետը կորցրին։

Երկու ժամից, մինչ գաւառական գրագիրն իւր պաշտօնական արձանագրութիւնները վերջացրած՝ կամենում էր ձի հեծնել, մինչ հարամանիքաւորները պատրաստուում էին ցրուելու՝ Բղդէն մաքուր լուացուած՝ հանդիստ ու խաղաղ ներս մտաւ իւր տունը և բարև տուեց։

Նա գալիս էր տուրբ Յովհաննէսի աղբիւրից։

Ահա այն տեղ էր վազում Բղդէն դուրս փախած մատուռից։

Նստեց Բղդէն աղբրականը և այսպէս խօսեցաւ.

—Անիծուե՛ր էն ժամը, երբ առաջին անգամ հանդիպեցի Ջհուա Աղաջանի աղջկանը. այս աղբրի մօտ ես յիմարացայ, այստեղ էլ պէտք է զղջամ իմ սխալանքներիս համար, այս ջուրը հանդըս-

տացրեց իշամեղուների խայթուածքը՝ այս ջրի ափում ծագեցաւ իմ մէջ Նողիկին սիրելու ցանկութիւնը, այս ջուրն էլ թող մաքրի իմ ձեռներից նորա արիւնը և մեռցնի նորա սէրն ու յիշատակը։

Ձեռքերն աղբիւրում լուանալուց յետոյ՝ Բղդէն մօտեցաւ մեղ ծանօթ դմնիկ փշի թփին, քակեց թփի ճղքից Նողիկի անթարու (հագուստ է) ծուէնքը, որ մոր հրամանաւ կապել էր և որին համբոյրներ տալով՝ չէր յագեցել սիրահար չարչին, ճմլեց մատների մէջ և ատամներով ծուիկ ծուիկ պատառոտեց ու գետնին ցրիւ տուեց։

—Թող չը մնայ և ոչ մի հնչին առարկայ, որ երբ և իցէ կարող լինի յիշեցնել ինձ Ջհուա Աղաջանի աղջկանը։

Այս խօսքերից յետոյ՝ Բղդէն կրկին մօտեցաւ աղբիւրին, այժմ նա կատաղաւ և կուշտ խմեց սառը ջուրը։

—Օխա՛յ, սիրտս հովացաւ, ինձ համար այսուհետև ոչ թէ միայն զգալի չէ Ջհուա Աղաջանի աղջկայ արժանի վախճանը, եթէ բոլոր կանայքն էլ ջնջուին, չեմ ցաւիլ, կին ասած արարածդ սրանից յետոյ չի կարող ինձ յիմարացնել, և եթէ երբ և իցէ ես կին առնելու կարիք զգամ, այն իմ հարստութիւնս վայելող մի հատիկ ժառանգի համար կը լինի, որի ծնուելուց յետոյ՝ շատ չի քաշիլ, մոր գլուխն աղը կը դնենք. էնպէս կ'անեմ, երկու շաբթումը դար դամահ կը լինի։

Դէ՛հ, հիմի գնանք մեր հիւրերին ճանապարհ դնենք, հիմի թող Ջհուա Աղաջանն, էն կեանքումը պակի իւր աղջկանն իւր սիրած Բասինենց Սհօյի վրայ ու հարսանիքին իւր կնոջ հետ ձեռբունուկ պար դայ. իսկ ես այստեղ պար կը գամ, որ իմ թշնամիներից վրէժս առայ։

Ճիշդ որ Բղդէն ձեռքերը բարձրացրեց և պարելով ճանապարհ ընկաւ դէպի տուն։

Քնութիւնը ոչինչ մեղադրանք չը կարողացաւ բարուրել Բղդէի պարանոցին, ցնորուած, ինքնասպան աղջկայ խօսքերը ոչ մի իրական փաստի վերայ չէին հաստատուած։

Նողիկին մայրը թաղել տուեց ոչ իրանց, այլ Բասինենց դերեզմանոցումը՝ Սահակի կողքին։

Նատ չը քաշեց, ինքն էլ վշտահար մեռաւ և թաղուեց Աղաջանի մօտ։

Աղաչանի պարտապանները բոլորեքեան վերադարձրին իրանց վճարքը. Նուշանն այս փողերը յանձնեց տեր-Յակոբին՝ մարդի վերայ մի քար քաշելու և մինչև մահն ամեն հինգ նաւակատիկի նորա գերեզմանն օրհնելու:

—Աղէ՛, ասաց մի օր Բղդէն իւր մօրը, այսուհետև Կարբու�մը բնակուելն ինձ համար մեծ անխելքութիւն է, այդ դու՝ այդ մեր տները, ինչ կամիս՝ արա, ապրի՛ր մէջը, ծախի՛ր, ընծայի՛ր, քո գործդ է. էնքդ էլ՝ ինչպէս մինչև ցայսօր առանց ինձ կառավարուել ես, այսուհետև էլ նոյնպէս եղիր. ես իմ բնակութիւնս հաստատում եմ Աբարանու գիւղերից մէկումը, Աբարանն առ այժմ իմ հարստութիւնս կրկնապատկելու համար ամենայարմար կեդրոնն է: Բայց եթէ վհուկ Ցուտուի ոտքը, մի օր լսեմ, որ այս դունովը ներս է մտել, այնուհետև ոչ ես քո որդին, ոչ դու իմ մայրը:

ՄԱՅՐ

(ՈՐԲԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Ալէքսանդր Արծրունանի

I

Մայը ունէի, մայը նազելի—
Մի փափկասիրտ արարած.
Բուռը սիրով նորան էի
Սիրտս ու հոգիս նուիրած։

Նա էր միակ իմ պաշտելին,
Միակ ծաղիկն իմ հոգոյս.
Նա էր իմ թոյլ, անզօր կեանքին
Միակ նեցուկ, միակ յոյս...

Նա աղբիւր էր իմ խնդութեան,
Աղբիւր առատ, անսպառ.
Նորա կրծքին երջանկութեան
Վարդ էր փթթում ինձ համար։

Եւ ես ուրախ, եւ երջանիկ,
Որպէս անհոգ մի թռչնակ,
Նեաւում էի միշտ մօրքս գիրկ,
Վայելում սէր ու գգւանք։

Նորա գրկում, փոփո՛ւկ գրկում
Հոգիս խաղաղ էր, հանգիստ.
Չէի տանջւում, չէի զզում
Կեանքի հոգսեր, կեանքի վիշտ։

Եւ թեւում էր ինձ՝ երջանկիս
Թէ այդպէս մի՛շտ, յարատեւ
Ինձ կը ժպտայ մայր-նազելիս,
Որպէս կեանքիս վառ արեւ։

Սակայն, աւա՜ղ... մահն անիրաւ,
Մահն անողոք ու դաժան
Ագիզ մօրըս խլեց, տարաւ,
Տարաւ անդարձ, յաւիտեան...

Ո՛հ, էլ չունիմ ես մայր անգին,
Որ ինձ սիրէ՛ր, փայփայէ՛ր...
Որ իմ խղճուկ, անտէր կեանքին
Թեւ ու թիկունք նա լինէր...

15 յունիսի 1890 թ., Մոսկուա։

II

Զգացել էք դուք անգին կարօտի
Սիրտը կեղեքող խորին դառնութիւն.
Կամ ճաշակել էք դառն հրաժեշտի
Վերջին վայրկեանի միշտ ու թախծութիւն։

Պատահե՞լ է ձեզ արդեօք գէթ մի ժամ
Տեսնել ձեր շուրջը լուռ ամայութիւն,
Զգալ ձեզ մենակ, անտէր, անխնամ,
Լացի մէջ միայն գտնել փրկութիւն...

Ո՛հ, որքա՜ն ծանր են, որքա՜ն դառնագին
Այդ ցնցումները հոգւոյ տառապման...
Եւ այդ ամեն զգաց իմ հոգին,
Երբ խղճուկ մօրըս գրի գերեզման...

16 յունիսի 1890 թ., Մոսկուա։

ՄԻ՛ ՀԱՒԱՏԱՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԾԻՒԵԱՆԻ

Մի՛ հաւատար դու ծիծաղկոտ կեանքի խաղաղ վայելքին,
Յաճախ փայլուն կեղծ դիմակ է շողում նորա չար դէմքին.
Որպէս երազ, յանկարծ տեսար, այդ վայելքը խաբուսիկ
Ցդը ցնդեց—և քեզ նորից ճնշեց կեանքի փոթորիկ։

Թո՛ղ քո առաջ կեանքը բանայ հրապուրիչ մի աշխարհ,
Ուր վայելես դու լիառատ օրեր քաղցր ու պայծառ.
Թո՛ղ կախարդէ նա քո ուշքը երջանկութեան տաղերով,
Թո՛ղ խոստանայ նա յարատև քեզ մի վիճակ անվրդով...

Դու մի՛ խաբուիր, մի՛ հաւատար այդ վայելքին հեշտութեամբ
Եւ կա՛ց զինուած միշտ կեանքի մէջ հոգոյդ բոլո՛ր զօրութեամբ.
Զինուի՛ր տոկուն կամքի ուժով զինուի՛ր սրտով քաջայաղթ,
Որ և՛ կեանքի փոթորկի դէմ դու մարտնչես անվհատ։

Դու շատ տնգամ հոգս ու վշտից ուժասպառ և վաստակած
Կեանքի ծոցում քեզ կը գտնես անդորրութիւն քո խնդրած.
Սակայն երբէք մի՛ մոռանար, որ այդ հանգիստը կեանքի
Իւր մէջ դաղտուկ պահած ունի և՛ փոթորիկ տանջանքի։

Այդպէս երբեմն և՛ լողորդին խաղաղ ծովը ժպտալով,
Խոստանում է նորան հասցնել նաւահանգիստն անխռով.
Սակայն որքա՛ն դոռ ալիքներ մրրկածուփ, փրփրադէ՛զ
Լուռ պահում է նա իւր կրծքում աչքից ծածուկ ու անտես...

Մոսկուա. 10 յունիսի 1890 թ.։

ՏԽՈՒՐ ՎԷՊ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԾԻԵԱՆԻ

I

Անմեղ հրբեշտակ նա աշխարհ եկաւ —
Երկնատուր մի զարդ երկրին պարգևած,
Ցոյս, սէր ու հաւատ նա իւր հետ, բերաւ,
Կուսական սրտի խորքերում պահուած։
Եւ լի հաւատով, ոսկեվառ յուսով
Մտերիմ ընկեր ընտրեց նա մէկին,
Նա սիրեց նորան անխարդախ սիրով,
Նուիրեց նորան իւր սիրտն ու հոգին...

II

Բայց, աւաղ, խղճուկ, պարզամիտ մանկան...
Երկար չը ժպտաց նա այս աշխարհում...
Սիրուած «մտերիմ ընկերը» նորան
Պատրաստեց դառը, թունաւոր անկում...
Եւ անկաւ մանուկն անմե՛ղ, անարատ,
Վշտամաշ սրտով, փշրուած յոյսերով...
Թաշնեց նա, որպէս հրաշալի մի վարդ՝
Գոկուած, տրորուած կոպիտ մատներով...

Մոսկուա. 22 յունիսի 1890 թ.

ՀԷՅՆԷՒՑ

ՋԱՒԱԴ ԲԱԼՈՒՂԵԱՆՑԻ

I

«Es fällt ein Stern herunter
Aus seiner funkelnden Höh'....

Մի աստղ շեղուեց իւր ճամբից,
Ընկաւ պայծառ երկընքից,
Դա հենց սիրոյ աստղիկն էր,
Որ վերևից գլորուում էր։
Խընձորենուց թափուեցին
Շատ կոկոններ ու տերև,
Վերայ հասաւ չար քամին
Ուսկսեց ծաղրել ու տալ ցրև։
Կարապն լըճում երգում էր—[1])
Մերթ դուրս լողում, մերթ սուզում...
Երգը կամաց մարում էր,
Վերջը խեղդուեց ջըրերում։
Լուռէ այժըմ ու մըթին.
Տերև, կոկոն ցիրուցան,
Աստղը հանգած բընաւին.
Երգը դադրած յաւիտեան։

---

[1]) Կարապը երգում է իւր ամբողջ կեանքում մի անգամ, այն էլ մահուան բոպէում։ Այստեղից են—«лебединая пѣснь» Schwanengesang (կարապի երգ),—որ նշանակում են մահամերձ, վերջին մի երգ։ Հէյնէն դուրս է բերել այստեղ մահուան պատկերներ։

Ջ. Բ.

II

«Und wüsstens, die Blumen, die Kleinen
Wie tief verwundet mein Herz...»

Թէ գիտնային փոքրիկ ծաղկունք
Սըրտիս վէրքը ծանրագին,
Կը թափէին ինձ հետ արցունք,
Որ դարմանեն իմ ցաւին։
Թէ բլբուլներն գուշակէին,
Ոնցե՞մ հիւանդ, թախծագին,
Նոքա անշուշտ կը երգէին—
Ամրացնելու իմ հոգին։
Թէ կըսկիծըս հասկանային
Աստղիկները ոսկեփայլ,
Նոքա երկնից կը իջնէին—
Մ՚ըխիթարանք ինձ կարդալ։
Բայց այդ ոչոք չէ իմանում,
Բացի միայն մէն-մէկից...
Նա հենց ինքն է սիրտս փըշրում,
Սիրտս պոկում արմատից։

ՍԷՐԸ

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԻ

Եթէ, բարեկամ, քո անդորը հոգուն
Տիրում է յանկարծ մի անյայտ կսկիծ,
Եթէ ինչ որ հուր քո ողջ գոյութիւն
Այրում է ուժգին և զգայմունքիդ
Սիրտդ անհանգիստ բաբախում է միշտ,
Եթէ քուն չ'ունիս և օր ու գիշեր
Բորբոքում է քեզ մի հեշտալիր վիշտ,—
Այդ հոգու մրրիկ-կոչում ենք մենք սէր։

Եթէ բարեկամ, այդ հուրն անշէջ
Մառնալ է տալիս բոլոր մյլ վշտեր,
Եթէ արթնութեան թէ երազի մէջ
Աչքիդ առաջն է նազելի պատկեր,
Եթէ կաթոգին, սիրավառ համբոյր
Ջերմ դրոշմում ես կոյսի շրթունքին—
Վայելում անվերջ կեանքի ողջ հրապոյր,—
Այդ զգացմունքը-սէրն է ջերմագին։

Եթէ, բարեկամ, այս ամեն յուզմունք
Տեսնում ես սրտումդ հետզհետ մարում,
Եթէ վշտահար թափում ես արցունք
Բազդ, ճակատագիր ողբում, անիծում,
Եթէ թախծալի քո տխուր դէմքին
Չէ խաղում նախկին այն անոյշ ժպիտ,
Եթէ հոգուդ մէջ դատարկ է, մթին—
Աւաղ խաբուած է սէրը ճշմարիտ։

1890 թ., Յունիսի 5. Թիֆլիս։

*
* *

ԼԷՕՊԱՐԴԻՆ

Կ. Կրասիլնիկեանի

Ննջիր յաւիտեան իմ հիւանդ կրծքում
Իմ վշտահար սիրտ. քո հրապուրանքը
Զոհ գնաց արդէն զազիր չարութեան
Էլ վերադարձը նրան չեմ ուզում։
Կորաւ ամենը, որ միտումներումս
Թւում էր ինձ թանգ ու նուիրական,
Եւ իմ անցեալի խորտակուած յոյսին
Ես խորը զգում եմ վերադարձ չը կայ։
Սուտը ինձ պէտք չէ. ինձ համար այսօր
Բոլորը պարզ է, պարզ լոյսի նման,
Մեռիր իմ խեղճ սիրտ, հերիք ապարդիւն
Ենթակայ մնաս անմիտ տոչորման։
Տխուր բախելում ընաւ միտք չը կայ
Եւ ողջ աշխարհը չարժէ քո վշտին.
Թոյնով և սրտով լցուած է կեանքը
Համայն տիեզերք լոկ տեսիլք միայն։
Դու վերջին անգամ լուռ վհատման մէջ
Բախիր այն անմիտ վիճակի համար,
Որ ճակատագիրը իւր կոյր վեհութեամբ
Դատապարտել է մահու, կորստեան...
Եւ ճնշելով քո անզօր արհաւիրք,
Թողնելով ընդ միշտ իզուր տանջանքը
Ջանա՛ որ սառչես իմ հիւանդ կրծքում
Սառն ու անտարբեր արհամարհանքով՝
Դէպ ինձ, դէպ մարդիկ, դէպ այժը կոպիտ,
Որ ողջ կուրօրէն կառավարելով,
Բոլոր էութիւնը դէպ չը գոյութեան
Վիհն է գլորում չը դադարելով...

1890 թ., մայիսի 2։. Թիֆլիս։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԵՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ [1])

Քաղաքական դպրոցներ։—Ինչ են ուսանում ժողովրդական դպրոցներում։—Գերմանական լեզուի զարգացումը և պատմական կուրսը լատիներէնի դէմ։—Գամութիւնը և աշխարհագրութիւնը։—Այլ առարկաներ։—Ուսուցչական իրաւունքը 1872 թ., կանոններով։ Ժողովրդական դպրոցների վարչութիւնը։ Համայնքը։

Գ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԵՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Քաղաքական դպրոցները (Bürgerschule) նշանակուած են երիտասարդութեան տալու այն, ինչ որ նա ստանում է ոչ ստորին ժողովրդական և ոչ բարձրագոյն դպրոցներում, այլապէս ասած, ինչ որ հարկաւոր է քաղաքացիական զարգացման հասնելու համար։ Ըստ այդմ քաղաքացիական դպրոցները պէտք է ազգային կրթութիւն տան, նպատակ ունենալով «աշակերտների հոգեոր աշխարհը այնպէս ընդարձակել, նորա բարոյական ուժը այնպէս զօրացնել և ճշմարտի, բարուոյն և գեղեցկի զգացումն այնպէս զարթեցնել, որ նոքա քաղաքացիական որ և է կոչման զարգացումն իւրացնելով ձեռնհաս լինին նիւթական չնորհքներ արդիւնաւորելու և այդ գործունէութեամբ ինքնագիտակցաբար և աղատ արտագործեն ազգի մնտեսական հասարակական (սոցիալական), քաղաքական և կրօնական կեանքի վերաբերեալ նորագոյն մտքերը»։ Ուրեմն քաղաքիա-

---

[1]) Տե՛ս «Մուրճ»-ի № 4, 5, 6։

կան դպրոցների նպատակն է սահմանաւոր զարգացումն. ինչպէս խիտ ցանած սերմերը խեղդելով շատ պտուղ չեն տալիս, նոյնպէս և այս ուսումնան մէջ գլխաւորն է՝ սակաւ, բայց հիմնաւոր։

Հետևաբար ժողովրդական դպրոցներում առանձնում է այն, ինչ որ կեանքի մէջ օգտակար է և առ բերելի։ Իւրքանչիւր ժողովրդի կեանքն և ազգայնութիւնը արտադրւում է սկզբնաբար լեզուի, խօսքի և գրութեան մէջ։ Ինչ որ դարերի ընթացքում մի ժողովրդի, մի ազգի սեպհականութիւնն է եղել, ինչ որ այդ ազգի իւրաքանչիւր անդամը իւրն է համարել, ինչ որ նորա հետ ճուլված ազգայնացած կենդանի է եղել և անբաժան մնացել, այդպիսի պատկանելիքներն են որ որոշում են ազգութիւններին իրարից։ Այդ պատճառով գերմաներէնը գերմանական դպրոցներում առաջին տեղն է բռնում, որ ինչպէս կը տեսնենք, մեծամեծ պատերազմներից լետոյ է կարողացել իւր տեղը գտնել։ Անջատ չեն մայրենի լեզուից պատմութիւնն ու գրականութիւնն, առանց որոնց լեզու սովորելը, կարելիութիւնից դուրս է։

Գերմանացիք թէպէտ ունեցել են իրանց սեպհական լեզուն, սակայն աննպատակ պարապմունքից մէջ և մանաւանդ այս ու այն ազգի, որպէս լատինաց, լատինաց և ֆրանսիացոց (12 դար) լուսաւորութեան ենթարկելով, սկսել են հնարասիրել շատ բառեր, որոնք դեռ մինչև այժմ գործածութեան մէջ են և որոնց անհետացման համար միութիւններ են հաստատուած։ Օտար բառերի գործածութիւնը սովորական էր մանաւանդ միջին դարում, երբ սոպհական քանաստեղծութիւնը մասամ Գերմանիա և արքունի դարձութիւններից մէկը դարձաւ։ Առաւելագոյն մեծ հարուած տուել է լատիներէնը իւր իրաւաբանութեամբ և եկեղեցականութեան տիրապետութեամբ. այն ժամանակի լուսաւորուած մարդը նա էր, ով լատիներէն գիտէր, հոգ չէր եթէ նա իւր մայրենի լեզուն գիտենալու ինքնաճանաչութիւնից զուրկ էր։ Պետական և եկեղեցական բոլոր պաշտօնեաները առանց լատիներէնի չէին կարող լինել, վասն զի բոլոր գիւանագրութիւններն և պաշտամունքները լատիներէն էին, թէպէտ և հին հռոմէական պետութիւնը ընկած էր և հռոմէացիք Լաբենոտոս Վալլա'ի բերանով տիրում էին ինքանց թէ կորցրել են տիրապետութիւնը ժամանակի ընթացքից, սակայն իրանց փոխանակ լեզուով կառավարում են հոգաղունդի մի մեծ մասը։ «Մերն է Իտալիայ, մերն է Սպանիայ, Գերմանիայ, Դալմացիոյ, Իլլիրիայ և շատ այլ ժողովուրդներ։ Չի որտեղ հռոմէական լեզուն է, այնտեղ է և հռոմէական պետութիւնը»։ Եւ իրաւ, լատիներէնը տիրում էր միջին դարում եկեղեցին, դպրոցը, ընտանիքն ու արքունիքը։ Հասկանալի է ուրեմն թէ վերանորոգութիւնն ինչ մեծ ծառայութիւն է արել գերմանացոց, թէև սկզբներում եկեղեցական երդեցողութիւն ազգային լեզուի դարձրին, սակայն ժողովրդական դպրոցներն առանց լատիներէնի անկարելի եղաւ, քանզի Լութերն և նորա աշակիցներն ևս, որքան ապրասէր էլ լինէին,

ամենաբարձր ժամանակի գիտնականութիւնից վարակած էին և խմորուած, ըստ որում ամենայն ինչ քայլ առ քայլ պիտի լուսաջ գնար։ Այդու հանդերձ նա իւր աստուածաշնչի թարգմանութեամբ և եկեղեցական երգեցողութեամբ հիմք ուներ և ազգային ճշմարիտ կապերը հաստատեց, որոնցով ազգային մտքերը, զգացմունքները և զգայութիւնները թէ իրար մէջ թէ առ վերջինն ազգայնարար պիտի կապէր։ Ամենայն ինչ մայրենի լեզուի պաշտամունք, գրոց, երգ և քարոզ, թէև խեղճ լեզու, որ նոր կեանք էր տալիս ժողովրդին, այսու ամենայնիւ մայրենի լեզուն դեռ երկոնքի մէջ էր, վասն զի դեռ չարունակում էր դպրոցականութեան դէմ պատերազմը, որ առանց լատիներէնի անկարելի էր, որպէս և այժմ։ Մայրենի լեզուն ուսուցանելու հարկ չը կար, ինչպէս կարծում էին իշխաններից ոմանք։ Վիւրտեմբերգի դաքսը հրամայեց իսկ գերմաներէնի ուսուցումը վերացնել, քանզի, ասում էր նա, դպրանով լատիներէնն է փչանում և մանուկները չեն կարողանում վայելչապէս Աստուած պաշտել և մի որ և է պաշտօն վարել, ըստ որում լատիներէնը պէտք է ուսուցանել, գերմաներէնը իբր թէ առանց ուսանելու էլ գիտեն։ Նոյն իսկ քանի մի բարձրագոյն դպրոցներում գերմաներէն խօսելն արգելուած էր։ Եթէ այսպէս գնար, գերմաներէնը պիտի բոլորովին անհետանար, լատիներէնին տեղ տալով, ըստորում ազգայնութիւնն էլ պիտի կորչէր, որովհետև գերմանացիք արիշ կապ չունէին, բացի իրանց լեզուն, եթէ մի կողմը թողնենք նորաբողբոջ ազգային հպարտութիւնը։

Վերակենդանացաւ լեզուն և ապա երևեցան անձինք, որոնք սկսեցին մաքրել օտար և խորթ տարրերից. այդպէս՝ Լուտ, լաւագոյն հարթերկրանը (պրոգրեսիվ), Լութերի և Լեսինգի միջև և նորա ժամանակակից Հանս Բրիստոֆիլ։ Բայց դեռ ևս տարաբարբառ դրութիւններն լարվի էին, վասն զի գերմաներէնը շատ լեռ էր մնացած և չէր զարգացած, մինչև իսկ Լայբնիցը շատ քիչ էր գործածում գերմաներէնը։ Վերջապէս Հալլէի համալսարանի նախկին նախարարապետ Քրիստիան Վոլֆի միջոցով գերմաներէնը գործածութիւն ստացաւ իմաստասիրութեան մէջ և ապա ժամանակի գրողներն, ինչպէս՝ Շլեգել, Գերաներ, Հալլեր, Գեսներ և այլք մշակեցին և կոկեցին այդ լեզուն, այնպէս որ դժարութիւն չը կար այլ ևս որ և է բան գերմաներէն արտարերելու։ Երբ զգացուց որ գերմաներէնով ևս կարելի է ամենայն մտքեր արտայայտել, հռչակաւոր գրողների գրուածները թարգմանել, ահա երևեցան անձինք, որոնք սկսեցին գաստական գրութիւնների գեղեցկութիւնը գերմաներէնին պատաստել, գրեթէ 1745-ից սկսեցաւ մի նոր տարաշրջան, երբ Կլոպշտոկ դեռ ուսանող Նեյզում իւր Մեսիան ձեռք առնելով, ըստ մայրենի լեզուի ոգուն տաղաչափելով և լանգերգելով, ընդունին հոգեպէս վերութեան մէջ ճախրելով, քրիստոնէութեան աստուածային հեղինակին ազգային չքեղութեան մէջ ժողովրդի ոգեորութեան աստարկայ չինեց։ Նա ուժգին հարուած տուց օտար և խորթ լեզուին

և գերմաններէնը վերամբարձ զօրութիւն ստացաւ կրօնական զգացմանց և ոգեորութեանց հրաբորբոք արտայայտութեանց մէջ։ Նա ոգեորւած էր իւր ազգից «նա երազում էր մի մեծ, ազատ, միացած և ամենայն ազգի վերայ հոգի և առաքինութիւն ճառագայթող Գերմանիայ»։ Նա դարձրեց իւր ազգի աչքերը դէպի իրանց ոյժերը, ընդ ամին և կարողացաւ ոգեորել նոցա առ ազատութիւն, ինքնութիւն և ազգային դաղափարներ, կոչելով Տավիտասի հետ թէ գերմանացիք միշտ անջատ, անխառն և միայն ինքեանց նման են եղել։ Կլոպշտոկ նոր սերմեր ցանեց, նոր ճանապարհներ բացեց, որոնք առատ պտուղներ պէտք է տային—դրականութիւնը կենդանութիւն ստացաւ։

Եկաւ Վիլանդն և գերմանական գեղարուեստութիւնը գեղագրաւ և թռուցիկ աչքով առաւ և մտաւ ժողովրդի բարձր խաւերը։ Վինկելմանը ի սեր դրաւ հին նահապետական կեանքը։ Ելաւ Լեսսինգ (1729—81) և կատարեալ տղամարդի անվեհեր բնաւորութիւնով ձգտեց դէպի ճշմարտութիւն։ Հին դասականների աղդեցութեան տակ կրթւած այդ աղնւամիտ աղդորդին չէր ընկնում փառքի և պատուին յետեից, այլ արիականն հպարտութեամբ ընդդիմադրում էր ամենայն առ կալման դէմ. նա դիմելով դերականին, օտարամոլութիւնը մտրակեց և խորտակեց ինչ որ հակադգային էր, կեղծ էր, անբարոյական էր և հակառաժողովրդական, որոնք նորա սուր քննադատութիւնից խոյս չէին տալիս։ Նա կարծես մի հիւանդութիւն ունէր իւր հանճարի բոլոր հարստութիւնը իւր ազգի բարոյական համար արտազեղելու։ Խայթիչ դրչով հալածեց նա ֆրանսական խաղերդութիւնները գերմանական բեմերից և իւր հեղինակութիւններով օրինակ դառաւ առաջնորդելու։ Ահա և Հերդերը (1744—1803), որ միացնելով իւր մէջ հելլենական կեանքի արժանիքը խոր քրիստոնէականի հետ, ուշ դարձրեց արևելքի բնութեան բանաստեղծութեան, խելամուտ եղաւ ժողովուրդների երգերին և իւր հանճարով ճանապարհ բացաւ մարդկային պատմութեան խմաստասիրութեանն, որով զարկ տուեց ազգային պատուի և փառքի պըշրանքներին. նա մարդասիրական դաղափարներից ոգեորւած, արևելեան կեանքի և աստուածաշնչի սիրուց առչորւելով, արտայայտեց իւր ամբողջ ներքին կեանքը մշտական սիրառատով՝ «լոյս, սէր, կեանք»։

Մինչդեռ մի ժամանակ չատ պարզ մտքեր գերմաններէն արտայայտելն անդամ դժուար էր, եկաւ Կանտն և ստեղծեց խմաստասիրան մի նոր սիստեմ, գիտութեան մէջ մի նոր հիմնակէտ վարսելով։ Ապա Ֆրիդրիխ մեծի հայրենասիրական ձգտումներն ևս այդ շրջանում արդասաւորեցան, երբ աշխատեց հռոմէական իրաւաբանութեան տեղ գերմանականը հաստատել, թէև թերութիւններով, վասն զի, ըստ որում հնար չէր միանգամից ամենայն ինչ փոխանակել։ Գերմաններէնը իբրև դիւրաթէք լեզու ընդունեցաւ կիրարկութեան համար, երբ գեղարուեստը կատարեալ ազատ դիմութիւն ունեցաւ, չնորհիւ հանճարաւոր բանաստեղծների, թէպէտ դիւ-

քաթեքութեան չը համոզեցին լատինակիրթ գերմանազուրկ իրաւաբան-ները, որոնք, մայրենի լեզուն սովորելու աշխուժն ու ջանքը չ'ունենալով կամակորութեամբ աշխատում էին ապացուցանել՝ որ իրաւաբանական բա-ները գերմաներէնի թարգմանել կամ դրութիւններն արտաբերել չի կա-րելի, փոխանակ ջանադիր լինելու իրանց լեզուն ուսումնասիրելու և կիրարկելու։ Նոքա չէին կարողանում գերմաներէն ասել այն ինչ որ լատի-ներէն ասելու սովոր էին և ահա ճգնում էին խորտակել ամենայն ինչ, որպէս զի այլք, որոնք չափազանց չատ էին, գործածէին այն լեզուն, որ իրանց համար դժուարութիւններ չէր ներկայացնում։

Դիմելու առ Աստուած և առ մարդիկ, ազգի միակ սեպհականու-թիւնները՝ հայրենիք և ընդհանուր պետը կամ գլուխը սիրել և պաշտել սովորելու և գիտակցաբար ապրելով՝ հաւատարմաբար կնքել իրանց մահ-կանացուն։ Մայրենի լեզուն ուսուցանելով, ազգային ամբողջ կեանքն իբրև ճշմարիտ ազգային սեպհականութիւն ճանաչել ու սիրել տալ—ահա դպրոցի բարձր նպատակը։ Ըստ որում, մայրենի լեզուի գիտութիւնն ևս միակ չափն է, որով չափելու է աշակերտների հայրենագիտութիւնն և սէրը։ Իրաքանչիւր քաղաքացի մայրենի լեզուն բառապէս իրացնելուց յետոյ է որ նա մարդ է դառնում մարդկանց շրջանում և իւր լեզուն իւր գործերի մէջ արժանապէս գործածում։ Քանի որ գիտութիւնն օր ըստ օրէ յառաջ է գնում, նա ազգում է և լեզուի վերայ, իսկ լեզուի առաւելագոյն զարգացման համար աւանդւում է և լեզուի վերայ, իսկ լեզու առաւելա-գոյն զարգացման համար աւանդւում է ֆրանսերէն և գերմաներէն և անգ-լիերէն բարձր դպրոցներում, վասն զի դոցա գիտակցութեամբ և ճաշա-կակրթութեամբ է որ մայրենի լեզուին զարկ տալ կարելի է «հոգևոր ոյժը, պատկերացման սրութիւնը, արտայայտութեան ճարպիկութիւնն և ոլորա-դարձութիւնը, միով բանիւ՝ խօսքի երկապրութիւնը կարելի է լեզուների ծանօթութեամբ ձեռք բերել. քանզի դոցանով է որ կրթւում և զարգա-նում են երևակայութեան թռիչքները, ճաշակի մաքրութիւնը և բնութիւնի աշխուժն ու եռանդը»։

Մայրենի լեզուից յետոյ նշանաւոր տեղն են բռնում գերմանական դպրոցներում պատմութիւնը և աշխարհագրութիւնը, որոնք հասկանալի են կայանում ներկայի կեանքը ներքին էութեամբ և ծաւալմամբ։ Ցոտար երկիրների մի չառաջադրութիւն լինում է քաղաքացիական բարձր դպրոցներում, որտեղ ուսուցանում են ուսողական աշխարհագրութեան դլխաւոր մասերը՝ երկնամարմինների դիրքը և շարժումը, մոլորակների դասա-կարգութիւնը, անշարժ աստղերը, վարսաւոները (կոմետա), արեգակի և լուսնի խաւարումը, երկրի տրոնումը, հասարակածը, երկայնութիւն և լայ-նութիւն, արևադարձներ, հողագօտիներ, բևեռներ և այլն։ Բնագիտական և քաղաքական աշխարհագրութեան մէջ՝ ընդհանուր ծանօթութիւն երկրի առանձին տրոնմունքների, աշխարհածովերի (ովկիանոս) լեռնաշղթաների

և գետերի, գլխաւոր երկիրների և քաղաքների։ Առաւելագոյն ծանօթութիւն Եւրոպայի և մանաւանդ հայրենիքի ծովերի, ծովախորշերի և նեղուցների, լեռների և գետերի դասակարգութեան, գետաղբիւրների, գետակների, նոցա հոսանքների և գոյա վերայ մեծ քաղաքների, ջրանցքների և երկաթուղիների ապա մանրամասն պետութիւնների և այլն։

Սորին դպրոցներում աւանդւում են նաև պատմութեան 3 շրջաններից, միայն կենսագրութիւնների ձևով, ընդ նմին ազգային պատմութիւնից նշանաւոր դէպքեր յարակցաբար, որպէս՝ եօթնամեայ պատերազմը, գերմանացոց ազատութիւնը, գերմանա-ֆրանսական պատերազմը և այլն, իսկ բարձր դպրոցներում արդէն մանրամասնաբար։

Ազգիսով լեզուն, պատմութիւնն և աշխարհագրութիւնը ինչպէս նաև կը տեսնենք, ծառայում են ազգային զարգացման. իսկ բնական ուսմունքներն, ուսողութիւնը, (մատեմատիկա), թւաբանութիւնը—գլխաւորապէս կենսական արդիւնաւորութեան, առաջինը տալիս է բնութեան ծանօթութիւններ, երկրորդը մարդում է մտաւոր ուժեր ընդնմին և թւաբանութիւնն իւր ամբողջութեամբ դառնում է իւրաքանչիւրի կենսական հարստութիւնը։ Բնական ուսմունքներն, որպէս բուսաբանութիւն, կենդանաբանութիւն և հանքաբանութիւն ծանօթացնում են աշակերտներին բոյսերը, կենդանիները, քարերը, հարկաւ ընդհանուր ոճով, իսկ բնագիտութիւնը անհրաժեշտ գիտակութիւններ—թթւանիւթի, ջրանիւթի, ածխանիւթի և նոցա առօրեայ երևոյթների անտեսութեան մէջ, որոնք հնում սակաւաթիւ անձանց մենագիտութիւնը լինելով, խաբեբայութեան միջոցներ էին ժողովրդի անհասկացողութեան չնորհիւ, ինչպէս սակեատեղծութիւնը (ալքիմիկա), աստղաբաշխութիւն, նոյն իսկ բնալուծութեան կեղծ տեսութիւնները շատ լաւագոյն կորստաբեր էին լինում նախապաշարեալ անձերին։ Նոյնպէս մեքենագործութիւնն, որով մարդկային աշխատանքը դիւրանում է, կարճ՝ այն ամենը, որով տիրում է մարդս երկրին վերայ գործելով և հասկանում է բնութեան մթութիւնները։—Սակայն գերմաններին լեզուով գրեց Պրուսիայի մեծ թագաւորին (Ֆրիդրիխ մեծին) պատիւ բերող օրէնսգիրքը «Պրուսիայի ընդհանուր պետական իրաւունք» խորագրով։ Ընդհանուր մատենահաշիւը ցոյց է տալիս, որ 1666-ին եղել են 461 լատիներէն և 270 գերմ. գրութիւններ, մինչդեռ 1780-ին Կլոպշտոկի ժամանակ 198-ը. և 1967 գերմ. իսկ առաջ գերմ. գիրք տալ աշակերտի ձեռքը, յանցանք էր համարւում, այժմ ամենայն ինչ. գերմաններէն է։ Բայց ինչ եղաւ գերմաններէնի վերապանծանքն, երբ երևեցան գերմանական վիհտայրի վերայ ազգային հոգով և ոյժերով զրահաւորուած քաջախրոխտ հանճարները՝ Գեօթէ և Շիլլեր, ելնելով թիւրենգեան երկրի պէս փոքրիկ ազգային փառաց և հնութեանց, հայրենասիրութեան և դիտութեան, հարգատութեան և մաքրութեան օրօրանից։ Նոցա (1649—1832. 1459—1805) աշխարհապարփակ գրածքներում գոյացին գերմանական հոգին,

մտածմունքներն և զգացմունքները, ժողովեցան ազգային վիշտակներն և փալլեցան, պատկերացաւ ժողովուրդն իւր բոլոր կողմերով մարմնի լեզի մէջ մարմնալով, ըստ որում, երբ լեզուն ժողովրդական պատկերացումն է պատնում, նա իւր հարատութեան և վսեմութեան ծայրին է։ Սակայն գեան գալարապատ հովիտում դուքս կարլ օգոստոսի և գեոթիէ ամենապարծակ թեերի տակ հիմի ժողովեցան ժամանակի չորս առաջ աստղերը իրանց միացած ճառագայթներով հայրենիքը լուսաւորելու և վերակենդանացնելու համար՝ Շիլլեր, Շելլինգ, Ֆրիդ, Շլեգել, Հումբոլդ, Շիւց, Վ.օլդման և այլք։ Գեոթէ և Շիլլեր ժամանակների այդ ծնունդներն և զարգացման այդ ծնողները, «գրոհման և մղման» («Sturm und Drang») շրջանի այդ աստղերն արտագրծում էին անմահ իմաստասէրների մարդկային մտքի ծուծը ազգային հոգեւոր քնարի վերայ երգելով և ժողովրդի սիրտը ներշնչելով։ Մինչև առաջինները գիտութեամբ, գիտութեան մէջ և գիտութեան համար էին ապրում, ուրա ժողովրդի մէջ, ժողովրդով և ժողովրդի համար էին շնչում. սոցա համար գործունէութեան նիւթ էին ժողովրդի ցաւերն ու վշտերը. սոցա համար կենարար միջոցներ էին ժողովրդի ուրախութիւնները. ուրա էին որ հարում էին ժողովրդի ներքին քնարի թելերը, զարթեցնելով այն՝ ինչ որ նորա ունէին։ Մինչդեռ գեոթէն իրապիտական սկզբունքով կրօնական և բարոյական կրթութեան էր ոյժ տալիս, համարելով՝ կրօնը կրթութեան միջնակէտ, աստուածաշունչը—հիմնարար, ընտանիքը—գլխաւոր կրթարան և հայրենիքը ուսման սուրբ նիւթ, Շիլլերը մարդկային գերականներին մարմնացումն էր տալիս իւր հզօր դրչի տակ. մանկավարժները ձգտում էին կրթել ազգի որդիները դիւրին և գրաւիչ ոճով, Շիլլերն, այդ մտաթեւ հանճարն իւր իսկ անձն արտագրօշմելով, դնում էր հոգեւոր և մտահարուստ երիտասարդների առաջի մէջ գերականական (իդէալական) պատկերներ, որոնց հասնելու պիտի ձգտէին աստուածանմանութեան կամ մարդկանանալու տենչանք ունեցողները։ Ոչ միայն ոչ պատիւ, այլ կատարելագործել և կատարելագործել՝ այս էր նորա մտախոհութիւնը, ըստ որում հիմք էր տալիս կատարելագործելու, այդ «իրաքանչիւրի պարտիք» համարելով.

Երբ այդ հանճարների հզօր դրչի տակ մարդնի լեզուն ոգեւորութեան արտայայտիչ դարձաւ, լեզուաբանութիւնը գիտութեան մէջ մտաւ և բարձրացաւ մանկավարժութեան հոգեչունչ Հերբարդ, որ գիտական մանկավարժութեան հիմք դրաւ։ Լեզուաբանական աշխարհում Գրիմն էր որ սկսաւ գերմաններէնի ճշմարիտ ոճերն ամենայն անարատութեամբ արտադրօշմել, գիտակցաբար որոշելով և գտնելով ժողովրդի մէջ ժամանակաւոր նորամուտ դարձուածներն և ժողովելով իսկական ազգային, որ զաւառներում հինաւուրց մնացել էր անկորուստ։ Երբ մարդի այդ միակ գէնքն իւր փայլն ստացաւ և իրրև երկաստրի սուր ընդունակ եղաւ ամենայն բանավարութեան, ծաղկեցան ոչ միայն վերոյիշեալ գիտութիւններն, այլ

և իմաստասիրութիւնն, աստուածաբանութիւնը, պատմութիւնը, բնագիտութիւնը, մաթեմատիկան, իրաւագիտութիւնն և զանազան արուեստագիտութիւններ. կենդանութիւն տացաւ գիտութեան հետ կրօնական, ընկերական, քաղաքական և ազգային կեանքն, որոնց լուսաւոր հոսանքի տակ լուսազարդուեցան բոլոր դպրոցներն, որոնցից դարձեալ՝ մարդիկ հոգի և կեանք ընդունելով, պէտք է գիտութեան սիւներ լինէին։

Մի ժամանակ Նապոլէոնի գործած նախճիրից յետոյ չատերը կարծեցին թէ գերմանացիք խեղդուելով արեան ճահճի մէջ, կը կորցնէին ամենայն ինքնաճանաչութիւն և բոլորովին կը խոպանանային. բայց միթէ նիւթական զօրութեամբ հոգեկանը կը կորչի. զգուշ պէտք է լինել հոգեկանի աննկատ ճնշելուց...։ Ահա մենք տեսնում ենք որ մեծ ռազմարշաւից յետոյ գերմանականի գիւանագիտութեան յառաջադիմութիւնն այնպէս զգալի եղաւ որ օտար լարաբերութեանց մէջ անգամ գերմաններէնն լարդ ստացաւ. Անգլիայի, Զուիցերիայի, Ամերիկայի հետ գերմաններէնը կիրարկութիւն առաւ, բացի Ֆրանսիայի և ոչ գերմանական ազգերի հետ, որոնց նկատմամբ սակայն ազգային ձգտումներ դեռ կան և իրագործւում են։ Մեր կողմից գիտութեան սիւնը տարածեց իւր չորերն ամենայն անկիւններ և տեսա իւրաքանչիւր գիտատենչ ազգ կամ անձն սկսաւ գերմաներէնի օգնութեան դիմել։ Գերմաներէնը լսւում է այժմ հողագնդի ամենայն ծայրերում, նոյն իսկ վարչական բարձրագոյն վայրերում, թող թէ զանազան ազգերի գրականութեան մէջ գործողների մայրենի լեզի աղքատութիւնից կամ անգիտութիւնից յառաջացած գերմանական բառերի առատ կիրարկութիւնը։ Այս ամենը գերմանացոց իրաւ պարծենալու տեղիք է տալիս. ինչ մեծ հակապատկեր մի երկու դարում. ծայրագոյն ծայրեր...

Մայրենի լեզուն հասաւ իւր կատարելակէտին ամենախղճալի վիճակից բարձրանալով, առանց անշարժութեան, որ է՝ մեռելութեան դատապարտելու։ Այժմ ժողովրդական և քաղաքացիական դպրոցների նպատակն ինքն ըստ ինքեան պարզ է. ներշնչել դեռահասներին ազգային հոգի, տալ նոցա մայրենի լեզի կարողութիւն, նորանով մտածելու, զգալու, նորանով կազմում է նիւթ այդ ուսուցման իւր ընդհանուր բովանդակութեամբ։ Բնհմերտը բացատրում է գեղեցկապէս ուսողութեան և բնական ուսմանց աղդեցութիւնը մարդկային կեանքի վերայ. «աշխարհի բոլոր ստեղծածների մէջ մարդս է ամենանօգնականն աշխարհի լոյսը տեսնելու։ Գազանները մեծ մասամբ գերազանցումեն նորան նուրբ զգալութեամբ, մկանունքի ոյժով և բնազդմասահոլութեամբ, իսկ այդ ամենը փոխանակւել է մարդուս մէջ մտաւոր հոգու։ Ինչ կը լինէր մարդս առանց հոգու կենդանութեան։ Քանի թոյլ է օր. ամենազօրեղ մարդու մկանանց ոյժը փոքի կնջիթի (хоботъ), վագրի երախի, կէտի ատու դիմաց, որ մի զարկով մի նաւակ է փչրում և լօգս ցնդեցնում։ Սակայն մարդ զօրացնում է իւր բազուկը

լծով, հոմով, ունելիքով, բարդաձգուղով (сложный блокъ), սեպերով, շղթա-առաձգութեամբ, վառօդի պայթմամբ. Նա լաղթում է ծանրութիւններ, ճայթեցնում է ժայռեր, փոխում է սարեր, որի դիմաց փղի ոյժի վերայ հաղիւ թէ խօսք լինի»...

Այսպէս ուանդուումէ այս առարկաներից միայն այնչափ, որչափ ոչ միայն փորձնական և հաւեցողական կողմ ունի, այլ և գեղարուեստական, կրօնական, նոյն իսկ ազգային։ Այստեղ պէտք է աւելացնել և աշակերտների ճաշակակրթումն, որին հասնում են մանաւանդ գեղերկական գրականութեամբ, որ դեր է խաղում թէ լեզուի ուսուցման և թէ ոճի զեղեցկութեան մէջ։

Ճաշակակրթման միւս միջոցներն են՝ գրութիւն, գծագրութիւն և երգեցողութիւն, թէ գրութեան և թէ գծագրութեան մէջ պէտք է ի նկատի ունենալ՝ կրթումն աչքի և մտքի, չափաւորութեան և մաքրութեան և այլն։ Գծագրութիւնը ստորին դպրոցներում հասնում է տաշտանկարի տարերքներին, փայտամարմինների, մոդէլների և սուերագրութիւնների օրինակագրութեան։ Զգացմանց երաժշտական լեզուն երգեցողութիւնն է, որ իւր կատարելութեամբ կապում է քնարական բանաստեղծութիւնը երաժշտութեան հետ և ժողովրդական երգերի միջոցով կրթում է մարդուս ազգային ոգով։

Նորադոյն օրէնքը հրամայում է ուսուցանել ժողովրդական դպրոցներում՝ «Կրօն և բարոյագիտութիւն, գերմաներէն լեզու, ըստ որում կարդալ և գրել, թուաբանութիւն, երկրաչափութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնապատմութիւն և բնագիտութիւն, երգեցողութիւն, գծագրութիւն, մարմնամարզութիւն»։ Այս ամենի նկատմամբ ուած ընդհանուր հայեացք անշուշտ բաւական կը լինի՝ ընթերցողին, ըստ որում աւելի մանրամասնութիւնն ուսուցման ուղեցոյցի նիւթն է։

Դեռ մի անգամ վիշել ենք որ չէ կարելի նպատակի հասնել, եթէ դորա համար յարմարաւոր մարդիկ չը կան. այդ մէկ նշանաւոր կէտ է, որը մոռացութեան չենթարկուեց, այլ նոր կանոններ ելան որոնք պէտք է որոշէին արժանաւոր ուսուցիչներն այդ սուրբ գործի համար. այդ կանոնները 1872-ից են, ըստ որում ուսուցչութեան իրաւունք էին ունենում քննութիւն տուողներ և հոգեորականներ, աստուածաբանութեան և լեզուաբանութեան դոքտորանտներ. քննութիւնը լինում է տեսական՝ բերանացի և գրաւոր և փորձնական։ Վճիռը լինում է «չատ լաւ», «լաւ» «բաւարար» և ոչ «բաւարար»։

Ժողովրդական միջնակարգ դպրոցների կամ օրիորդական ցարձր դպրոցների տեսչութեան քննութեան թեկնածուներ են հոգեորականներ, փորձաւոր ուսուցիչներ, աստուածաբանութեան և լեզուաբանութեան դոքտորանտներ։ Ուսուցչից պահանջում է, բացի մանկավարժական հմտութիւնը, մայրենի լեզուն, ազգային բարքերը, հայրենիքի պատմութիւնն և

լիչասակարաններն ուսումնասիրած լինել, հարկաւ զուրկ չը պէտք է լինին գիտութեան պաշարից, ճշմարիտ և տաքինի բնութիւնից, որպէս զի կարողանան աշակերտների բնութիւնը զարգացնել, որ ամենայն դպրոցի խնդիրն է։ Վարժապետներին խրատ և ուղեցոյց է Տետ Ա 6—10. Մատթ. ժբ. 5, 6. որ նոյն իսկ Հելլանոս ժիւվենալն է ասում՝

Maxima debetur puero reverentia, si quid
Turpe paras, hujus tu ne contemseris annos.

Ըստ որում ուսուցչից պահանջւում է «լինել օրինակ հօտին», ինչ ասել կ'ուզէ, որ օրինակը բարձր է, քան ուսուցումը։ Ուսուցիչը պարտաւոր է իւր սեպհական առաքինութեամբ՝ ճշմարտութեամբ, խղճմտանքով, ինքնասիրութեամբ մտածողութեան, գործի և խօսքի մէջ, հնազանդութեամբ, համեստութեամբ և պատուասիրութեամբ, կարգապահութեամբ և ճշտապահութեամբ (акуратность) օրինակ լինել իւր աշակերտներին։

Այժմ համալսարանական ուսումն ստացած և մանկավարժութիւն ուսումնասիրած ուսուցիչներ տեսնել ժողովրդական տարրին դպրոցներում, հեռաւոր գիւղերում, սովորական բան է։ Սաքսոնիայում, երբ վարժուած ուսուցչացուն տրժանաւորութեան պատուաւոր քննութիւնն է տալիս, ապա չարունակում է իւր ուսումը համալսարանում, ուսուցչանոցում 2 տարի և լեռոյ պաշտօնի անցնում։ Ակսպիսի մանկավարժական վայրերից անուանի են Լայպցիգինն ու Գնալինը. վերջինում մեծ անուն է հանել ուսուցչապետ Ռայնը։ Սակաւ չեն նոքա, որոնք նոյն իսկ պաշտօնի մէջ չարունակում են լաճախել ուսուցչանոցը, կատարելագործելով իրանց հմտութիւնն և ապա ինքնաշխատութիւնը չարունակում են, ի նկատի ունենալով, որ ոչ մի ուսուցչանոց չէ տալիս ամենայն ինչ միասին, այլ միայն վարժեցնում է ընդունակութիւններին, ուսուցանելու հակումներն և կատարելագործելու ոյժերը։ Ուսուցիչը պարտաւոր է չարունակել միշտ ուսանել, որպէս զի միշտ ուսուցանել կարենայ. si bene didiceris, bene docebis։ Տեսութիւնները հարստացնելով, պարտ է և փորձերն ամենայն ուշադրութեամբ լուսաջ տանելու, վասն զի այն էլ ճշմարիտ է, ըստ Գեօթէի «ալեւորութիւնն է, սիրելի բարեկամ, ամբողջ տեսութիւնը» (Grau, lieber Freund, ist alle Theorie)։ Ուսուցիչը չատ պաշար՝ հում պաշար ունենալով իւր գլխում, չը պէտք է չատանայ նոյնը տանդելով, այլ նորա վերայ է և կրթութեան ծանր պարտականութիւնը, որի վերայ արդէն բաւական խօսուեցաւ. նկատենք միայն որ բոլոր դպրոցներում, որտեղ ուսուցումն կայ, կրթութիւնը նորան կից է. «ես խոստովանում եմ, ասում է Հերբարդ, որ չեմ ըմբռնում մի կրթութիւն առանց ուսուցման, ըստ որում և չեմ ճանաչում որ և է ուսուցում, որ չէ կրթում»։

Ժողովրդական դպրոցները պատկանում են համայնքներին. պարտադիր ուսման դէմ խօսող անհատները զանազան կարծիքներ են լսանում այդ վերացնելու համար և դրան ապայոյց են բերում դպրոցների ժո-

զովրդականութիւնը. սակայն ժողովուրդ, նորա եկեղեցին և պետութիւնը հարկաւ անբաժան են, ըստ որում մէկի սեպհականութիւնը միւսին ևս պատկանում է. ժողովուրդն է իւր եկեղեցին կազմողը, ժողովուրդն է իւր պետութիւն կազմողը, վասն զի երեքն էլ ազգային են։ Սակայն ժողովրդական դպրոցների կառավարութիւնը համայնքների ձեռքումն է։ Իւրաքանչիւր ոք պարտաւոր է նպաստելու ամենայն ոյժով ամբողջ համայնքի գործին թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Եթէ հոգը վերցուէր ժողովրդից, ուսումը կը կորցնէր իւր արժանիքը նոցա աչքում։ Շատ բնական է, որ համայնքի այդ սուրբ գործը կարևոր լինելով ամեն մէկին, մեծ պարտաւորութիւն է դնում նորա վերայ։ Նոքա պահում են ժողովրդի ծախքով իրանց հիմնարկութեան օրից, որ և մի ինքնավարութիւն է որ ժողովրդի պատուաւոր իրաւունքներից մէկն է և այդ պաշտպանել են ամենաառաջաւոր անձեր, որպիսիք են՝ Դեստիրվեգ, Շուլց, Ֆիլլեր, Մայեր և այլ բազմաթիւ մանկավարժներ։ Դպրոցական վարչութիւնը երեք կարգ ունի՝ վերինը իշխանութիւնը, միջինը—գաւառականը և ստորինը—դպրոցականը։ Ուսուցիչներն ևս պատկանում են համայնքներին. դպրոցական խորհուրդը կազմում է տեսչից և հոգաբարձուներից, իսկ վերին իշխանութիւնը հսկում է որ ինքնաշխատութիւնը և այլ ոտիտութիւններ չը վնասեն դպրոցական գործին։ Ըստ որում դպրոցի դրութեան անմիջապէս հաստատ լինելու պարտականութիւնը, գաւառական վարչութեանն է, սա է հաստատում տեսուչներ, որոնցից անկախ չէ ուսուցիչների հրաւիրումը։ Նկատած է որ ժողովուրդը մեծ սիրով է վերաբերում և իւր կողմից ոչ մի զոհողութիւն չէ խնայում դպրոցի լաւաջողութեան զարկ տալու և պարծանօք չինութիւններ է կառուցանում, համարելով այդ՝ ազգային սուրբ պարտականութիւն, որից խոյս տալը մտքումն անգամ չէ անցնում։ Վերջին ռամիկն ևս չէ զրկում իւր որդուն տարրական ուսումից։ Եւ արդէն գիտութիւնն ու փորձը ցոյց են տալիս որ կեանքի մէջ երջանիկ լինելու համար հարկաւոր և անհրաժեշտ է հոգևոր չնորհքներ ձեռք բերել, չնորհքներ, որոնք ստացւում են ճշմարիտ ազգային ուսումից։ Այդ ուսումն է, որ ներշնչում է մանուկներին սէր աշխատանքի, իմաստութիւն, ոյժ, հաստատամտութիւն, միով բանիւ հոգու կատարելանմանութիւն։ Մանուկներն են այն մատաղաչ որտներն, որոնց մշակմամբ կարելի է արդարացնել հանրութեան լոյսը. կը հոլովի ժամանակն և կրթած այդ մատաղաչ սերունդը նոր կեանք կը լաւաջացնէ՝ համապատասխան իւր հայրերի սուրբ ձգտումներին և նպատակներին։

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿՈՒՍԻԿԵԱՆ, Ց. Ս.—«ՄԵՐ ՃԱՆԱՆՁՆԻՐ», կոմեդիա երեք արարածով և երկու պատկերով ոտանաւորով գրուած Թիֆլիսի կեանքից, 192 երես. Թիֆլիս. Մովսէս Վարդանեանի տպարան, Հրատարակութիւն Ն. Ս. Կուսիկեանի, գինն է 1 ռուբլի։

Կոմեդիայի բովանդակութիւնը կարճ կերպով սա է։ Վախտուն տարեկան Աղինց Գրիգորը առաջ մեծ հարստութեան տէր է եղել, իսկ այժմ թէև ունի մի քարվանսարայ իրրև սեպհականութիւն, բայց պարտքերի մէջ է ընկել։ Գրիգորը իւր Շաչինկա անունով աղջկան մարդու դնալու համար դիմում է մի ասոր խարերայութեան։ Փեսացուին խոստանում է թողնել իւր ամբողջ կարողութիւնը միայն այն պայմանով, որ փեսացուն նախօրօք հատուցանի նորա պարտքը։ Փեսացուն համաձայնում է. Գրիգորի պարտքը վճարում է. բայց քարվանսարան չէ ստանում և վիրաւորուած ապ խաբեբայութիւնից՝ հրաժարւում է ամուսնանալուց։ Շաչինկա չէ կարողանում տանել հարուածը և խելագարւում է։

Պիեսը գրած է Թիֆլիսի բարբառով. բացի այն խոսակցութիւններից, որոնց կատարողները կրթուած մարդիկ են։ Պիեսին աւելացրած է մի հետաքրքրական բառարան այն Թիֆլիսի բարբառով գործածուած բառերի, որոնք փոքր ի չատէ անհասկանալի են։

Պիեսում գործողները խօսում են ոտանաւորով, որ մի քանի տեղ բաւական լաջողուած է և դուրեկան է, իսկ առհասարակ, նամանաւանդ այն տեղերում, ուր գործ է ածուած գրական լեզու, անլաջող է։

Առաջին արարածը և երկրորդի սկիզբը, թէև դժուարութեամբ, բայց դեռ կարդացւում են, իսկ մի քանի տողերը (զորօրինակ Մալեալի, Մալալի, Սօլոմանի և Նատօլի մի քանի խօսակցութիւնները), որոնց մէջ երևում են դիտողութիւնների նշաններ, հաճութիւն են պատճառում ընթերցողին։ Առաջին պատկերի վերջում գրուած կուպլետները կարող են լաւ ասողի բերանից մի լայնի տպաւորութիւն գործել մինչև պանդի տէր հանդիսականների վերայ։—Մնացածը կարդալու համար մեծ համբե-

բութիւն և հերոսութիւն է հարկաւոր։ Ընթերցողը չը գիտէ գրուածքի պարզամտութեան վերայ ծիծաղի թէ նորա անկարելի գործողների անհամ և անբնական իսօսակցութիւնների վերայ։

Տիպերը չատի ալ են, անդոյն և անորոշ։ Փոքր ի չատէ տիպի նմանութիւն ունեն մօցիքսալ Մալալը և Գրիգորի հին բարեկամ Սօլոմանը։ Ինչ բնութեան մարդիկ են ինքը Գրիգորը, նորա աղջիկ Շաշինկան և միւս գործողները—պիեսից չէ երևում։

Պիեսի բովանդակութիւնը բաւականաչափ պարզ չէ. մի քանի կէտեր մութ կերպով են դուրս բերուած։ Ընթերցողը կամ հանդիսականը ինքը պէտք է ենթադրի մի քանի եղելութիւններ, բեմից դուրս տեղի ունեցած մեքենայարութիւններ։ Այն, ինչ որ կոչւում է հոգեբանական նրբութիւն, բոլորովին բացակայ է պիեսից։ Բովանդակութիւնը կորցնում է իւր գրական հրապոյրը, որովհետև նա տպաւորութիւն է գործում աւազակութեան, կոպիտ խարեբայութեան, աչքակապութեան պատկերի։

Պիեսի կարդալուց մնում է մի այսպիսակ տպաւորութիւն նորա լօրինելու մասին։ Կարծես թէ նորա հեղինակը սորանից չատ տարիներ առաջ, երիտասարդ հասակում (երբ դեռ յաջողութիւն էին ունենում մի քանի, այժմ անժամանակակից դարձած, ֆարսեր) գրել է մի թեթև պիես, որի մի քանի կտորները կարդացել է իւր մօտ բարեկամներին և նոցա հաւանութիւնը ստացել։ Յետոյ մտածել է նորան աւելի լուրջ գրուածքի վերածել, ուրիշ պիեսների նմանեցնել, մէջը հասարակական դաղափար մտցնել և այլն։ Գրուածքը դուրս է եկել խառն, անորոշ և անյաջող, իսկ իբրև ծանր—անժամանակակից։

Կոմեդեան խաղալու համար անյարմար է, որովհետև իւր մէջ քիչ գործողութիւններ է պարունակում. ալ կազմած երկայն չարունակող զրոյցներից։ Նորա մի քանի մասերը, զորօրինակ առաջին և երկրորդ արարածներից եթէ կարդացուեն, կարող են զւարճութիւն պատճառել լսողներին։

Իբրև օրինակ փոքր ի չատէ յաջողած տեղերի բերեմ հետևեալը։ Աղքատ, չոր կարող Նատօն ցուրտ սենեակում, կարում է և ասում.

Տրկլուր ու բորիկ նըստած
Գիշեր ցերեկ դիփ կարէ.
Խան կուշտ փուրով, խան քաղցած
Բախտ, թէ զահրումար է։
Կըտուր փէտ էլ չ'ունենաս
Վ.ուր մէ բուխարը վառես
Կըշտին կանգնես ու տաքնաս
Նուր մէկանց նըստես, կարես։
Մատներս մեկտում է
Ցըրտեմէն չեմ կանացի
Աղուամը թիլ անցկացնի
Կոսիս օմքին բոթում է։
Վ.ուր ասողն տակն իմ ծրնի
(երես 77)։

Բայց աւելի չատ է անհամ և պարզամիտ ոտանաւորների թիւը։ Տեսէք, ինչ տեսակ է Գրիգորի փեսացու Վ.անեանցը ծանօթացնում մեզ իւր հետ

Երբ մայրս ինձ տուաւ կեանք
Ինքն եղաւ անչունչ դիակ
Չը տեսայ մօրս զգանք
Ես զաւակ նորա միակ
Ցանկուհի գոնեիկ դալեակ

Մի խրճթի մէջ գիւղական
Սնուց զիս տարի հնգեակ
Հեռու տնից հայրական,
Որ գտնուում էր Կարին
Կոչվում այժմ Էրզերում
Ինչ տաճիկք քաղաքն առին...
(եր. 59)։

Չ'ունէի ես աղգական
Ծերունի կրօնական
Եղաւ խնամակալ մանկան
Նորա դաստիարակիչ... (եր. 60)։
Հայրիկն երբ անցաւ Ստամբուլ
Զիս որդեգիր առաքեաց
Լաղարեանցի ճեմարան,
Որ արևելեան լեզուաց
Գիտութեան է չտեմարան
Ուր ետ երկար վեց ամաց
Անցայ համալսարան։
Եւ ետ աւարտման ուսման
Գնացի արտասահման։
Ուր արուեստ և գիտութիւն
Նոյն իսկ մեռեալ բնութեան
Տուել կեանք գեղեցկութիւն
Որպէս է շղթան Ալպեան
Որ մարդկային հմտութեան
Թագն և պսակն է դափնեայ (եր. 62)

Աղուէսեանց փաստաբանը հիւրասենեակից դուրս գալով, խօսում է ինքն իրան հետևեալը.

Pardon, ցանցանք քրէական
Ո՛չ, ոչ, ես որպէս փաստաբան
Կամիմ լինել նորա պաշտպան
Որպէս հմուտ իրաւագէտ
Քննել դործը կէտ առ կէտ
Թէ ցանցաւոր կամ թէ արդար
Միայն լինի մեծ гонораръ
И дѣло въ шляпѣ
La donna e mobile

Ահա Դրիզորի տանը ժողոված (նշանդրէքի առիթով) երիտասարդ հիւրերի մէջ տեղի ունեցած մի խօսակցութեան կտորը.

Պէքրոսէանց.

Արդէն կան փայլուն աստղեր
Նայեցէք աջ ու ահեակ
Ունինք ազգային դալեակ
Շաբաթաթերթ «Արձագանք»
Որ տալ սնունդ մեզ և կեանք։

Աղուէսեանց.

Եւ ձեր անխոնջն «Մշակ»
Որ կրէ կարմիր դրօշակ...
«Նոր թարմ և բարձր մտքեր»
Եւ զանազան աղանդներ...
Այո աստղեր են աստղեր։

Վանէանց.

Իսկ համեստն մեր «Մեղու»
«Կրօն, լեզու, գիտութիւն...
Դոքա են ձեր փրկութիւն»։

Կարոյեանց.

Ահա ձեզ և մխիթար
Ամենօրեայ մեր «Նոր-Դար»
Արդարութեան քարոզիչ
Ամեն անոտեաց խզիչ, և այլն
(երես 154—155)։

Մի տեղ ստանաւորի է ենթարկել հեղինակը և օտար լեզուով խօսակցութիւնը.

Վանէանց.

Օրիորդ խոնարհ ծառայ

Պէքրոսէանց.

Մենք միասին camarade

Աղուէսեանց.

Счастью своему я радъ

Մայիս.

Радуетесь не впопадъ

Աղուէսեանց.

Красавица, почемъ знать

Գուշնաչեանց.
Ինչու էք տխուր գունատ
Մաշուշ.
Մայմուն, մածանծուր, խեցատ
(երես 157)։

Շաչինկան Վանեանցին կորցնելուց յետոյ խելքը կորցնում է և Օֆելիայի նման երգում է. յետոյ երևում է բեմ. «ղլխաբաց, ղերիալի կոճակները բաց, հերարձակ կամարի տակ երևում է Շաչինկան, ձեռքին՝ փունջ, գեղեցիկ թարմ ծաղիկներից։ Դանդաղ քայլերով հիւրասենեակից անցնում է դահլիճը...» (երես 166)։

Ոհ սարսափելի տխուր տեսարան։

Այս օրինակները բաւական ենք համարում։

Մեր ձանձանչները թոյլ և անհամ գրածք է, զուրկ բեմական արժանաւորութիւնից, նա չէ հարբուցացնում մեր գրականութիւնը և կը մնայ իբրև օրինակ մեծ և ապարդիւն աշխատանքի։

Ա. Քլ.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

1) ԱԼԻՇԱՆ, Հ. ՂԵՒՈՆԴ, միաբան Մխիթարեան։ — «ԱՅՐԱՐԱՏ» բնաշխարհ Հայաստանեայց։ Վենետիկ, Ս. Ղազար, տպ. Մխիթ. միաբանութեան, գինն է 40 ռուբլի։

2) ԼԻՕ։—«ԱՐՆԱԳԻՆ», Թիֆլիս, տպարան Տ. Նազարեանի. գինն է 7 կոպէկ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ՍՏԷՆԼԷՑ՝ ԷՄԻՆԻ ՄԱՍԻՆ։

«Մթնախոժոր Աֆրիկայում». Ուղեւորումը, աղատումը և նահանջը Լմին-փաշայի, երկու հատոր, 140 նկարներով, երեք մեծ քարտէզներով. 1890 թ., Լոնդոն։

«Մթնախոժոր Աֆրիկայում»—ահա վերնագիրը Ստենլէյի նոր և այնքան մեծ անհամբերութեամբ ամենքից սպասուած գրուածքի վերնագիրը՝ իւր արշաւանքի մասին դէպի ալրեցեալ գօտին։ Այդ խօսքը լիշեցնում են Ստենլէյի մի ուրիշ գրքի մասին, տիեզերահռչակ «Մութ. աշխարհի միջով» գիրքը, որը կայծակի փայլով լոյս գցեց մինչ այժմ մարդկութեան դեռ անծանօթ երկիրները։ Հիացումն և ոգեւորութիւնը այն զգացումներն էին, որոնցով լցուում էին Ստենլէյի գրքի ընթերցողները։ Նաև այժմ ամեն մարդ, ով կը թերթի Աֆրիկայի մեծ հետախուզի այս նոր արձանագրութիւնները, չի կարող ծածկել իւր զարմացումը։

Այն առաջին անգամ Ստենլէյ հետազօտել էր Կոնգօ գետի ընթացքը և յայտնի է, որ դորա շնորհիւն է, որ Եւրոպան իւր ուշքը դարձրեց այդ գետի ողողած ընդարձակ երկիրների վերայ, որոնք Բերլինի Կոնգօ-կոնֆերենցի առարկան եղան և նրանցից կազմուած է այն Կոնգոյեան պետութիւնը, որի թագաւորը առաջարկեց Բելգիայի այժմեայ թագաւոր Լէօպօլդին, որ և է ցայսօր [1])։ Այժմ Ստենլէյ հետազօտում է կենդրոնական Աֆրիկայի անտառը, Լուանեակ-լերան և Նեղոսի ամենաարևմտեան աղբիւրների գիւտը։

Բայց ահա մի հանգամանք։ Դէպի մեծ հետազօտողն ունեցած համակրութիւնը այս անգամ անհամեմատ աւելի լուռ է անցնում, քան այդ առաջ էր. և դորա միակ պատճառը քաղաքական հակառակութիւններն են։ Կարծում էին, թէ Ստենլէյի միակ նպատակը՝ մարդասիրականն էր՝ [2]) ա-

---

[1]) Համեմատէք Փաղաք. Տեսութիւն «Մուրճ» № 7.

[2]) Էմին փաշան նահանգապետն էր, այրեցեալ գօտիի մի նահանգի, Եգիպտոսի խեդիւից նշանակուած։ Բայց մահդիականները, որոնց շարժումը յայտնի է, կորե-

գաստումը Էմին փաշայի, որին իւր կառավարութիւնը թողել էր անօգնական իւր մի բուռն ստորադրեալներով։

Այսպէս էին մտածում ամենքը, երբ Ստենլէյի արշաւազունդը կորաւ խամրուժալի անտառներում չորս տարի առաջ։ Բայց այդ ժամանակից դէսը փաստերը լայտնի եղան, որոնք այդ մարդասիրական նպատակի յետեւից ենթադրել էին տալիս քաղաքական նպատակներ։ Յայտնի եղաւ, որ Ստենլէյն աշխատում է բրիտանական Արեւելա-աֆրիկական ընկերութեան օգտին, հակառակ գերմանական չահերին և ձգտումներին։ Եւ բացի դրանից՝ Ստենլէյ և Էմին փաշա հեռացան իրարից որպէս սխերիմ թշնամիներ,—մի հանգամանք, որ ահագին իրարանցում պատճառեց Եւրոպայի հասարակական կարծիքի մէջ։

Երկու հերոսների թշնամանքը սկսել էր. դեռ նախ քան նոքա հասել էին գերմանական Արեւելեան-Աֆրիկայի ափը։ Այժմ լայտնւում է, որ երկու հերոսների քաղաքական հակառակութիւնից աւելի նոցա անձնական հակակրութիւնն է, որը վերջնական բաժանման պատճառ դառաւ։

Գանք այժմ այն բանին, թէ ինչպէս է ներկայացնում մեզ Էմին փաշային Ստենլէյ։ Իւր նամակի մէջ պ. Վ. Մակինոնի՝ին, որը լառաջաբանի տեղն է բռնում իւր գրքի մէջ, Ստենլէյ լայտնում է. «Ինչ որ այս գրքում հաղորդւում է Էմին փաշայի մասին, մեր իդէալի բարձր գաղափարին, (Էմինի մասին), որպէս ես լոյս ունիմ, բնաւին չի վնասում։ Եթէ խակութիւնը մի փոքր տարբերւում էլ է այդ իդէալից, այդ նորա (Էմինի) մէջը չէ։ Քանի որ նորա ժարդիկը նրան հաւատարիմ էին մնացել, նա լեռ չէր կանգնած այդ իդէալից. երբ նորա զինուորները ապստամբեցին, դորանով դադարեց նորա ընդունակութիւնը իբր կառավարիչ, բոլորովին ինչպէս մի վարպետ ատաղձագործ, որը ունի բոլոր հարկաւոր գործիքները՝ փայտի լաւ բաներ չինելու, բայց որը առանց գործիքի՝ ոչինչ չի կարող չինել։ Եթէ փաշան չունի այն հակական կազմուածքը, ինչպէս մենք առաջ ընդունել էինք, դորա համար նա չի կարող պատասխանատու լինել, որպէս նաև այն բանի համար, որ նա բոլորովին չունի զինուորականի արատները։ Եթէ փաշան կարողացաւ հինգ տարի շարունակ իւր պրովինցիան (նահանգը) պաշտպանելու, ուրեմն նա չի կարող պատասխանատու լինել այն խելացնորութեան և ապստամբական էպիզոդիայի համար, որոնք նորա

ցին յարաբերութիւնները այդ նահանգի և Եգիպտոսի մէջ. Էմին փաշան իւր խումբ զօրքով մնաց տարիներ շարունակ շրջապատուած թշնամիներով։ Ոչ մի լուր չը կար նորանից տարիներ շարունակ։ Ամբողջ Եւրոպան համակուեց ցաւով նորա վիճակի մասին։ Եգիպտոսի կառավարութիւնը նորան թողեց իւր բաղդին։ Վերջապէս Ստենլէյ, չորս տարի առաջ, Ճանապարհ ընկաւ գնալու նորան ազատելու համար, որպէս իւր առաջին Ճանապարհորդութիւնով նա նպատակ էր դրել գտնել վաղուց իւր մասին այլ ևս լուր չը առող հաշակաւոր Լիվինգստոնի՝ին, որին նա լրջոք և գտաւ, բայց արդէն վախճանուած։

մինչ այժմ հաւատարիմ զինուորներից՝ ապստամբներ դարձրին։ Այս գրքի մէջ դուք երկու տեղ կը գտնէք, որ փաշան երկու անգամ էլ ամենախիստ անաչառութեամբ նկարագրած է։ Նորա դժբաղդ դէպքերը նաև գացնում են մեր բարձր լարզանքը նորա մասին, թէև մենք համաձայն չենք նորա ոգեորող զգացմունքի հետ դէպի ապստամբ դառած անարժան սուլթանները։ Իբր վարչութեան պաշտօնեայ. նա ցոյց է տուել ամենագեղեցիկ յատկութիւններ՝ նա արդարամիտ էր, տակտով, հաւատարիմ և մեղմ և սիրում էր քրիստոնեներին, որոնք իրանց դրել էին նորա պաշտպանութեան ներքոյ և թէ որքան մեծ լարզանք ունէին դէպի նա նորա զինուորները դրա ամենալաւ ապացոյցը այն փաստն է, որ նա իւր կենդանութեան համար պարտական է այն համբաւին, որ նա վաստակել էր իւր արդարամտութիւնով և մեղմութիւնով։ Կարճ ասած, իւրաքանչիւր ժամ, որ նա խլում էր քնից, մինչ իւր պաշտօնապուրկ լինելը, նվիրած էր որև է օգտակար նպատակին, որը կարող էր նորա տեղեկութիւնները հարստացնել, մարդկութեան դրութիւն լաւացնել և քաղաքակրթութեան համար նոր ասպարէզ նաճել։ Դուք չը պիտի մոռանաք և այդ նաև այն ժամանակ չը պիտի աչքաթող անէք, երբ դուք կարդաք, թէ ինչ տպաւորութիւններ մենք նորանից ստացանք»։

Եւ որոնք են այդ տպաւորութիւնները։ Սկսենք քաղաքականից։

Ստանլէյի հրեք առաջարկութիւնները Էմին փաշային։

Ստանլէյի առաջին հանդիպումը Էմինի հետ կատարուեց 1888 թ. ապրիլի 29-ին Ալբերտ-լճի ափին։ «Երեկոյեան 8 ժամին», գրում է Ստանլէյ, «ընդհանուր մեծ ուրախութեան ցոյցերի և հրացանաձիգ ողջոյնների ներքոյ Էմին փաշան քալեց դէպի բանակը, ուղեկից ունենալով կապիտան Կազատի՛ին, պր. Թեֆիքօն՛ին և իւր օֆիցերներից մէկին։ Նա նոցա բոլորին ձեռք թափ տուի և հարցրի թէ, որն է Էմին փաշան։ Այդ ժամանակ մի քիչ փոքրիկ, քնքոյշ մարդ, որը ակնոց ունէր հագին, գրաւեց իմ ուշադրութիւնը իւր՝ զեղեցիկ անդլերէն արտասանած խօսքերով՝ Նա ձեզ, պարոն Ստանլէյ հազար շնորհակալութիւն եմ պարտական, և ճշմարիտ չը գիտեմ, թէ ինչպէս ես այն արտայայտեմ։

Ահ, Դուք Էմին փաշան էք։ Շնորհակալութեան մասին մի փչեցէք, այլ առաջ եկէք և նստեցէք։ Դուրսը այնպէս մութն է, որ մենք իրար չենք կարողանում տեսնել. «Մենք նստած էինք չադրի մուտքի առջև, մի մոմի ճրագ լուսաւորում էր տեսարանը։ Նա սպասել էի թէ կը տեսնեմ մի մեծ, լղար մարմին զինուորական տեսքով հնացած եղիպտական նշանագեստով, բայց դրա տեղ ես տեսայ մի փոքրիկ, թոյլ ֆիգուր մի լաւ պատուած ֆէսով և հագին՝ մի մաքուր, զեղեցիկ ատթոյած և հիանալի նստած ձիւնի պէս փայլուն բամբակագործ զգեստ։ Մի մթին, սպիտակախառն միրուք չրջանակել էր ունգարական տիպարի երեսը, թէև ակնոցը նրան

տալիս էր լաւ մարմնական յատկութիւն և խաղաղ հոգի։ Կապիտան Կաղատի, ընդհակառակը, թէև աւելի ջալիլ, բայց տեսքով ճնշած էր հոգսերից, դարդոտ և ծեր էր երևում։ Նա ևս մաքուր բամբակակտաւեայ հագուստով էր և նմանապէս եգիպտական ֆէս ունէր հագին։

«Մեր երկու ժամուայ խօսակցութեան մեծ մասը կազմեցին մեր ճանապարհորդութեան դէպքերի, կարճ նկարագրութիւնները, դէպքերը Եւրոպայում, այրեցեալ գօտիի պրօլինցներում եղած միջնադէպքերը, որպէս նաև անձնական գործերը, որից յետ մենք խցահան արինք հինգ չիշ չամպայնիա, որ մի պարգև էր իմ բարեկամ Գրեսհոֆֆի՝ Սաենլէյ-պօօլում և խմեցինք Էմին փաշայի և կապիտան Կաղատի'ի երկարատև կենացը։ Յետոյ մենք ուղեկցեցինք հասարակութիւնը դէպի նաւակը, որը նա չոգենաւից յետ էր բերել»։

Հետեւեալ օրը Սաենլէյ հետեւեալ նկատողութիւնը արաւ իւր վիճակագրանում։

«Դր. Իւնկէր և Դր. Ֆելկին մանաւանդ իրանց հրատարակութիւններով գրաֆիկ թերթի յունուարի 1887 թ. համարներում մեզ ապասել էին ուած, որ Էմին փաշան մի ջղային, կարօտող, մեծամարմին մարդ կը լինի բոլը 1,8 մետր. իսկապէս նա սակայն 1,7 մետրից բարձր չէ։ Ես լիշում եմ, որ Դր. Իւնկէրը շատ էր վախենում, որ թէ իւր բարեկամի (Էմինի) համար պատրաստած բրիւկը բաւականին երկար են նստած նորա ոտների մէջ։ Բայց 15 սանտիմետր պէտք է կտրէին, մինչև որ նա հագին գար։ Էմինը պատմեց ինձ, թէ 48 տարեկան է։ Նորա տեսքը ճանաչել չի տալիս այդ հասակը. նորա մերուքը մութ է, գրեթէ սև է, և նրա չարժունութիւնը աւելի կը սազէր 30 կամ 35 տարեկան մարդու։

Սաենլէյ չանձնել էր նրան խեդիւի բարձր հրամանը և Նուբար փաշայի նամակները և այդպիսով նա արել էր նրան առաջին առաջարկութիւնը։ Եգիպտոսի խեդիւը ինչպէս յայտնի է, Էմինին և նորա գլխաւորներին ընտրութիւն էր թողել կամ վերադառնալ Եգիպտոս կամ իրանց պատասխանատուութեամբ մնալ Էքուատորիալում։ Սաենլէյ կը ցանկար որ վճիռը ձեռայ լինէր, որովհետև ապրիլի 30 թուով նա յայտնում է.

«Ես կարծում էի, թէ մենք թերևս երկու չաբաթ կը սպասենք և յետոյ ամենքս միասին ճանապարհ կը ընկնենք դէպի Պլատօն, որ Ռենդուսումպում մի յարմար տեղ դրաւենք, ուր ես, երբ նորա կատարեալ ապահովութեան և յարմարութեան համար բոլոր նախապատրաստութիւնները տեսնած կը լինին, նորան կը թողնէի և ինքս կը վերադառնալի նորա յետեւի գունդի օգնութեան համար։ Երբ մենք վերստին կը միանալինք, մի քանի օրից յետ կարող կը լինէինք ճանապարհ ընկնել դէպի Զանզիբար։ Բայց փաշան զարմանալի կերպով է վարում։ Երբ ես նրան առաջարկում եմ վերադառնալ դէպի ծովը, նա սովորաբար մատները բախում է ծնկան և ժպտում է մի ձեւով, իբր թէ ուզում լինի ասել՝ «Մենք

այդ խօսք կը տեսնենք»։ Ահնլայանի է, որ նրան ծանր է թւում իւր գիւղը կորցնել մի երկրում, ուր նա փոխարքայական իշխանութիւն է բանացրել։

Խօսելով գնալու կամ չգնալու նպատակայարմարութեան մասին, Սանելէի կարծիքով Էմին'ին բաւական էր միայն հարցնել իւր մարդկանցից ով է ուզում իրան հետևել և ով ուզում է մնալ։ Նա խորը համոզած էր, թէ Էմինը իւր զօրախմբերի վերայ բանեցնում է մի անսահման իշխանութիւն, և, ինչպէս երևում է, բոլորովին չէր սպասում, թէ Սանելէի գալովը՝ պրօւինցիայում ներքին դժբարութիւններ կարող էին ծագել։

«Այդ ճիշդ է», պատասխանեց այն ժամանակ փաշան, «բայց ընդունենք, որ իմ մարդիկը ինձ չընջատեն և զօռով ինձ չգնա պահեն»? Ի վերջոյ լսանեց Էմինը՝ «Եթէ մարդիկս կ'երթան, ես էլ կ'երթամ. եթէ նոքա կը մնան, ես էլ կը մնամ»։

Միմիայն երբ Էմինը այդ լսանեց, Սանելէ հաղորդեց նրան երկու ուրիշ առաջարկութիւններ լսնուն կուսակցութիւնների, որոնք ուրախութեամբ կ'ընդունէին Էմինի ծառայութիւնները։ Խեդիւի առաջարկութեան հետ միասին, Սանելէ իւր դրքում այսպէս է ամփոփում բոլոր երեքը։

«Թոյլ տուէք ինձ կրկնել։ Առաջին առաջարկութիւնը ընդունելով, Դուք կը շարունակէք մնալ մի հնազանդ գինուոր և Դուք ինձ կ'ուղեկցէք Եգիպտոս։ Հանելով տեղը, Դուք, Ձեր օֆիցերները և գինուորները կը ստանաք սահմանուած ռոճիկը մինչ այդ օրը։ Թէ կառավարութիւնը Ձեզ կրկին կը պահի գործոն ծառայութեան մէջ, չը գիտեմ, բայց ես կարծում եմ, որ այդպէս կը լինի, որովհետև Ձեզ նման օֆիցերներ սուղ են, և Եգիպտոսը ունի սահմաններ, ուր այն ծառայութիւնները, որ Դուք կարող էք անել, դեռ կ'ունենան։ Ի պատասխանի այդ առաջարկութեան Դուք ասում էք սակայն, թէ Դուք համոզուած էք, որ Ձեր մարդիկը այստեղից հեռանալ չեն ուզում և որ Դուք, եթէ նոքա այդ լսատարարութիւնը անեն, նոցա մօտ կը մնաք։

Դէ այժմ իմ երկրորդ առաջարկութիւնը գալիս է Լէօպոլդից՝ Բելգիացիների թագաւորից։ Նա ինձ խնդրել է Ձեզ լսանելու, որ, Լքատորի պրօւինցները կրկին բարբարոսութեան մէջ ընկղմելու դէմ առնելու համար, և ենթադրելով, որ այդ պրօւինցները բաւականաչափ էկոնոմաներ ասն, Կօնգոյի պետութեանը դուցէ կարողանայ նոցա պրօւինցների կառավարութիւնը իւր վերայ ընդունել, եթէ միայն այդ կարելի է անել 10.000-ից մինչ 12.000 ֆունտ ստերլինգով [1]) տարեկան և լեռոյ, որ Նորին Մեծութիւն Լէօպոլդ թագաւորը, կարծելով որ այդ տեսակ պարապմունք Ձեր անձնական հակման համապատասխան կը լինի, ցանկութիւն ունի Ձեզ մի բաւարար ռոճիկ—1.500 ֆունտ ստերլինգ—իրը

---

[1]) Մէ ֆունտ ստերլինգը կուսասը է մօտ 10 ռուբլի ոսկու։

զենքալի աստիճանով նահանգապետի վճարել։ Ձեր պարտականութիւնը կը կայանայ նորանում, որ Նեղոսի և Կոնգո գետերի հաղորդակցութիւնները բաց պահէք և հոգս քաշէք օրէնքի և կարգ ու կանոնի համար Էքւաթորիան պրօվինցներում։

«Իմ երրորդ առաջարկութիւնը այս է. եթէ Դուք համոզուած էք, թէ Ձեր մարդիկը դրականապէս կը հրաժարուեն ընդունել Խեդիվի առաջարկութիւնը՝ Եգիպտոս վերադառնալ, այն ժամանակ ուղեկցեցէք լենտ Ձեզ հատատարիմ մնացած զինուորներով Վիկտորիա-Նիանսա լճի հիւսիս-արևելեան անկիւնը և թոյլ տուէք, որ ես Ձեզ այնտեղ հաստատեմ լանուն Անգլիական-Արևելեան-Աֆրիկական Ընկերութեան։ Մենք, Ձեզ կ'օգնենք մի ֆորտ (փոքր բերդ) կառուցանելու մի այդպիսի ընկերութեան նպատակներին լարմար տեղում, Ձեզ կը թողնենք մեր նաւը և այլ ապրանքներ, որ Ձեզ հարկաւոր կը լինի, լետոյ մենք կը վերադառնանք Մատամերկրի միջով դէպի Անգլիա և հանդամանքը կը ներկայացնենք Արևելա-Աֆրիկական Ընկերութեան, որ ձեռք բերենք նորա ընդունելութիւնը այս քայլի համար և նորա պատրաստակամութիւնը՝ Ձեզ երկարատև Աֆրիկայում պահելու համար։ Ես պէտք է Ձեզ լայտարարեմ, որ ես լանձնարարած չեմ այս վերջին առաջարկութիւնը Ձեզ անելու, այլ նա բղխում է իմ բարի կամքից դէպի Ձեզ և լուրջ յանկութիւնից՝ Ձեզ ազատելու այն հետևանքներից եթէ Դուք վճռէք այստեղ մնալ։ Ես համոզուած եմ, որ ես ձեռք կը բերեմ Ընկերութեան որոնց հաւանութիւնը և գործակցութիւնը և որ նա Ձեր մի կամ երկու լաւ վարժուած բատալիոնների արժէքը որպէս նաև Ձեզ նման կառավարչի ծառայութիւնները պատրաստակամութեամբ կ'ընդունի»։

Թէ Ստենլէյի կարծիքը Բելգիացոց թագաւորի առաջարկութեան մասին ինչ էր, երևում է այս տողերից։

«Բայց ով կը լինի այնքան գոնեկիխոտական, որ չահագիտական հալեցաք դցի այս պրօվինցների վերայ։ Բելգիացոց թագաւորը? Նուն, նորա առաջարկութեանը մի այնպիսի պայման է կցուած, այն է՝ եթէ պրօվինցները բաւականաչափ եկամուտներ կարողանան տալ։ Այդ դործում Դուք կարող էք ամենից լաւ պատմել, թէ արդեօք 10,000—12.000 ֆունտ ստերլինդը բաւական են այդ պրօվինցների կառավարութեան համար։ Այդ եկամուտները, որքան էլ մեծ լինին նոքա, պէտք է այդ գումարի հետ միասին բաւեն, որ այստեղից մինչ Խամբուժա, ուրեմն 1000 կիլոմետր տարածութեան վերայ 20 կայարաններ, որ ասել է թէ 1.200 զինուոր, 50 կամ 60 օֆիցեր և նոցա գլխին կանգնած մի կառավարիչ պահեն, նրանց արի զինելու և պաշտպանելու միջոցները և ստեղծելու մի այնպիսի տրանսպորտի դունդ, որը կարողանար ամենահեռաւոր կէտերը Կոնգոի հետ միացնելու։

Լմին փաշայի պատասխանը, Ստենլէյի ասելով, հետևեալն էր այդ առաջարկութիւնների նկատմամբ։

«Դէհ, ինչ վերաբերում է Ձեր առաջարկին առաջարկութեան (Եգիպտոս վերադառնալու մասին), ես արդէն տուի պատասխանը։

«Ինչ կը վերաբերի երկրորդին (Բելգիացոց թագաւորի առաջարկութեան), ես կ'ուզէի նկատել, որ ես ամենից առաջ պարտականութիւններ ունեմ Եգիպտոսի դիմաց։ Քանի որ ես այստեղ եմ, այս պրօւինցները պատկանում են Եգիպտոսին, և նոքա մնում են նորա սեպհականութիւնը, մինչ իմ այստեղից դնալը։ Երբ ես այստեղից դուրս կ'երթամ, նոքա (այդ պրօւինցները) կը դառնան «ոչ ոքի երկիր»։ Ես չեմ կարող իմ դրօշակը այդ ձևով ջնջել և կարմիրը կապտի հետ փոխել։ Առաջին (կարմիր՝ Եգիպտոսին) ես 20 տարուց աւելի է որ ծառայում եմ, երկրորդին (կապտը՝ Կոնգոյի սեպհականութիւնը) ես երբէք տեսած չեմ։ Բայի դորանից ես կ'ուզէի հարցնել Ձեզ, թէ Դուք Ձեր նոր փորձառութիւններով հաւանական էք կարծում արդեօք, թէ հաղորդակցութիւնը (Նեղոսի և Կոնգո գետերի մէջ) խելացի ծախսերով կարելի է արդեօք պահպանել թէ ոչ։

«Ակզբում ի հարկէ ոչ (պատասխանում է Ստենլէյ)։ Մեր փորձառութիւնները շատ են զարհուրելի եղած, որ այդքան շուտով մոռանալ կարողանալի, բայց մենք, ինչպէս ես ոպատում եմ, լեռների զօրքերի պաշտպանութեան ներքոյ, աւելի քիչ դժուարութիւններով կը հասնենք Խամբուժա։ Պիոնէրը [1]) պէտք է ամենից շատ տակայ։ Մեր ոսկորածից ձեռք բերած օգուտը միշտ նոքա կ'ունենան, որոնք մեզնից լեռով կը գան»։

«Կարելի է, ասայ Լիմինը, բայց առ պակասը երկու տարի կ'անցնի, մինչև որ մենք սեղեկութիւններ ստանանք։ Ոչ, իմ բոլոր երախտաւոր շնորհակալութեան հետ հանգերձ Նորին Մեծ. թագաւոր Լէօպոլդին, ես չեմ կարծում, թէ կարող եմ այդ առաջարկութիւնը ընդունել. թող ուրիշ արիմն դալ վերջին առաջարկութեան։

«Ես չեմ կարծում, թէ իմ մարդիկը հակառակեն լինէ մինչև Վիկտորիա-Նեանսա ուղեկցելու, որովհետև նոցա ընդդիմադրութիւնը, որքան ես դիտեմ, վերաբերում է Եգիպտոս գնալուն։ Ենթադրելով, որ իմ մարդիկը պատրաստ կը լինեն, ես հիանում եմ այդ առաջարկութիւնը (Անգլիական-Արևելա-Աֆրիկական ընկերութեան ծառայութեան մէջ մնալ)։ այդ ամենալաւ և ամենախելացի լուծումը կը լինէր դժուարութեան։ Որովհետև, մտածեցէք, որ իմ պաշտպանութեան ներքոյ գտնուած 800 հոգուց երեք քառորդը կանայք են, երեխաներ են ջալիլ ստուկներ. ինչ կ'ուզէր (Եգիպտական) կառավարութիւնը այդ ամբոխի հետ անել? յանձն կ'առնի արդեօք նոցա կերակրել? Եւ լեռով մտածեցէք, որքան դժուար է ճանապարհը անօդնական մարդկանց մի այդպիսի զօրքի համար։ Ես չեմ կարող ինձ վերայ առնել պատասխանատուութիւնը՝ քնքշատան արարածների մի այդպիսի բազմութիւն առաջնորդելու, որ նոքա ճանապարհին մեռնեն։

---

[1]) Առաջին սկսողը։

ճանապարհորդութիւնը Վիկտորիա-Նիանսա կարելի է. նա համեմատապէս կարճ է։ Այո, վերջին աստիճանը ամենաընդունելին է»։

«Մենք չտապալուս ոչինչ չ'ունինք», պատասխանեց Ստենլէյ. «որովհետև Դուք պէտք է սպասէք Ձեր վտանի զօրքին։ Կշռեցէք գործը, մինչև որ ես մայրին կ'երթամ ու կը բերեմ։ Դուք չամենայն դէպս մի քանի ամիսներ Ձեր առջևն ունիք, որ հանգամանքի մասին լաւ խորհէք։

Յետոյ մարդկանց մօտ դնալուց առաջ, Ստենլէյի գանգատումէ հետևեալի վերայ.

«Այսօր ես մի խօսակցութիւն ես ունեցայ Էմին փաշայի հետ, որից ես այս համոզումը կազմեցի, որ մենք ոչ միայն կրկին Ալբերտ-Նիանսա պէտք է երթանք, այլ նաև վտանգ դեռ երկու ամիս պէտք է սպասենք, մինչև որ նա իւր մարդկանց ժողովել կարողանայ։ Փոխանակ որ մեր բացակայութեան միջոցին նա գործին կպչէ, իւր մարդիկն հաւաքել ու գնալու համար պատրաստել, նա ուզում է սպասել, մինչև որ վտանի խումբով վերադառնամ, որից վտ, որպէս նա ասում ունի, ես պէտք է մինչև դեֆիլէն գնամ, որ նորա մարդկանց համոզեմ ինձ հետևելու։ Նա դեռ համոզած է, որ իւր գունդերը չեն կամենում Եգիպտոս գնալ, բայց որ նոցա կարելի է համոզել մինչ Վիկտորիա-Նիանսա գնալ»։

Ստենլէյ գնաց ու վերադարձաւ Ալբերտ-լիճը։ Բայց արդէն երկու բատալիոնները վճռել էին չը հետևել Էմինին, եթէ սա ուզենայ անգլիական Ընկերութեան ծառայութեան մէջ մնալ։ Մնայ, որ ցանկացողների հետ միասին վերադառնան Զանզիբար։

Բայց հենց այդտեղ է, որ տարաձայնութիւնները սկսում են Ստենլէյի և Էմինի մէջ։

ՍՏԵՆԼԷՅԻ ԵՒ ԷՄԻՆԻ ԹԻՒԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Զը նայած որ իւր գրքի առաջաբանում Ստենլէյ յայտնել էր թէ

«ինչ որ այս գրքում հաղորդած է Էմին փաշայի մասին, մեր խղճալի բարձր դաղափարին, որպէս ես ըստեր ունիմ, բնաւին չի վնասում»։

Բայց խորապէս վնասում է, որպէս ընթերցողը կարող է ինքը տեսնել։ Ահա այն հրաժեշտը, որ տալիս է ազատածներին։

«Դէհ, հիմա ես կ'ուզի մի բոպէ խօսել։ Ինչ որ իմ ուղեկիցները և ես գիտենք, մենք հաստատ համոզած ենք, որ ինչ էլ մարդիկ կարողանային ասել նախանձից, չարակամութիւնից և խանդոտութիւնից, նոյն իսկ զատարանի առջև վկաների խաչով-աւետարանով կատարած վկայութիւնը մեզ վերաբերեալ ուրիշ ոչինչ հետևանք չի ունենալ, քան դեռ աւելի լայնատարած խոտոտանութիւն և գնահատութիւն այն զոհաբերութիւնների և ծառայութիւնների, որ մենք կամովին և առանց վարձատրութեան գործադրել ենք՝ Էմին փաշային, Կապիտան Կարամ'ին և նոցա մի երկու հարիւր ու-

զեկիցներին օգնելու համար։ Փող, ժամանակ, տարիներ, ուժ, առողջութիւն, կեանք, ամէն բան սեպհական կամքով, բարեկամաբար և անձնուիրաբար, առանց մարի անեղամ վարձատրութեան մասին, որը, ինչ էլ լինէր՝ ամենին չէր կարող կորցրածի վարձատրութիւն համարուել։ Մի մարդու համար, որպիսին ես եմ, ինչ բան են խնդրները։ Մի հացի կտոր, մի կտոր միս և մի թաս թէյ՝ ուսնաճաշ է մի մարդու համար, որը 23 տարուայ մեծ մասում այնքան միջոց չի ունեցած, որ ամէն օր մի շիլինգ [1]) արժողութեամբ ճաշ ուտի։ Ընդունելութեան ուսնախմբութիւններ? Սոքա իսկ և իսկ այն պատիւներն են, որոնցից ես փախչել կ'ուզէի, որովհետև ես վատ հրեատոր եմ կարծում ինձ, և քնութիւնը ինձ չի օժանել հակումով՝ ճառախօսութիւնների մէջ հաճոյք գտնել։ Նքանչաններ? Ես սոցա չեմ կարող կրել վերաս և նոյն իսկ նոցա վերայ նայելու հաճոյքը ինձ թոլատրուած չէ՝ իմ մշտական բացակայութեանս պատճառով։ Հապա էլ ինչ։ Ոչինչ։ Ոչ մի պատիւ և վարձատրութիւն, որքան էլ մեծ լինի սա, չի կարող հաւասարուել այն նուրբ բաւականութեան, որ մարդս զգում է, երբ նա կարող է ցոյց տալ իւր գործի վերայ և ասել՝ Տես, այն գործը, որ ես բոլոր հաւատարմութեամբ և չիսակութեամբ, ուժով և զօրութեամբ, իմ բոլոր ընդունակութիւններով և Աստուծու կամքով կամեցայ կատարել՝ այսօր վերջացած է։ Ասա, լաւ և ճիշդ է չինուած։ «Նբ երբ գործատէրը այն ժամանակ խոստովանուում է, որ նա լաւ և ճիշդ է չինած, կարող է արդիւք մի աւելի մեծ վարձատրութիւն լինել, քան սեպհական ներքին ձայնը? [2])։

Առաւօտը (Բաղամօյ'ում պատահած դժբաղդ դէպքից յետոյ) ես այցելութիւն արեցի Էմին փաշային, որին ես դտայ մեծ անհանգստութեան և ցաւերի մէջ։

—Դէհ, փաշա, ասացի ես, լոյս ունիմ որ Գուք կարելիութիւն չէք թոյլ տալիս, թէ ապտեղ կարող էք մնանել, այնպէս չէ։

—Օ, ոչ! Իմ ցաւս այնքան մեծ չէ, պատասխանեց նա և տատանեց գլուխը։

—«Իմ տեսածիս համեմատ ես նոյն կարծիքին եմ։ Գանգը կտրած մարդը չէր կարող գլուխը այդ ձևով թափ տալ [3])։ Մնաք բարով! Գօքտոր Պարկէ Զեղ մօտ կը մնայ, մինչև որ Գուք նորան կ'արձակէք. ես լոյս ու-

---

[1]) 50 կոպէկ ոսկի։

[2]) Վերադառնալով Գերմանական-Արևելեան-Աֆրիկան, Բաղամօյ'ում, մի խընձոյքի ժամանակ դժբաղդութիւն պատահեց Էմին փաշայի հետ՝ կարձատես լինելով նա անզգուշաբար վայր ընկաւ տան պատուհանից և դլխին ծանր վէրքեր ստացաւ։ Եւրոպան այդ լուրը, որպէս հանկարծալի է, մեծ ցաւով ընդունեց։

[3]) Փաշան, արդէն բոլորովին առողջացած, մարտին սոյն 1890 թ. հասաւ Զանզիբար։

Խմբ.

նեմ, թէ ամեն օր նորանից լաւ լուրեր կը ստանամ։ Ցեսուլ մենք իրար ձեռք սեղմեցինք և ես հեռացայ։

Տարօրինակ կը թուայ, բայց ճիշդ է։ Էմին փաշան, որը, քանի որ Աֆրիկայի խորքերումն էր, կոսմոպոլիտական (ընդհանուր մարդկութեան՝ առանց ազգ ու ցեղի խտրութեան) ոգով տոգորուած էր, և երևում էր ազատ կարծիքների տէր, մի քանի օրում բոլորովին ուրիշ մարդ դառաւ։ Դեռ Բագամօյօ հասնելուց մի օր առաջ ես նրան ասել էի «Կարճ ժամանակում, փաշա, Դուք Ձեր հայրենակիցների [1]) մէջ կը լինէք. բայց երբէք չը մոռանաք, երբ Դուք նոցա մէջ լինելու հպարտութիւնը և ուրախութիւնը կ'ըղդաք, լիշել, որ Անգլիացիք էին, որոնք կարօտութեան ժամանակ առաջինը Ձեր աղաղակները լսեցին և որ անգլիական փողն է այս ջափլ մարդկանց կարողութիւն տուել Ձեզ պահպանելու Խարտումից [2])։

«Երբէք այդ բանից մի վախենաք», պատասխանեց փաշան։

Դր. Պարկէ, որպէս լսում եմ, շատ անբաւականութիւններ է կրել։ Բայց երբ վերջապէս ինքն էլ հիւանդացաւ, կեանքի վտանգով նա տարուել է Զանզիբար՝ ֆրանսիական հիւանդանոցը, ուր նա նոյնքան անլուսալի դրութեան մէջ պառկած է մնացել, որպէս Էմին փաշան դժբաղդ անկումից յետոյ։ Բարեբաղդաբար նա կրկին առողջացաւ իւր ծանր հիւանդութիւնից, որ նա ստացել էր իւր բժշկութեան միջոցին փաշայի բանակում։

Երբ Բագամօյօ'ից աւելի ու աւելի անբաւարար լուրեր էին տալիս, ես վերջապէս ուղարկեցի նորա մօտ իմ վրանի ծառայ Սալի'ին, որը իւր այցելութիւնից փաշայի մօտ վերադարձաւ այս յայտարարութիւնով, թէ նրան սպառնացել են սպանել, եթէ նա երբ և իցէ կրկին Բագամօյն գալու լինի։ Այդ օրից ես երբէք այլ ես Էմին փաշայից մի պատգամաւորութիւն կամ տեղեկութիւն չեմ ընդունած։

Երբ ես գրում էի գրքիս վերջին գլուխը, յայտնի եղաւ, որ Էմին փաշան մտել է Գերմանական-Արևելա-Աֆրիկական Ընկերութեան ծառայութեան մէջ։ Այն համոզմունքը, որ նա այդպէս կը վարուի, լենք թելադրել էր նրան վիշեցնել, որ անգլիական փողն է, որը կարելիութիւն է

---

[1]) Էմին փաշան ծագումով Գերմանացի է։

[2]) Խարտումը Սուդանի մայրաքաղաքն է. այդտեղ է, ուր անգլիացի՝ Գէնէրալ Գորդոն փաշան, իւր հերոսական կռի ժամանակ Մահդիի դէմ, շրջապատուց մահդիստներից և երկարամեայ ընդդիմադրութիւնից յետոյ, անօդնական մնալով, 1883 թուին թշնամիների ձեռքն ընկաւ և իւր զօրքի հետ հերոսական մահը գտաւ։ Այդ ժամանակից այլ ևս Եգիպտոսը կորցրեց Սուդանը, որը հետ միասին նաև աւելի հարաւային պրովինցիաները, ուր Էմին փաշան էր նշանակած իբր կուսակալ, որը շրջապատուած մնայ մինչ Սանդրէյ օգնութեան հասնելը։ Էմին և իւր մարդկանց սպառում էր անկասկած՝ անձնատուր լինելուց յետոյ, Խարտում տարուելը և այնտեղ կամ մահ գտնելը կամ ծախուելը որպէս գերիներ։ Խմբ.

է տալ մեր արշաւախմբին չասպել ու նորա ազատութեան համար օգնութեան հասնել։ Որ նա ի վերջոյ զերազանց է աւելի Գերմանիային ծառայել, քան Անգլիային, բոլորովին բնական է երևում, և չը նայած դորան՝ այդ լուրը զարմացրեց նորա ամենաջերմ և ամենաանչահանդիպ բարեկամներին, որոնց թւում մենք կարող ենք մեզ ևս հաշուել։

Արտաքին գործերի մինիստրութիւնից մեր ձեռքը հասցրած պատճէններից և նամակներից, որոնք վերաբերում են Էմին փաշային և մեր արշաւանքի նպատակներին, դուսնում է նաև մի գրութեան պատճէն, ուր ասած է, թէ Էմինը ինքը գիտել է պր. Զոյն Կիրկ'ին և առաջարկել, որ իւր պրօւինցը Անգլիային կը տայ, դեռ ևս երբ նա Խեդիւից թոյլատրութիւն չէր ստացած՝ այն թողնել։ Այդ նամակի հրատարակութիւնը նորան չատ բարկացրել է, որովհետև այդ գրութիւնը ներփակում է իւր մէջ մեղադրանք, թէ նա ջանում է գաւառանալու շահերը այն է կառավարութեան, որին նա իբր թէ այնքան հաւատարմութեամբ ծառայել է։

Երբ մենք կատարեցինք մեր միասին հաւատարմութեամբ և ամենուշադրութեամբ ու լարդանքով, քանի որ խնդիրը վերաբերում էր մի կարեւոր պրօւինցի կուսակալին և ամեն բարեկամութիւնով և քնքոյշ խնամքով նորա և իւր ընտանիքի համար՝ 2.500 կիլոմետր [1]) երկար ճանապարհորդութեան միջոցին մինչև որ նա իւր հարեւանակիցների գրկերն ընկաւ, մենք ուրեմն հիմք ունինք զարմանալու որ Բաղամայո'ի խնձոյքի ժամանակ պատահած դժբաղդութիւնը այնպէս լանկարծակի և առանց նորա կողմից ամենափոքր չնորհակալութեան վերջ տուց մեր ծանօթութեան։

Ես գիտեմ, որ ես Էմինին երեք անգամ վիրաւորեցի։ Առաջին անգամն էր ապրիլի 5-ին, (1889 թ.) երբ իմ համբերութիւնը 52 օր սպասել տալուց հետաւ, որովհետև ես նորան զատ կատարելապէս անընդունակ մի վէրս կապացնելու, մի առաջարկութիւն անելու կամ այդպիսին ինձնից ընդունելու։ Դեռ այժմ էլ այդ միտքը ինձ լուզում է։ Եթէ փաշան ունենար մի ապտակ տալու ազատ, վերջինս չատ դժուար ժամանակներ պիտի անցկացներ։ Երկրորդ, իմ զատատանը Մահամէդի կնոջ գործում [2]) նորա ցանկութեան համեմատ չէր, չը նայած որ եթէ գործը վերաբերէր իմ եղբօրը կամ իմ մի բարեբարին, ես ալլապէս չէի կարող վարուել։ Երրորդ անգամ Մտսօրա'ցումն էր, երբ Էմինը եկաւ, որ ներողութիւն խնդրի նորա գործածած մի քանի տաք խօսքերի համար, և ես դէպքից օգտուեցի՝ նրան ասել իմ կարծիքը այդ մասին։

«Ես ընդունում եմ Ձեր ներողութիւնը բայց սրտով, փաշա», ասացի

---

[1]) Կիլոմետրը հաւասար է 1.400 արշինին, այնպէս որ 2.334 վերստին։

[2]) Այդ գործի մասին խօսք կը լինի ներքև։

Խմբ.

ես, «ցոյս ունիմ սակայն, որ դուք մեզ թոյլ կը տաք մինչ ծովափը հասնելը ձեզ վերայ նայել դեռ որպէս էքւատորիական պրուինցի կուսակալի և ոչ որպէս երես տուած երեխայի վերայ։ Մենք ցաւելով ենք տեսնում, որ դուք զգայնութիւն էք ցոյց տալիս, մինչդեռ մենք չենք ուզում մոռանալ, որ դուք նա էք, որի համար մենք ամենքս պատրաստ էինք մեր կեանքը ամեն րոպէ զոհել։ Այն ձեռն ու եղանակը, ինչպէս դուք և Կազատի երեսակայական վիրաւորութիւնների համար ձեզ զգայուն էք ցոյց տալիս, մեզ համար նոր է։ Մենք չենք հասկանում, թէ ինչու ամեն մի մանր թիւրիմացութիւն մեր յարաբերութիւնների ընդհատումը պիտի հետեցնէ։ Մենք սովոր ենք եղած մեր կարծիքները ազատօրէն արտայայտել, բայց ոչ մի րոպէ անբնական զգայնութիւն սնուցանել։ Եթէ դուք այս կարողանայիք ի նկատի ունենալ, դուք կը դաք այս համոզմունքի, որ Ձեր վրանի մէջ փակուելը ոչ այլ կերպ քան աբսուրդ (անմիտ) պէտք է երևայ։

«Պարոն Ստենլէյ, ես ցաւում եմ, որ ես առհասարակ Ձեզ հետ եկել եմ, և ես Ձեզ խնդրելու եմ, երբ մենք պարոն Մակայ'ին կը հասնենք, ինձ թոյլ տալ, որ այնտեղ մնամ», պատասխանեց նա։

«Բայց ինչու, փաշա՞»։ հարցրի ես։ Ասացէք դուք ինձ՝ ինչու և ինչ էք կամենում դուք։ Ով և իցէ Ձեզ վիրաւորել է։ Ես ամեն բան դիտեմ, ինչ այս բանակում պատահում է, բայց ես խոստովանում եմ, որ ինձ անլսելի է, թէ ով և իցէ Ձեզ զիտմամբ վիրաւորած լինի։ Մինչ ամենափոքրիկ զանգիբարակոն տղան ես կարողացել եմ միայն սրտանց ցանկութիւնը տեսնել՝ Ձեզ ծառայելու։ Թոյլ տուէք ինձ, ուրեմն փաշա, Ձեզ առաջին անգամ մի քանի խօսքերով ասել, թէ ինչպէս օտարօտի թւաց մեզ Ձեր վարմունքը։ Երբ մենք մեզ կամակից առաջարկեցինք Ձեզ օգնութիւն հասցնելու, դուք մեզ համար մի հերոս էիք. դուք Գորդոն'ի վերջին տեղապահն էիք, որը ճակատագրից բռնաբարելու վտանգի մէջն էիք, որը ամենքին զարհուրեցնում էր, ով Սուդանի հետ յարաբերութիւն ունէր, և այդ պատճառով մենք վճռեցինք, մեր բոլոր ոյժերը գործադրել, որ Ձեզ ըստ երևոյթին ընդհանուր դժբաղդութիւնից ազատենք։ Մենք չը հարցրինք, թէ որ երկրում էք դուք ծնուած, Ձեզ վաղեմի կեանքի մասին հարց ու փորձ չարեցինք. մեզ համար դուք Լմինն էիք, էքւատորիական պրուինցի հերոսական կուսակալը։ Ֆելկին, Իւնկէր և ուրիշները, հակազերեվաճառական ընկերութիւնից, նամակներով և ճառերով ամենքի սրտում զարթացրել էին համակրութիւններ Լմինի՝ Գորդոնի վերջին տեղապահի համար։ Մեզ ասել էին, թէ Ձեզ հարկաւոր է միայն մի թերքներ, և այն օրից, որ ես թողի Նիւ-Իորկը այս արշաւանքի վերայ հրամանատարութիւն յանձն առնեմ, ես մի միակ մտք ունէի՝ Ձեզ հասնել՝ քանի որ ուշ չէր։ Ես Ձեզ գրեցի Զանզիբարից, թէ մենք մտադիր էինք Կոնգոյի ճանապարհով գալ և Կաւալի'ի կը գանք Ալբերտ-լճի հարաւ-արևմտեան

ծայրում, և խնդրում էի Ձեզ՝ բնիկներին նախապատրաստել մեր դալուստի համար, քանի որ դուք երկու չոգենաւ, նաւակներ կանոէներ ունէիք։ Արդ, մենք հասանք Կաւալի 1887 թ. դեկտ. 14-ին, իսկ դուք ալնտեղ հասաք միայն մարտին 1888 թ.։

Այդ բացթողութիւնը Ձեր կողմից մեզ նատեց մի քաջարի երիտասարդ անզլիացու կեանք և պատճառ եղաւ, որ մենք չորս ամիս սպասելով մնացինք։ Մենք պէտք է վերադառնալինք Բոդոֆորը և մեր նաւակում Ձեզ որոնէինք։ Յունիսացս 26 օրաւ մեր միասնակեցութեան, Դուք ոչ մի բանի համար ապահով չէիք, բացի այն, որ Դուք ցանկանում էիք սպասել մալորի և ետևի խմբի վերադարձին։ Մենք լեռ չտապեցինք, որ նոցա գտնենք, և գտանք որ մալորը մեռած և կալոնները ջարդուած է։ Երբ լունարին 1889 թ. մենք Ձեզ մօտ վերադարձանք, Դուք պաշտօնաղուրկ էիք եղած, մի անօգնական գերի էիք և վտանգի մէջ՝ Խարտում տարուելու. և այդ Դուք էիք, որը, չը նայած որ գրել էիք թէ Դուք, Կազատի և չատ եգիպտացիներ պատրաստ էիք դուրս գնալու, մեր 56 օրաւ համբերութեամբ սպասելուց լետ, էլի վճռած չէիք թէ ինչ պէտք է անէք։ Իմ հիւանդութիւնը Ձեզ էլի 28 օր ժամանակ տուց, բայց ես գտնում եմ Ձեզ դեռ էլի մի ինչ որ բանի կարօտ, որ չեմ կարողանում հասկանալ և որը Դուք չէք ուզում ասել։ Մինչ այս բոպէն մենք կորցրինք մալոր Բարտելօտ'ին և 300 մարդկային չունչ. մենք այստեղ ենք, որ մեր գլուխը վեր դնենք, եթէ այդ հարկաւոր լինի։ Ինչ կարող ենք մենք Ձեզ համար աւելին անել։ Դրեցէք մի թղթի վերաւ բոլորը ինչ Դուք կամենում էք, և Դուք այն ժամանակ ինքներդ դասել կարող էք, թէ որքան մեր առածները լոկ դատարկ խօսքեր են։

Այդ բոպէից մինչ այն ժամը, երբ, ես դեկտեմ. 6-ին հիւանդանոցում հրաժեշտ տալ, ոչինչ չէր պատահել, ինչ կարողանար մեր ախորժալի յարաբերութիւնները պղտորել։ Բայց մի դժուարութիւն կար, որը ինձ մտատանջում էր և այդ այն էր, որ Էմինին օգնութիւն հասցնելու մասնաժողովին գրելիք նամակների մէջ ես չէի կարող իմ զարմանքը չը լայտնել այն արտակարգ ատատանման մասին որով որոշուում էր Էմին փաշալի վարմունքը։ Մեզ համար չատ ախորժալի կը լինէր, եթէ մենք կարողանալինք պահպանել այն մտապատրանքները, որոնցով մենք դուրս եկանք Անգլիայից։ Ինչ որ պատահեց Կաւալի'ում, արշաւախմբի ամեն մի օֆիցեր տեսաւ. և մի ծածուկ բոպէում այն դիմակը, որի տակ բարեկամութիւնը կ'աշխատէր ծածկել փաշալի արատաւորութիւնները, անպատճառ կ'ընկնէր։ Այդ պատճառով անհրաժեշտ էր, որ ճշմարտութիւնը որքան կարելի է բարեկամաբար ասէր, որպէս զի, ինչ և եղրակացնէին կրիտիկոսները, մեզ ուղղած ամենամեծ չանդիմանութիւնը այն լինէր, թէ փաշալի երևացող ատատանումը հետևանք է եղած մեր չափազանցացրած սիրալիրութեան։

Բայց փաշայի վարմունքը այն բոլոր, երբ նա Բաղամօյ'ում անցաւ գերմանական հիւանդանոցը, այլ ես ինձնից խլում է իրաւունքը՝ ներկայացնել նորան սիրալիր լոյսի մէջ։ Այն անշնորհակալ վարմունքը, որին ենթարկուեց խեղճ Սալին, այն իրաւունքը, որ իմ նամակները նա գերմանացի օֆիցերների ընդհանուր տեղեկութեանը հասցրեց, որոնք ամենքը նորան խնդրում էին մտածել իւր բարի անունին և համբաւի վերայ, այն օտարոտի ապերախտութիւնը, որ նա ցոյց տուեց դր. Ցարկէ'ին, որը ամբողջ աշխարհում չը պէտք է որ մի հատ թշնամի ունենար, լարաբերութիւնների լանկարծակի և անբացատրելի ընդհատումը արչաւախմբի և բոլոր անդամների հետ, այդ բոլորը ստիպում է ինձ չը փակել ներկայ գիրքը առանց այդ բաների մասին լիչատակութիւն անելու։

Աֆրիկայում Էմին փաշան վախ լայտնեց, որ նա, եթէ Եգիպտոս վերադառնալու լինի, առանց զբաղմունքի կը մնայ։ Կէս ժամ իմ Կայիրէ (Եգիպտոսի մայրաքաղաքը) հասնելուց լետոյ, ես ինձ թոյլ տուցի խնդրելու Խեդիւին, որ նա Էմինին որքան կարելի է չուտով հանգստացնի, որ նա մի պաշտօն կը ստանայ։ Խեդիւը իսկոյն տուց իւր համաձայնութիւնը, և 36 ժամից լետոյ Էմինը հեռագրով պատասխանեց՝ «Շնորհակալութիւն, իմ բարի Տէր»։

Զորս շաբաթ լետոյ հեռագրեց նա Խեդիւին խնդրելով, որ Զանզիբարում նորա համար 400 ֆունտ ստերլինգի վարկ բացի, եգիպտական կառավարութիւնը լանձնարարեց գնդապետ Լլան Սմիթին, Զանզիբարում, որ նա այդ դումարը վճարէ Էմին փաշային, որը դորա վերայ լեռ հեռագրեց՝ «Բանի որ Դուք ինձ հետ լաւ չէք վարում, ուղարկում եմ իմ հրաժարականը»։

Որովհետև նա առաջարկել էր իւր ծառայութիւնները Անգլիային, Բրիտանական-Արևելեան-Աֆրիկական Ընկերութեան առիթ տուեց նորա առաջարկութիւններին մերձենալ, և իմ Կայիրէ եղած ժամանակ ես իմացայ, որ նորան առաջարկուած էր մի շատ շահաւէտ պաշտօն. բայց լանկարծ ամենքը զարմացած մնացին, իմանալով, որ նա իւր ծառայութիւնները առաջարկել էր Արևելեան-Աֆրիկայի Գերմանացիներին, ուր հասկանալի է, որ իւր առաջին պարտքը եղած կը լինէր իւր նոր տէրերին տեղեկացնել, թէ իւր վարչական տաղանդին ինչ մեծ արժէք կը տային Բրիտանական-Արևելա-Աֆրիկական ընկերութեան գիրեկտորները։

(Մենք բաց ենք թողնում լայորդ տողերից մի երեսաչափ, ու բերում են մի քանի փաստեր, որոնք ապացուցանում են Էմինի անշնորհակալութիւնը իւր նախկին ծառայողներին և բարեկամներին. Այդ տողերից մենք իմանում ենք նաև այն, որ եգիպտական կառավարութիւնը Էմին փաշայի օգնութիւն հասնելու համար տուած է 14.000 ֆունտ ստերլինգ և որ անգլիացի սըր Վիլլիամ Մակինոն և տորա անգլիացի բարեկամները ստորագրել էին Էմինին օգնելու գործի համար 16.000 ֆունտ ստերլինգ (մի ֆունտ ստերլ. հաւասար է 10 թղթադրամ բուրլուն։ Խմբ.)

Ստենլէյի և Էմին փաշայի մէջ պատահած երեք անախորժ մէկը այն դէպքերից, որոնց մասին լիշատակւեց վերը, մէկը Մոհամէդի կնոջ վերաբերելին է։

Այն տեսարանը, որ ստորև հաղորդում ենք, պատահեց Զանզիբար գնալուց մի փոքր առաջ, Կաւալլի՛ի բանակում։ Ստենլէյ այդ պատմում է այսպէս։

«Ապրիլի 3։ Փաշայի աչքերը կամաց-կամաց բացւում են։ Այսօր ճաշից լետոյ նա եկաւ ինձ մօտ և պատմեց, թէ նա հաւաքեց իւր տան մարդկանց—51 անձ՝ ծառաներ, պահապաններ և հրամանատար սպաներ—և հարցրել է նոցա, թէ ով է նոցանից կամենում ուղեկցել նորան ապրիլի 10-ին։ Ամենքը հրաժարւեցին, բացի չորսից։ Մնացածները ասում են, թէ դեռ ուզում են իրանց «եղբայրներին» սպասել։

Այդ չորս «հաւատարիմներից» մէկը ուզղակի լայտնել է, թէ նա գնում է միայն որ ստանայ մի փոքրիկ աղջիկ, որը կապիտան Կազատին զօրով նորանից խլել է հենց որ նա այդ ստացած կը լինի, նա կը վերադառնայ Կաւալի, որ իւր «եղբայրներին» սպասէ։

Երբ ես փաշային հարցրի, թէ ինչ իրաւունքներ ունի Կազատին այդ աղջկայ վերայ, որը շատ սև էր և հինգ տարեկան, նա ինձ պատասխանեց թէ մի քանի տարի առաջ Կազատին խոհարարուհի ճարելու համար, գիմել է այդ մարդուն։ Կինը ուղեկցել է Կազատիին մինչ Ունյորո։ Իւր ծառայութեան միջոցին Կազատի՛ի մօտ խոհարարուհին ծնում է մի երեխայ, որի հայրը լինում է մի սուդանեցի զինւոր։ Երեք տարի չարունակ երեխան մեծացաւ Կազատի՛ի տանը, ուր նա ամենքի սիրելին էր և իւր հաճելի եղելոցով և երեխայական բնաւորութիւնով ցրւում էր միայնակ մարդու ձանձրոյթը։ Երբ քրոջ մարդուն դուրս քշեցին Ունյորո՛ից և վերադարձաւ Էքուատորիական պրովինցը, նա պահանջեց իւր կնոջ և երեխային, բայց միևնոյն ժամանակ հրաժարւում էր իւր հայրութիւնից, իսկ Կազատին մերժում էր երեխան նրան լանձնել։ Եւ մինչ այժմ նա լամառութեամբ մերժել է։

Փաշան կարծում էր, որ կարելի է թէ այդ զինւորը զուր դիտաւորութիւններ ունի Կազատի՛ի դէմ. նա գանգատւեց նաև, որ Կազատին հիւանդոտ հակումներ ունի դէպի իւր ծառաները։ Ինքը փաշան, արամազիր չէ իւր հեղինակութիւնը բանեցնել Կազատի՛ի դէմ, որը շատ տարիներ իւր հիւրը և հաւատարիմ բարեկամն է եղած, բայց ցաւում է, որ Կազատին չի ընդունում իւր խորհուրդը.

Այն խօսակցութիւնը տեղի ունեցաւ երեկոյեան $5^1/_2$ և $6^1/_2$ ժամին։

Երբ մի ժամ լետոյ, լուսնեակ երեկոյեան ես իմ վրանից դուրս մի զբօսանք էի կատարում, լսեցի ես մի կատաղի, հայհոյական և հաստ ձայն, որը արաբական լեզուով անէծքներ էր արտալայտում, և այդ բարձր, տաք

և վիշտներով հարուստ ձայնի մէջ լաճախ լսում էր իմ և փաշայի անունները և սրաչ խօսքեր՝ «Հերիք, հերիք, հերիք»! Յետոյ լսեցի ուրիշ ձայներ, որոնք հանդստացնող եղանակով կանչում էին՝ «Ի սէր մարգարէի», «Փառք ինչ համբերութիւն»!, «Զարհուրիր քո բարկութիւնը» և նման խօսքեր մինչև որ խոկն դուրանից վեր հնչեց փաշայի խորը և ուժեղ ձայնը՝ «Այդ ինչ է։ Հանգիստ, ես հրամայում եմ ձեզ՝ հանգիստ! Լաւ, գնացէք այնտեղ և ասացէք պարոն Սանելէվին, նորա վրանը հեռու չէ։ Գնացէք»։

Կարճ միջոց վետոյ ինձ վերայ զարձակուց մի ինչ որ մարդ՝ Մոհամմէդ էֆենդի, որ մաշինիստ էր՝ մի սպիտակադէմ ոչ ոգեղ եգիպտացի, իւր վետևից մի մեծ բազմութիւն և վրայ ուեց մի՝ նախանձով ասստիկ ներկած և կատաղի ու դառն դանգատներով լիքը մի պատմութիւն։ Նա պատմեց, թէ իւր աբեսինիացի մօր Ֆերիպալի մահից վետ նա թոյլ էր տուել իւր կնոջը, որի հետ Խարտում քաղաքում նա օրինաւոր կերպով ամուսնացել էր, որ նա երեխայի դայեակը դառնայ։ Այդ եղել է 30 ամիս առաջ։ Սկզբում իւր կինը ժամանակ է դտնում եղել ոչ միայն երեխայի այլ և իւր դիմաց իւր պարտականութիւնները կատարել, բայց որ վերջին վեց ամսում նա, իւր կինը օտարացած է իրանից և որ ամեն անգամ, երբ իրար հետ պատահել են՝ իրան անիծում է եղել։ Վերջին 24 ժամում նա աւելի քան տասն անգամ նորա մօտ է ուղարկել, բայց նա իւր ուղարկած մարդկանց աւելի արհամարհական խօսքերով վետ է ուղարկել, միթէ դա արդարութիւն է, չը կայ արդեօք արդարադատութիւն իւր համար։

«Իմ բարեկամ Մահամմէդ», պատասխանեցի ես նրան, «ես հշմարիտ որ իրաւունք չ'ունիմ այդպիսի փափուկ հարցեր վճռելու։ Եղել էք փաշայի մօտ, խնդրել էք նորան, որ նա փորձէ իւր հեղինակութիւնը բանեցնել։ Քանի որ Ձեր կինը նորա մօտ դայեակ է, ուրեմն նրան պէտք է դիմէք և ոչ թէ ինձ»։

«Դուք գնացէք նորա մօտ»! պատասխանեց Մոհամմէդը, «ինչու ես պէտք է գնամ։ Ոչ, եթէ Դուք ինձ արդար դատաստան չ'անէք ես կամ ինձ, կամ իմ կնոջ կամ փաշային կը սպանեմ։ Դոցանից մէկն ու մէկը ես անպատճառ կ'անեմ։

Բարձր ձայնով, այնպէս որ ամբողջ բանակը նորա սպառնալիքները կարող էին լսել, նա դեռ շարունակում էր գոռալ։

Հազիւ ես դադարեցի այդ բանի վերայ զարմանալու, ներս մտաւ իմ վրանը սպիտակ հագնուած մի կին։

—Էդ ով է, հարցրի ես։

—Մոհամմէդ էֆենդի'ի կինը։

—Ի սէր Աստուծոյ, ինչու էք հենց այդտեղ գալիս։

—Դուք պէտք է նաև իմ պատմութիւնը լսէք, քանի որ լսեցիք Մոհամմէդին, պատասխանեց նա։

—Փաշայից թոյլտուութիւն ստացել էք, որ ինձ մօտ գաք։

թոլությունը ստանալուց յետ պր. Ժեֆսոն և դոքտոր Պարկէ նորան իմ վրանն էին բերել։

—Դէ հիմա խօսիր, իմ ականջները բաց են։

Գեղեցկուհին ծունկ չոքեց և մի սպիտակ երեսպէ ներկայացրեց մի մոմով լուսաւորած վրանիս ամենամութ անկիւնում. վրանս լցւում էր Շիրազի և Սամարկանդի օծանելիքի մի նուրբ անուշահոտութիւնով, դուրեկան ձայնը խօսում էր մի այնպիսի մաքուր և որոշ արաբերէն, որ ինձ թւում էր թէ ամեն մի խօսք հասկանում էի։ Ցաւնուշորա օր կեանք վարել մի այնպիսի ձայնի հետ ինձ մի արաբական գիտնական կը չինէր։

Գեղեցկուհու պատմութիւնը այն էր, թէ նա ատելով ատում է իւր մարդուն, նա մի անասուն է. նա չատ է ստոր, որ արժանի լինի իւր սիրոյն։ Նա նորան յափշտակել էր, հաղուստները պատառոտել, նորան ծեծել էր, մի անգամ էլ կիսով նորա գլուխը պատուել էր։ Ոչ, երբէք նա այլ ևս չի ուզում այդ մարդու հետ գործ ունենալ, ոչ, երբէք, երբէք, և այլն։

—Վերջացրիք դուք ձեր պատմութիւնը։

—Այո։

—Սերուբ, հրամայեցէ՛ ես, այս կնոջ յետ տար փաշայի մօտ։

Մի քանի րոպէից յետ եկաւ վրանս փաշան և խնդրեց մի խօսակցութիւն ունենալ հետս։ Նա պատմեց, թէ այդ կինը, իւր մարդու թոլությամբ դատել է նորա փոքրիկ աղջկայ գալակը, որի համար նա ստացել է հարուստ վարձատրութիւն չորի կտորներով. բայց հապա՝ այդ բաները նորա ձեռքն են ընկել, գալիս է մարդը, այդ բոլորը յետ է խլում և նորան անպատիւ կերպով ծեծում։ Կնոջ խնդիրքով նա, փաշան, իւր պաշտպանութեան ներքոյ է առնում նորան, մինչև անգամ հակառակ իւր մարդուն։ Վերջինիս ոչինչ ընդդիմութիւն չի եղել և իւր կատաղի նախանձի մասին ինքը, փաշան, ոչինչ իմացած չի լինում մինչև որ այս երեկոյ լսեց Մոհամէդի կատաղի ձայնը, որը նորան հայհոյում էր և սպառնում՝ սպանել։ Այդ պատճառով նա, փաշան դիմում է իմ պաշտպանութեանը, որովհետև այդ գժուած տղան իւր կատաղութեան մէջ կարող է մէկին սպանել։

—Կամենում էք այդ գործը ինձ յանձնել, փաշա, հարցրի ես։

—Անկասկած.

—Լաւ։ Ես Ձեզ խնդրում եմ, որ Դուք Ձեր բնակարանը վերադառնաք. նորա ամեն մի մուտքի առջև պէտք է մի մի պահապան կանգնած լինի, և ես երաշխաւորում եմ սան բոլորի ապահովութեան համար։ Ես կը կանչեմ մօտս Մոհամէդին և համբերութեամբ կը լսեմ նորա պատմութիւնը, և յետոյ ես, մինչև Ձեր դուռն մտնելը, Ձեզ կ'իմացանեմ, թէ ինչ կերպ վճռեցինք գործը։

Երբ փաշան գնաց, ես կանչել տվի Մոհամէդին։

Նա պատմեց, որ նա իւր կնոջ թոյլատուութիւն տալուց չեմ՝ Ֆերիդային որպէս դպրեակ ծառայել, ինքը դիտաւորութիւն չի ունեցել նորան կրկին իւրել իւր կնոջ ծառայութիւններից. նա միայն ցանկանում է, որ իւր կինը իրան երբէմն, երբէմն ուղեղէ և իւր ամուսնական պարտաւորութիւնները մատչելի ցոյց տայ։

—Եթէ Դուք Ձեզ մի քանի հասարակ պայմաններ ընդունէք, ես իմ կարելին կ՚անեմ, որ Ձեր կնիկը կրկին խելքի գայ. բայց անհրաժեշտ է, որ Դուք էգուց վաղ առաւօտ փաշայի տանը ինձ հետ պատահէք և նորանից ներողութիւն խնդրէք Ձեր այս երեկոյեան սարսափելի տաքութեան համար։ Ոչ, ինձ մի ընդհատէք, չարունակեցի ես, Դուք Ձեր բարեկամ Դոքտոր Վիտա Հասանից, Բասիլի Էֆենդիից և ուրիշներից միայն խրախուսած էք եղել Ձեր կոպիտ վարմունքի համար. Այժմ հանգիստ Ձեր տունը գնացէք և զսպեցէք Ձեզ աւելորդ խօսքերից։ Էգուց վաղ առաւօտը մենք կը տեսնուենք։

Այդ երեկոյ Վաղելայ՚ից պօստ հասաւ նամակներով, որոնք լուր բերին, թէ ամենամեծ անկարգութիւններ և չփոթութիւններ են տիրում այդ կայարանում։

4-ն Ապրիլի։ Ժամը 8-ին ես գնացի փաշայի տունը և հաղորդեցի նրան, որ կը ցանկայի Մոհամմէդին նորա մօտ կանչել։ Երբ նորա թոյլտուութիւնը այդ մասին ստացայ, մարդը ներկայացաւ և ներողութիւն խնդրեց ամենահպատակ եղանակով, թէն նոցա նեղացած դէմքը ցոյց էր տալիս, թէ զղջումը կեղծ է։ Այդ ժամանակ ես նրան ասացի, թէ իմ ներկայութեամբ նա պիտի փաշային ասէ, թէ ինչ պայմաններով նա ցանկութիւն ունի, որ իւր կինը չարունակէ իւր աղջկայ դպրեակը մնալ. դորա վերայ նա չպատասխանեց, թէ կամենում է, որ իւր կինը պէտք է Ֆերիդային ծառայէ առաւօտեան առաջին ժամից մինչ երեկոյ քնելու ժամանակ, ահա բոլորը։ Դորանով դոհ մնաց փաշան, բայց ես աւելցրի.

«Միայն հետեւեալ պայմաններով, Մոհամէդ, ես իմ համաձայնութիւնը կը տամ. 1) Ձեր կինը պէտք է Ֆերիդային ցերեկը սպասաւորէ. 2) Ձեր կինը պէտք է, արևը մայր մտնելիս, Ձեր տունը վերադառնայ. 3) Ձեր կինը չը պէտք է ծեծի կամ վիրաւորի. Ձեր կնոջ անձնական կարողութիւնը պէտք է փաշայի մօտ մնայ. 5) Դուք պէտք է Ձեր կնոջ ճանապարհին պաշտպանէք, պահպանէք և բանակը պալուց չես նրան թոյլ տալ, որ Ֆերիդային տեսնէ. 6) Դուք չը պէտք է Ձեր կնոջ ցերեկը ծանրաբեռնէք և չարչարէք Ձեր պահանջներով, բացի երբ հիւանդանաք. 7) Փաշան պէտք է Ձեր կնոջ ծառայութիւնների համար նորան կերակրէ և հագցնէ, որպէս նաև հոգայ, որ ճանապարհ գնալիս նորան տանեն։

Թէ փաշան և թէ Մոհամէդը դորա հետ համաձայն էին։

Յետոյ կինը կանչեց և փաշան թարգմանեց նրան բառ առ բառ վերը գրած պայմանները։ Լսելու միջոցին նա երեսի վրայից քաշեց սպի-

տակ մուսելինը. ուրիշ մեծ գեղեցկութեան բացակայութիւնից նա թուց չառ գեղեցիկ և շատ նուրբ, ունէր հրաշալի մեծ սև աչքեր և մի գրակա-նապէս գեղեցիկ կարիեան գեղեցկութիւն։ Ցունը լցուց նորա անբիծ ոսկեգոյն մուսելինի գերիալի անուշահոտութիւնով, որի տակ նա մի կար-միրագոյն շալիկ ունէր հագած։ Աֆրիկալի վայրենիներում նա չեմ տեսած մի արարած, որը նրան դէթ մօտաւորապէս հաւասարէր։

Երբ նրան թարգմանեցին պալմանները, նա արձակեց մի ուժեղ «Երբէք, երբէք, ոչ, երբէք!», որպէս նաև առաջ վիշտպարանութիւն Մո-համէդի դէմ, որը ծիծաղելի, բարկացած և նախանձոտ երևաց։

—Վերցրէք նորան Ձեզ հետ, Մոհամէդ, դիմեցի ես սրան։

Մարդը նրան հրամայեց իւր հետ տուն գնալ, բայց նա հրամանին չէր լսում։

Կրկին իւր ձեռքերը մեկնեց Մոհամէդը դէպի նա, բայց նա դարձ-ցած նոցա վատ մղեց։ «Երբէք, երբէք, ոչ, երբէք!», գոչեց նա վայրենա-բար, գեղեցիկ նազելի աչքերից բարկութեան հրացայտեր արձակելով։

—Հրամայեցէք նրան, խնդրեմ, փաշա, որ նա գնայ։

Փաշան կրկնեց հրամանը իւր սովորական խորը ձայնով, բայց կինը մնաց անշարժ կանգնած։

—Դուք տեսնում էք, նա չի ուզում, ասաց փաշան։

—Իմ սիրելի փաշա, ասացի ես, մենք մի այդպիսի տեսարան տես-նելու պատրաստ էինք։ Բայց չը նայած իւր կամակորութեան, նա պէտք է գնայ իւր մարդու հետ, և մենք ցանկանում ենք, որ ինչ էլ որ պատահի զգուշ լինենք, որ իւր մարդը նորան չը խփէ։ Խնդրում եմ, որ կրկին հրամայէք, որ նա ուղեկցէ իւր մարդուն, թէ չէ մենք կը տանենք նորան իւր տունը։

Փաշան այդ կատարեց, և մի վայրենաչափ տատանումից վատ, որի միջոցին կինը երևի չափեց երկու կողմերի կամքի ուժը, նա դուրս եկաւ, տանելով իւր հետ քաջցը անուշահոտութիւնը։

«Դուք էլ հետևեցէք, Մոհամէդ։ Բայց եթէ Դուք նորան թէկուզ փեսաս լով էլ խփելու լինէք, նա Ձեզ օտար կը մնայ, մինչև որ Կայրոյ հասնէք։ Թողէք որ նա Ձեզ չարունակ լուսանքներ տայ, թէկուզ էլ նա դադրածութիւնից ուշաթափութեան մէջ ընկնի։ Ձեզ նման մարդը քամուց կը վախենայ? Երեք կամ չորս օր հետը զգուշ եղէք, և նա—կարող էք հանգիստ կենալ—նա կը փախչի։

Տարբերութիւն Մոհամէդը կրկին վերադարձաւ, վախեցած, թէ իւր կինը բռնուած է՝ դեռ և որ նորան անկարելի է կառավարել, պատա-ռատում է իւր շորերը և չանդուրժում երեսը, կարծես ուզենալով իւր գե-ղեցկութիւնը առ միշտ փչացնել։

—Հենց բոլորովին, այն, ինչ մենք սպասում էինք, Մոհամէդ։ Գնացէք տուն և կապեցէք նորա ձեռքերը բարեկիներից մէջքին, Մոհամէդ։ Կատարեցէք այս հաւատացած մարդու ժպիտով և հանդուրժոց խոսքերով, Մոհամէդ։ Ես

չեմ ճանաչում ոչ մի օրէնք, որ Ձեզ արգելէ այդ անելու, Մոհամէդ։ Նա Ձեր օրինականկինն է, Մոհամէդ։ Բայց չը խրիչք նորան, որովհետև եթէ այդպէս վարուէք, Դուք անասուն կը լինէք։

Մարդը հեռացաւ և կապեց կատաղի գեղեցկութիւնը գործնական եղանակով։ Յետոյ նա բղաւեց և աղիողորմ կերպով ողբաց մի կէս ժամ, և հարևանների կանայք մօտ եկան որ նրան մխիթարեն և խնդրեն, որ վերջապէս հնազանդ լինի իւր տիրոջ, որը խակուն հեղ և բարեկամական կը դառնայ, եթէ նա ցոյց տայ իւր հնազանդութիւնը։ «Այդ նորա չափից դուրս մեծ սիրուցն է դէպի քեզ», ասում էին նոքա «որ նա այնքան կատաղի է և բարկացած քեզ վերայ։ Եթէ միայն դու խելօք լինես, նա քո հնազանդ ստրուկը կը դառնայ»։ Խելօք կանայք։

Բայց ըստ իս նոցա ամենքի խորհուրդը և միջանկեալ խորամանկ առաջարկութիւնները, ըստ իս, այնքան չը ներգործեցին նորա կատաղի տեմպերամենտի հանգստացնելու վերայ, ինչպէս կապկելը, որը հպարտ կնոջ բոլորովին անօգնական դարձրին արհամարհող ամուսնու դիմաց։

Ժամը 3-ին կէսօրից յետոյ նա, այդ կիները, ուղարկեց ինձ մի աղերսալի դեսպանութիւն, որ ես առիթ տամ իրան կրկին աղաչելու, բայց ես նրան խստօրէն ասել տուի, որ նորա ձայնը ոչ մի ոյժ և նորա դեղեցկութիւնը՝ ոչ մի հրապուրանք չունի ինձ համար և որ նա պէտք է խնդրէ իւր ամուսնուն։ Այդ պատճառով նա դիմեց Մոհամէդին և հեղաբարոյ աղերսից իւր տիրոջ, որ նա զնայ և խնդրէ. կապանքները նրան ցաւ էին պատճառում և թէ նա ապաղաչում նրան հպատակօրէն կը հնազանդի։

Եկաւ Մոհամէդը մօտս լաղթութիւնից և երջանկութիւնից փայլող դիմագծերով, ապատւած նորան ազեղացնող նախանձի ակօսներից, որ խնդրէ իւր կնոջ ապատութեան համար։ Ես այդ թոյլ տուի նրան այս խորհուրդը տալով, իւր սէրը վիմարութեան չը հասցնէ. մի քանի օր թող հրամայողական եղանակով վարուի հետը և խստիւ հեռու պահէ կնոջից, թէ չէ սա կրկին առաջանը կը դառնայ.

Կինը այնուհետև թոյլատուութիւն տացաւ, որ փաշայի մօտ չարունակէ իւր ծառայութիւնը և ինքնակամ կերպով երեկոյեան վերադարձաւ իւր մարդու տունը։ Յուսանք, որ ապագայում խաղաղութիւնը կը տարածի իւր թեները խանդարուած գերդաստան վերայ։ Ամէն»։

Այդ է Մոհամէդի կնոջ պատմութիւնը, որի պատճառով Էմին փաշան, Ստենլէյի ասելով իրան վիրաւորուած էր համարում Ստենլէյից։ Նեղացած լինելու երեք պատճառներից մէկը այդ է։

Սարանով վերջացնում է Ստենլէյ իւր մեղադրանքները Էմին փաշայի նկատմամբ։ Բայց իւր գրքում նա աչխատում է նաև ցոյց տալ Էմինի լոյս կողմերը։ Եթէ «Մուրճ»-ի երեսները կը ներեն, մենք կը վերադառնանք այդ խնդրին մի այլ անգամ։

Ստենլէյի ներկայ գիրքը նորա առաջաւոր գրուածներից էլ գերազանց է համարուում։

ՋԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Վենետիկի անուան հետ կապված են անթիվ պատմական լիշողութիւններ։ Այստեղ է եղել սոսկալի հասարակապետութիւնը իւր գօժերով ու տասի խորհրդով, այստեղ է սպանուել տարաբաղդ Մարինո Ֆալիերին, այստեղ է ծաղկել հռչակաւոր Տիցիանի և Պաւլոս Վերոնացու գպրոցը, այստեղ են մասամբ կատարւում Շեքսպիրի «Օթելլօի» և «Վենետիկի վաճառական»-ի գործողութիւնները, այստեղ ապրել են մի շարք նշանաւոր գործիչներ. Սարպի, Ջօրդանօ Բրունօ, Ժան Ժակ Ռուսսօ, Բայրոնը... Բայց հասարակ տուրիստը, որ չէ սիրում թափանցել պատմութեան խորքերը, մօտենալով այդ քաղաքին, ամենից առաջ միտն է ձգում նորա օտարոտի կերպարանքը, որ լուզել էր իւր հետաքրքրութիւնը դեռ ուսումնարանի նստարանից։ Եւ իրաւի, ինչ կարող է լինել օտարական ճանապարհորդի համար աւելի հետաքրքրական քան հարիւրաւոր կամուրջներով միացած կղզիների վերայ կանգնած մի քաղաք, որտեղ կանալները (ջրանցքները) ծառայում են փողոցների տեղ և նաւակները՝ կառքերի տեղ։

Ես հասայ Վենետիկ գիշերուայ կէսին։ Վօկզալից դուրս եկայ թէ չէ, տեսնում եմ առ ջես... ջրի փողոց՝ վրան լաղմաթիւ ոն, ըստ Բայրընի սուր դիտողութեան՝ դագաղի պէս մուգ նաւակներ։ Դրանք էին համբաւաւոր գոնդոլները։ Ոչ առանց երկիւղի, բայց և ոչ առանց ներքին հաճութեան ես նստեցի այդ նաւակներից մէկը և պատուիրեցի տանել ինձ հիւրանոց։ Խորհրդաւոր լռութեան մէջ սահում էր իմ գոնդոլը դէպի անծանօթ նաւահանգիստը. ոչ մի տեղից ձայն-ծպտուն չէր լսուում։ Միայն գոնդոլիերիս չափաւոր թիավարութիւնն էր խանգարում ընդհանուր անդորրութիւնը։ Մենք մերթ անցնում էինք հնադարեան շինութիւնների առջևից՝ լայն կանալներով, մերթ այնպէս էր նեղանում ջրանցքը, որ թւում էր ահա ահա որտեղից որ է մի քար կ'ընկնի գլխիդ և տեղն ու տեղը կը սպանէ քեզ։ Մօտ կէս ժամուայ ճանճրալի պտոյտներից լետոյ՝ ես վերջապէս հասայ ցանկալի հիւրանոցը։ Գոնդոլիերս ըստ իտալական սովորութեան՝ բացի որոշեալ վարձից ստացաւ նաև անխուսափելի mancia (pourboire)։ Մի թիապէմ, քնաթաթախ աչքերով պարոն առաջնորդեց ինձ դէպի մի փոքրիկ, աննախանձելի կամ կարասիքով սենեակ։ Առանց սա-

կարկելու, լոգնած ու ջարդված ես իսկոյն պառկեցի քնելու՝ միւս օրը ուխտս կատարելու մտքով։

Առաւօտեան տասը ժամին, երբ ես նոր էի վեր կացել և կամենում էի դուրս գալ քաղաք, սենեակս մտաւ մի երիտասարդ իտալացի և ներկայանալով ինձ «Guida autorizzato», տուց ինձ իւր այցետոմսը և առաջարկեց ինձ ցոյց տալ Վենետիկի բոլոր նշանաւոր եկեղեցիներն ու շինութիւնները։

Վարձատրութեան մասին պայմանաւորուելով, մենք միասին դուրս եկանք ս. Մարկոսի հրապարակը, այցելեցինք մայր-եկեղեցին, որ հիացրեց իւր անբաւ հարստութիւններով, իւր գեղարուեստական մոզաիկներով, բառելիէֆներով և սիւներով, բայց խոստովանում եմ, ընդհանրապէս խոր տպաւորութիւն չը գործեց վրաս և պատրաստւում էինք գնալու ս. Ղազարու կղզին, երբ իմ ուղեցոյցը կանգնեց մօտից անցնող երկու մօրուքաւոր վարդապետների առաջ և ասաց ինձ, որ նրանք Մխիթարեան միաբաններից են։ Ես դիմեցի նրանց հայերէն և ծանօթանալով նրանց հետ, լսանելի ուրախութիւն։ Երիտասարդ վարդապետները եկել էին քաղաք գործի և նոյն ժամին պիտի վերադառնային ս. Ղազար. նրանք ամենայն պատրաստականութեամբ հրաւիրեցին ինձ ընկերանալ իրանց հետ և իրանց նաւակով գնալ վանքը։ Շնորհակալութեամբ ընդունելով այդ հրաւէրը, ես արձակեցի ուղեցոյցիս և նոր ծանօթներիս հետ ուղղեցի քայլերս դէպի Piazzetta, որտեղ նրանց սպասում էր մի ուրիշ վարդապետ. ծանօթացայ նորա հետ էլ. միասին նստեցինք Barca degli Armeni, ինչպէս այստեղ կոչւում է Մխիթարեանների նաւակը, և ճանապարհ ընկանք։ Ժամի մէկը կը լինէր։ Արեւը սփռել էր իւր նշոյլները կապուտակ ջրի խաղաղ մակերեսի վերայ։ Քանի հեռանում էինք ափից, այնքան աւելի գեղեցիկ կերպարանք էր ընդունում քաղաքը։ Սկզբում ես հաճութեամբ ականջ էի դնում քաղաքի շչուկին, հիանում էի արեգակի ճառագայթներով ողողուած՝ եկեղեցիների գմբէթների տեսքով, նայում էի աննկատելի կերպով փոքրացող տների վերայ, բայց երբ ափը ծածկուեց աչքիցս, և առանձին տեսարանների փոխարէն, հանդէս եկաւ ամբողջ քաղաքը որպէս մի ջրածին լուսափայլ յաւերժաշարս, ես ակամայ մտաբերեցի «Աղրիական ծովի թագուհու» մասին մի ֆրանսիացի մատենագրի ասածը. «Վենետիկը արեւի դուստր է, ոչ թէ գիշերւայ»։

Piazzetta-ից մինչև ս. Ղազար մօտ մի ժամուայ ճանապարհ է։ Զբաղուած լինելով իմ նոր ծանօթներիս հետ խօսակցութիւնով, ես չը նկատեցի, ինչպէս անցանք S. Servolo և Libo կղզիների մօտով և սթափուեցի միայն այն ժամանակ, երբ ուղեկիցներիցս մէկը մատով ցոյց տուեց ինձ կանաչազարդ ծառերի հետը երևացող վանքի գմբէթը։ Դա ս. Ղազարու կաթուղիկէն էր։ Ես անկարող եմ հաղորդել ձեզ այն երկիւղածութեան զգացմունքը, որով մօտենում էի ես հայկական գրականութեան և դիտութեան

այդ նախկին ճեմարանին։ Այստեղ է հանգչում Մխիթար Սեբաստացին, այստեղ են գործել Չամչեանները, Ինճիճեանները, Սամալները, Աւետիքեանները, Բագրատունիները, Ալպերեանները, Հիւրմեղեանները..., այստեղ է ապրում Աւարայրի սոխակը՝ ալեղարդ նահապետը՝ ժամանակիս առաջնակարգ հայ հնախօսն ու աշխարհագիրը... Մինչ ես պաշարած էի բուռն վիշտերովս, կղզին արդէն որոշակի հանդէս եկաւ։ Երեսց պարտիզում մի մարդու գլուխ՝ սպիտակ թաշկինակով ծածկած, և կրկին անհետացաւ ծառերի ետեւ։ Դա հ. Ղեւոնդ Ալիշանն ինքն էր։ Իմ ուղեկիցները ինձ բացատրեցին, որ ծերունի բանաստեղծը սիրում է զբօսնել պարտիզում, նայել ծովակի վերայ, ուղղել հալեացքը դէպի Վենետկի ջինջ երկինքը և վիշտ իւր պաշտելի հայրենիքը, որի բնութիւնն ու անցեալի փառաւորները այնքան սնուցող են եղել նորա բանաստեղծական երեւակայութեանը։ Խստակրօն վանական, ցուրտ օրերը պարտէզ դուրս գալիս, հ. Ալիշանը չը մրսելու համար բաւականանում է գլուխը ծածկելով միայն մի թեթեւ թաշկինակով։

Ոտ դնելով ս. Ղազարու կղզին, ծանօթներիս ուղեկցութեամբ ես բարձրացայ երկրորդ յարկը, անցայ կօրրիդորով և մտայ մի բաւական մեծ՝ լուսաւոր սենեակ, որի մէջ տեղը դրած էր մի քառանկիւնի սեղան՝ վրան բազմաթիւ թերթեր։ Դա միաբանութեան ընթերցարանն էր։ Որքան քաղցր էր ինձ տեսնել հայոց լրագրերի առատութիւնը, այնքան ցաւալի էր նկատել օտարազգի հրատարակութիւնների ծայրաստիճան պակասութիւնը։ Նոր չէ այն գիտողութիւնը՝ որ Մխիթարեան հայրերը, ապրելով եւրոպական մեծամեծ կենտրոններում, շատ լեա են մնում այդտեղ կատարուող մաւոր շարժումից, և ես անձամբ համոզեցի այդ տխրալի իրողութեանը։ Բացի մի երկու-երեք օտարազգի մասնագիտական հանդէսներից, ես չը տեսայ սեղանի վերայ ոչ մի փոքր ի չատ նշանաւոր եւրոպական լրագիր կամ ամսագիր։ Արդարև, անիրաւացի է պահանջելը՝ որ մի կրօնական-գիտնական միաբանութիւն ուշադրութեամբ հետեւ առօրեայ հարցերով զբաղող մամուլին, թէև դորա մէջ էլ ես տեսնում եմ մի մասն օգուտ,—բայց միանգամայն արդարացի է ասելը՝ որ մխիթարեանները, որ պարապում են ըստ մեծի մասին լեզուագիտութիւնով, պատմութիւնով, հնագիտութիւնով և առհասարակ փիլոլոգիական գիտութիւններով, ստանալին դէթ գիտութեան այդ ճիւղին վերաբերեալ բազմաթիւ հանդէսներ։ Դժբախտաբար, այդ էլ չը տեսայ ես։ Ժամանակակից գիտութիւնը և մամուլը աչքաթող անելն է մասամբ պատճառ, որ Մխիթարեանները չեն ըմբռնում կեանքը իւր բոլոր պահանջներով, չեն ցոյց տալիս քննական հայեացք երկրի վերայ և նոյն իսկ չեն հասկանում այն խնդիրների կարեւորութիւնը, որ շօշափում է մեր գրականութիւնը։ Որպէս ապացոյց ասածիս՝ մէջ կը բերեմ մի փաստ։ Երկու օր անցած, երբ ես եկել էի հրաժեշտիս ողջոյնը տալու ս. Ղազարու միաբաններին, միաբա-

նութեան լայնի ներկայացուցիչներից մէկի և տղերքս դրողի մէջ խօսք բացեց ուսուցչաց մասնաւոր դրութեան մասին։ Ցարդելի վարպետը, խօսելով «Մուրճ»-ի մասին, գտնում էր, որ այդ ամսագիրը «բան մը չէ», որովհետև չէ տալիս «ազգային» պատմութեան և լեզուագիտութեան վերաբերեալ լօգուածներ և զբաղւում է այնպիսի խնդիրներով, որոնք՝ իւր տեսակէտից, նշանակութիւն չունին հայ ընթերցողի համար։ Այդ տեսակ խնդիրներից են նորա կարծիքով պանդխտութեան և հոդատիրութեան խնդիրները։ Ես իզուր էի աշխատում հաստատել որ այդ խնդիրները ունին մեզ համար կենսական նշանակութիւն, որ մի հասարակական-գրական օրգան պարտաւոր չէ իւր էջերը լցնել չոր ու ցամաք փիլոլոգիական հետազօտութիւններով, թէև ես համոզուած եմ, որ նա ուրախութեամբ կը բանայ իւր էջերը հանրամատչելի դիտական լօգուածների համար՝ թէկուզ դրանք վերաբերուէին նոյն փիլոլոգիային,—իմ խօսակիցը, երևի քաղաքավարութիւնից, ինձ՝ հիւրիս հետ չը վիճելու համար բաւականացաւ լայնել իւր անհամաձայնութիւնը կէս հարցական, կէս կասկածական ակնարկով։ Զարմանալին այն է, որ Մխիթարեանները նոյն իսկ իրանց սիրած մասնագիտութեան մէջ եթէ ոչ անշարժ, գոնէ սահմանափակ են։ Մեր հին պատմիչների կրիտիկական ուսումնասիրութիւնը նրանց տեսակէտից հաւասար է ազգային պատի վիրաւորութեան և վայ նրան, ով չանզգնի խախտել Ագաթանգեղների և Խորենացիների աւտորիտէտը։ Մի քանի տարի սրա առաջ «Բազմավէպ»-ում սկսեց տպել գերմանացի դիտական Ա. Գուտշմիդի մի հետազօտութեան թարգմանութիւնը, բայց հէնց առաջին երեսներից խմբագրութիւնը հարկ համարեց դադարեցնել այդ գրածի տպագրութիւնը, վախենալով դրդուել իւր դէմ «հայրենասէր» ընթերցողների զայրոյթը։։ Այդ մարդկանց համար կարծիքի ազատութեան դաղափարը իրագործելի է մի միայն նեղ դաւանաբանական շրջանում. այդ շրջանից դուրս՝ նրանք իրանց զգում են կաչկանդուած և անգօր, և առանց պատճառի չէ՝ որ աւելի ազատ մտածելու տրամադիր դլուխները, ինչպէս Նորայր Բիւզանդացի և Գարագաշեան, չեն դիմանում այդ հեղձուցիչ մթնոլորտին։

Մի հէնդ բոլէ չեռոյ իմ խնդիրքով ինձ տարան հ. Դևոնդ Ալիշանի մօտ։ Նշանաւոր անձերի արտաքին տեսքի և դէմքի դծագրութեան մէջ չատերը հակուած են որոնելու նրանց հանճարի կնիքը։ Ես չեմ ժխտում, որ լայնի կապակցութիւն պիտի լինի մարդուս արտաքին կերպարանքի և նորա հոգեկան և մտաւոր դրութեան միջև, թէև ինձ թւում է, որ այդ կապակցութիւնը որոշել, դէթ դիտութեան ներկայի վիճակի մէջ, անհնարին լինելու չափ դժուար է։ Բայց և այնպէս միանդամայն բնական է որ մեզ հետաքրքրել Ալիշանների արտաքինը։ Մի նիհար միջահասակ, ալեւոր ծերունի, կոնաս գլխով, խուրշմնելով պատած լայն ճակատով, թաւ չօնքերով Դևոնդ Ալիշան։ Ուրիշ էլ ինչ կերպարանք աւելի լարմար էր նա-

հայեցին։ Նորա հայեացքը քաղցր է և խելացի, ձայնը փափուկ և ախորժելի, շարժուածքը աշխոյժ և ազնիւ, վարուղութիւնը պարզ և անարատ։

Այս առաջին հանդիպմանն՝ մեր խօսակցութիւնը, որ բնականապէս պատում էր սովորական հարց ու փորձի չուրջը, տեսց միայն մի քանի րոպէ։ Բայց հենց առաջին րոպէից ես նկատեցի այդ մարդու մի համակրելի բնաւորիւթը, որ այնքան հաղուագիւտ է մեր՝ քիչ անող բայց մեծ աղմուկ հանող գրողների մէջ։ Երբ ես իսրին չարգանքի զգացմունքով մօտեցայ համբուրելու այն ձեռը, որ այնքան աշխատել է հայկական գրականութեան համար և որի բերկրութեամբ արտասանեցի. «Ես բաղդաւոր եմ Ձեզ տեսնելու», հ. Ալիշան չփոթուեց, աչքերը լաւակը ձգեց և զգացած, ձեռքիս բռնելով, հրաւիրեց նստել։ Մի զարմանալի զուգադիպութեամբ խսկոյն մտքովս անցան «Ցուշիկք»-ի այս խօսքերը՝ որ պատանեկան հասակիս դրոշմուել էին սրտիս մէջ. «Ո՛հ զեղեցիկ են մայրի առաւօտուն ցողակաթ վարդակարմիր փնջիկքն՝ դալար ճակտի մը բոլորած. սակայն չատ աւելի պայծառ է ամօթխածութեամբ խայծեալ երեսն. և աւելի ազնիւ՝ անոր վրայ չարուած աշխատութեան կայլակները»։ Հ. Ղ. Ալիշան մարմնացած աշխատութիւն է։ Նորա բաղմահատոր գրուածները [1]), որոնք երևելի հայ բանաստեղծի և գիտնականի հռչակ են տուել հեղինակին, խղճմտաւոր և ժանրաղննին ուսումնասիրութեան արդասիք են, և չընայած իւր եռթանասնամեայ հասակին, նա չարունակում է դեռ գրել անձանձրոյթ և աննուազ եռանդով։ Բացի մեր բանասէրներին յայտնի գրուածներից, նա ունի և մի հսկայական անտիպ աշխատութիւն, որի մէջ մեղուաջան խնամքով հաւաքել է հայրենագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ տեղեկութիւններ և որին տուել է «Հայկարան» անունը։—Տեղը չէ այստեղ գին դնել Ալիշանի երկարամեայ գրական գործունէութեանը, բայց մի քանի դիտողութիւններ, կարծում ենք, աւելորդ չեն լինիլ մեր վերաբերութիւնը դէպի այդ գործունէութիւնը որոշելու համար։

Մեզանում քննադատական ոգու բացակայութիւնը ստեղծել է մի այնպիսի դրութիւն, որ որ և իցէ հեղինակի գնահատութեան մէջ ընթերցողը սովորել է որոնել կամ անպայման գովասանք կամ անընտրող կշտամբանք։ Ալիշանի մասին մինչև օրս յայտնած կարծիքները վերաբերում են «քննադատութեան» առաջին տեսակին։ Մեր լրագրութեան մէջ նորերս նրան անուանեցին և դարուս ամենամեծ հայ բանաստեղծ և մատենագիր, և հանրագէտ գիտնական և մեծ հայրենասէր...։ Հասկանալի է որ այդ բոլորը ասուած լինելով մի այնպիսի ժամանակ, երբ հասարակութիւնը պատրաստում էր արտայայտելու իւր երախտագիտութեան զգացմունքը իւր տօնելի

---

[1]) Աշխարհագրութիւն քաղաքական, Նարեկ 5 հատոր, Ցուշիկք Հայրենեաց Հայոց 2 հատոր, Նշմարք և Աշխարհք Հայաստանի, Տեղագրութիւն Եղբակայ, Շնորհալի և Պաքրատայ իւր, Սիսուան և այլն և այլն։

նահապետին, բոլշևիկան և վաղանցուկ ոգևորութեան արդիւնք էր և ոչ լրջմիտ քննութեան հետևանք։ Ցաղանդներն ու հանճարները ծնւում են, բայց շրջապատող պայմաններից է կախւած նրանց զարգանալը, թուլանալը կամ անմշակ դրութեան մէջ մնալը։ Աւելի նպաստաւոր պայմաններում կուցէ Ալիշանից մշակէր մի ճշմարիտ մեծ մատենագիր, սակայն, նրա ստացած կրթութիւնը, նրա կոչումը, նրա շրջանը արդելք են եղել նրան հանդէս գալու իւր բնական ձիրքերի ամբողջ փայլով և ամբողջ զօրութեամբ։ Կաթոլիկ ընտանիքի զաւակ, հ. Ալիշան իւր ուսումն ու դաստիարակութիւնը ստացել է Ս. Ղազարու վանքում։ Ակներև է որքան թերի և աւելին չ'ասելու համար՝ միակողմանի պիտի լինէր մի կրթութիւն, որի գլխաւոր նպատակն է եղել պատրաստել աշխարհային վայելչութիւններից հրաժարւած մի վանական, այն էլ կաթոլիկ վանական։ Որքան և մեծ լինէր Ալիշանի բնատուր բանաստեղծական հանճարը, այնու ամենայնիւ նա չէր կարող ազատ զարգանալ մի այնպիսի միջավայրում, որտեղ մարդկային եսը, անհատական հոգին տանում է անտրտունջ՝ պայմանական բարոյագիտութեան չոր ու ցամաք կանոնների հոգեսպան ծանրութիւնը։ Այդ տեսակ պայմաններում ապրող տաղանդը նման է վանդակում փակւած թռչնակի, որ դուրս թռչելու ապարդիւն փորձերից լիտոյ, հաշտւում է իւր անել վիճակի հետ։ Այդ տեսակ բանաստեղծի համար կապւած է բանաստեղծութեան անսպառ և մշանջենաւոր աղբիւրներից մէկը, աղբիւր որ ոգևորել է լոլոր ժամանակների մեծ ու փոքր տաղաչափներին։ Խօսքս սիրոյ աշխարհի մասին է։ Իւր կեանքի մեծ մասը անց կացնելով վանքում կամ դպրոցական պատերում, Ալիշանը միջոց չէ ունեցել շփւելու, ընդհարւելու հատարակութեան հետ, ծանօթանալու նրա առօրեայ հոգսերին ու մտածութիւններին, մասնակից լինելու նրան լուզող չարժումներին։ Կեանքից թարմ ապաւորութիւններ չը ստանալով, նա երկար ժամանակ չէր կարող ստեղծագործել ինքնուրոյն եղանակով և այդ պատճառով նրա զուտ բանաստեղծական գրւածները պիտի կրէին օտար ազդեցութեան դրոշմ, իսկ շատ շատերը պիտի ներկայացնէին գեղեցիկ բառախաղութիւններ, հանրորական կամ սանտիմենտական միակերպ զեղումներ՝ առանց սակայն ներքին բարձր արժանաւորութիւնների։ Ալիշանի բանաստեղծական տաղանդը չ'ունի պատմութիւն, որովհետև չէ ունեցել զարգացում։ Նրա առաջին բանաստեղծութիւնները տարբերւում են վերջիններից ոչ թէ որակութեամբ, այլ քանակութեամբ, ոչ թէ գեղագիտականութեան աստիճանով, այլ տեխնիկայի կատարելութեան աստիճանով։ Մեր աղքատիկ բանաստեղծական գրականութեան վերայ Ա-

---

[1]) Զեռնք յիշատակում Ալիշանի մանր գրւածները և թարգմանութիւնները։ Իսկ նրա հրատարակած բոլոր մեծ գրւածներից նշանաւոր են մանաւանդ «Անսիզք Անտիոքայ»։

լիշանը ունեցել է որոշ ազդեցութիւն, բայց թէ անպայման բարերար է եղել այդ ազդեցութիւնը՝ կասկածել կարելի է։ Այնքանը զոնէ պարզ է մեզ համար որ Ալիշանի հետևողները շատ անգամ մշակում են ձեր 'ի վնաս բոլանդակութեան։

Վանական կեանքը աւելի նպաստաւոր է գիտնական պարապմունքների համար, և Ալիշանը աւելի լաւ գիտնական է քան բանաստեղծ։ Եթէ նրա «Նուագների դարը» անցել է արդէն, «Սիսուանի» դարը դեռ նոր է սկսւում։ Ուզում եմ ասել որ գալոց սերունդը կը մոռանայ բանաստեղծ Ալիշանին, բայց մեղանից աւելի կը փնտրէ գիտնական Ալիշանին։ Սակայն տեսէք որ վանական կրթութիւնը խլել է այդ գիտնականից նրա անպատաւելի իրաւունքներից մէկը՝ ազատ քննադատութեան իրաւունքը։ Ալիշանի գիտնական երկասիրութիւնները թանգագին, գիտնականօրէն ստուգած տեղեկութիւնների հետ միասին ներկայացնում են զմբաստարար և այնպիսի տեղեկութիւններ, որոնք պատմական ստուգութիւն կարող են ունենալ մի միայն ծայրայեղ աւանդապահութեան տեսակէտից։ Կրօնաւորի նեղ աշխարհայեցողութիւնը թոյլ չէ տալիս նրան անպղտոր հայեացք ձգել պատմական անցեալի վերայ։

Մի Յովհան ոսկեբերան բարձր է, նրա տեսակէտից՝ Կիկերոններից և Դիմոսթենեներից, որովհետև ճշմարիտ իմաստասէր միայն քրիստոնեան կարող է լինել։ Սիրալ ըմբռնած ազդասիրութիւնը Ալիշանի թելադրում է համեմատել Եղիշէին Քանոփոնի հետ և անգամ առաջինին նախապատուութիւն տալ։ Պապական տենդենցիան մուտք է գործում Ալիշանի այնպիսի աշխատութիւնների մէջ, որոնք նրա զարմանալի էրուդեցիայի կոթողներն են համարւում։ Միստիցիզմ և սակետիզմ են շնչում նրա փիլիսոփայական տեսութիւնները, խունկի և կնդրուկի հոտ է բուրում նրա նկարած պատմական գործիչներից։

Ալիշան անտարակոյս հայրենասէր է. բայց նրա հայրենասիրութիւնը, բայի այն որ չափազանց սերտ է կապած Հռոմէական եկեղեցու գաղափարի հետ, հողատ է (безпочвенній), չ'ունի հաստատուն կուան, որովհետև նա հիմնուած է ոչ թէ ժողովրդի այժմեան գրութեան, այլ ազգի անցեալի գիշատակարանների ուսումնասիրութեան վերայ։ Կլասիկական Հայաստանի սիրահար՝ Ալիշան սիրում է իւր հայրենիքը, ինչպէս հումանիստները սիրում էին նախնական Հռոմն ու Յունաստանը։ Դասական գրոց լեզուի աշակերտ՝ Ալիշան հեշտ չէ հաշտւում աշխարհիկ լեզուով գրելու անհրաժեշտութեան հետ. Հայրենի հողից հեռու, Ալիշան միայն գրքերից և ուրիշների պատմածներից է ճանաչում իւր հայրենիքը։ Առհասարակ հասարակական ախտերի, ժողովրդի ցաւերի և պիտոյքների անծանօթ, նա չէ հասկանում և հայ ժողովրդի այժմեան պահանջները։ Նա գիտէ որ այժմեան հայրենիքը էլ առաջւանը չէ և ողբում է իւր աղի վերայ, բայց չէ կարողանում ողբալ իւր աղի հետ, որովհետև չէ ապրել նրա հետ։ Որպէս հայրենա-

սէր, Հ. Ալիշանը մինահատ է, այն ինչ մեզ զոնէ հայրիկ է հարկաւոր։

Պէտք է արդեօք աւելացնել որ այս՝ զուցէ անախորժ նկատողութիւնները ամենևին չեն արգելում մեզ խոստովանելու նահապետի՝ հայկական գիտութեանը և գրականութեան արած մեծամեծ ծառայութիւնները։ Հայ հասարակութիւնը, մեծ հանդիսով ոսնելով Ալիշանի գրականդիտական գործունէութեան յիսնամեակը, ապացուցեց որ գիտէ արժանապէս գնահատել իւր գործիչներին՝ ազատ որ և է կրօնական նախապաշարմունքներից։ Բայց դոյն հանդիսաւոր ոսնախմբութիւնը չը համոզեց արդեօք հայրենասէր մխիթարեաններին, որ մեղանում կայ արդարև հայկաթոլիկութիւն, բայց չը կայ կաթոլիկ հայութիւն... ժամանակ չէ՞ արդեօք հրաժարուել «հերձուածող» հայերիս դէպի կաթոլիկութիւն դարձնելու տենաքանդ և ազգակործան ձգտումներից։

Ս. Ղազարու կղզում առաջին անգամ մի քանի ժամ մնալով, ես բախտ ունեցայ ծանօթանալու միաբաններից չատերի հետ և վայելելու նրանց հիւրասիրութիւնը։ Հաչից լետոյ «հայոց գրականութեան պատմութեան» պատկառելի հեղինակի՝ Հ. Գարեգին Զարբհանալեանի սիրալիր առաջնորդութեամբ. ես այցելեցի եկեղեցին, թանգարանները, մատենադարանը և տպարանը։ Այդ ամենը, որ բաղմիցս նկարագրուած է մեր գրականութեան մէջ, չատ գեղեցիկ տպաւորութիւն արաւ վրաս։ Իմ ուշադրութիւնը գրաւեց մանաւանդ մատենադարանը, որի գրքերը և ձեռագրերը պահւում են օրինակելի խնամքով՝ հիանալի պահարաններին մէջ, երկու լուսաւոր, ապահով սենեակում։ Ինչ տհագին տարբերութիւն Էջմիածնի մատենադարանի մռայլ, ցուրտ և խոնաւ սենեակներից, որտեղ տափին տասն երկու ամիս մէներ էին պար դալիս և նոր ստացած գրչագրերը թափւում էին անխնամ՝ լատակի վերայ... Սակայն արդարութիւնը պահանջում է ասել որ Վենետիկի մխիթարեաններն էլ աւելի լաւ են պահպանում իրանց մատենադարանի գանձերը, քան ուսումնասիրում և լոյս ընծայում, և այդ կողմից անհամեմատ աւելի գործ են կատարել այժմեան միաբաններին նախորդները մխիթարեան նոր սերնդի գրեթէ բոլոր մատաւոր ստեղծագործութիւնները ամփոփում են մի պարբերական հանդիսի մէջ, որի բազմախոստաց վերնագրին ամենևին չէ համապատասխանում իւր անգոյն և աղքատ բովանդակութիւնը։ Եւ ես երկիւղ եմ կրում որ Ալիշան վերջին աստղը լինի Ս. Ղազարու գրականական հորիզոնի վերայ։ Եթէ միայն մի թարմ հոսանք չը մտնի այժմեան անշարժ միաբանութեան մէջ։ Արդարև երիտասարդ վարդապետների մէջ կան մի երկու հոգի, որոնք աշխատում են ընթանալ նահապետի չաւղով, բայց նրանց պակաս է հռչակաւոր ուսուցչի մատենագրական տաղանդը և ջանասիրութիւնը. դրա փոխարէն նրանք փոխ են առնում նրանից նրա բացասական յատկութիւնները՝ ծայրաստեղ հնատաչտութիւնը և ճոխ լեզուն, որ իւր ձևերով ոճերով, ուղարձաձևերով ծաղրելի լինելու չափ արուեստական է։

Հետեւեալ օրը խալացի ուղեկցորդիս հետ ի միջի այլոց ես գնացի Մուրատ-Ռափայէլեան ուսումնարանը։ Դա մի ահագին շինութիւն է, որ ինչպէս ճիշտ նկատել է Հ. Բաստամեան, նման է աւելի մի մեծատան պալատի, քան մի դպրոցի։ Այդ տան ճակատին ես կարդացի հայերէն. «Մուրատ Ռափայէլ (!?) վարժարան»։ Մտնելով ներս, այցեատոմս տալ պահապանին և լայտնեցի դալուս շարժառիթը։ Մի քանի րոպէից լեռոյ դուրս եկաւ մի բարձրահասակ չիկահեր և քաղցրութեամբ պատասխանելով իմ բարեւին, հրաւիրեց ինձ իւր սենեակը։ Դա Հ. Սամուէլ Գանթարեանն էր, Ղազար փարպեցու պատմութեան ֆրանսերէն թարգմանիչը։ Նա ցոյց տուաւ ինձ ուսումնարանի ընդունարանը, հանդիսարանը և մի քանի ուրիշ սենեակներ, բայց ես չը տեսայ ննջարանները, որ այնքան մռայլ դոներով էր նկարում Հ. Բաստամեան։ Աչք ածելով հանդիսարանը ես ապշեցայ նկատելով այդ չքեղ դահլիճի կամ կարասիքը, որ պատած էր կեղտոտ, պատառոտած ծածկոցներով։ Իմ զարմացական հարցմունքին Հ. Սամուէլը պատասխանեց՝ որ այդ ծածկոցները՝ կամ-կարասիքը մաքուր պահելու համար են, բայց թէ ինչու կեղտոտ և պատառոտած, այդ մութ մնաց ինձ համար։ Իմ լարդելի առաջնորդը կամեցաւ ներկայ անել ինձ նաև Հ. Ճէլալեանի դասին։ Մենք մտանք մի փոքրիկ թէև լուսաւոր սենեակ, որտեղ հին, աւողջապահական կանոններին անհամապատասխան նստարանների վերայ նստած էին մօտ 30 նիհար դժգոյն աշակերտներ։ Պատուհանի մօտ կախեղրի աթոռի վերայ նստած էր ուսուցիչը՝ մի թխահեր, սև՝ կրակոտ աչքերով վարդագոյն։ Մեր մտնելուն պէս բոլոր աշակերտները՝ կարծես մոգական գաւազանի ազդմամբ, վայրկենապէս ոտքի կանգնեցին։ Ողջունելով, ես խնդրեցի նստեն, նրանք մնացին անշարժ։ Ես կրկնեցի և երեքկնեցի խնդիրս, բայց զուր, նրանք չը փոխեցին իրանց սպասողական դիրքը։ Ես հարցական հայեացք ձգեցի ուսուցչի վերայ, սպասելով նրա նշնիմաստ հրամանին, բայց այս անգամ էլ զուր անցաւ լայտ... խեղճ մանուկներին չը լոգնեցնելու և ինձ լիմար դրութիւնից ազատելու համար, շնորհակալութիւն և մնաք բարև ասելով, դուրս եկայ։ Անցայ մի քանի անկարգ և դատարկ դասարաններով և իջայ ցած, խիստ աննպատակ զազափար կազմելով այդ իրաւամբ բարի համբաւ չունեցող վարժարանի մասին։

Միւս օրը ես կրկին այցելեցի Ս. Ղազարու վանքը։ Հ. Գարեգին Զարբանալեանի հետ ես բախտ ունեցայ այս անգամ ներկայանալ գեր. Իգնատիոս աբբահայր Կիւրեղեանին։ Դա մի բարձրահասակ, վայելչադէմ, 50—55 տարեկան մարդ է որի բարեկիրթ վարուղութիւնը և չափաւոր հայեացքները միանգամայն լարմարւում են իւր բարձր դրութեանը։ Երբ մենք մտանք նրա սենեակը, նա ձեռին բռնած ունէր մի գիրք և, ինչպէս երևում էր, կարդում էր։ Նա ընդունեց ինձ քրիստոնէութեան առաջին դարուն վայել պարզութեամբ և ձեռի գիրքը, որ մի շարական էր, աչքիս

առաջ դնելով, սկսեց ինձ բացատրել բառերի գլխին դրած նշանների զորությունը։ Մեր խոսակցությունը անզգալի կերպով անցաւ մեր հին և նոր գրականության և մեր հոգևորականության արդի վիճակին։ Գեր. Կիւրեղեան մի ժամանակ հայոց լեզվի դասեր է տուել պ. Գրիգոր Արծրունուն. նա գովասանքով էր խոսում «Մշակ»-ի խմբագրի մասին, բայց հաւան չէր նորա այժմեան հայերէնին։ Վիճաբանելու տեղը չէր ի հարկէ, և առանց պաշտպանել կամենալու «Մշակ»-ի լեզուն, հարցը ընդհանրացնելով ես նկատեցի որ ռուսահայոց մամուլն առհասարակ աւելի բնական և ընդարձակ միջոցների է դիմում աշխարհիկ գրական լեզուն մշակելու և հարստացնելու համար, քան տաճկահայոց մամուլը, որ իւր գրաբառամոլությունը հասցնում է ծայրայեղության։ Մեր հոգևորականության մասին խոսելիս, գեր. Իգնատիոսը խիստ ժուժկալ էր և չը նայած իմ նկարած տխուր պատկերին, նա հաճությամբ խոստովանում էր մեր ժամանակակից հոգևորականների մէջ նաև լուսաւոր անձերի գոյությունը։ Ի դէպ է այստեղ լիշատակել որ ս. Ղազարու միաբանները ամենայն լարգանքով էին վերաբերում դէպի մեր կրօնական համոզմունքը։ Որքան ես կարողացայ դիտել, այդ մարդիկ կաթոլիկ են ոչ միայն համոզմունքով, այլ և գործնական հայրենասիրության տեսակէտից հռոմէական եկեղեցուց դուրս չեն որոնում փրկությունն հայոց ազգի համար։ Նրանց կարծիքով՝ մեր ազգի դժբախտությունը առաջացել է՝ մեզանից զօրեղ և բարգաւաճ քրիստոնեայ ազգերի դաւանությունը չ'ընդունելու կամակոր ցանկությունից, և մեր փրկությունը այն կը լինի որ կրօնափոխությունով ուղղենք մեր պապերի սխալը... Այդպէս են դատում Մխիթար Սեբաստացու աշակերտները. ուղիղ թէ սխալ՝ բայց այդ է իրանց ասելով, իրանց խորին համոզմունքը։ Համոզմունքի դէմ մենք, ի հարկէ, բան չ'ունինք, բայց մեր խորին համոզմունքովը էլ մխիթարեանների այդ համոզմունքը նոյն տեսակ անաքրոնիզմ է, ինչպէս իրանց «Բաղմավէպ»-ի լեզուն [1]։

Իրիկնադէմին, երբ հ. Ղևոնդ Ալիշան ճեմում էր պարտիզում, երիտասարդ հ. Բարսեղ Սարգսեանի հետ ես մօտեցայ նորան։ Շուտով խօսք բացի «Այրարատ»-ից, որի լոյս տեսնելուն անհամբեր սպասում էի։ Գործի տպագրությունը դեռ չէր վերջացել, բայց նահապետը այնքան բարի եղաւ և պատրաստական, որ աննկատելի կերպով մեզ թողնելով, գնաց և մի րոպէից յետոյ վերադարձաւ՝ ձեռին «Այրարատ»-ի մի քանի տպագրած թերթեր։ Դա մի մեծ սիւրպրիզ էր՝ որ արաւ ինձ նահապետը և մի և նոյն ժամանակ մի նոր և փայլուն ապացոյց այն անհուն համեստության, որ նշմարել էի ես մեր ծանօթության առաջին վայրկեանից։ Թերթելով գիրքը նա տալիս էր ինձ բացատրություններ մի այնպիսի եղանակով՝ կարծես

[1] Տե՛ս «Մուրճ» 1890 թ. № 4.

թէ խօսքը իւր ուշխատութեան մասին չը լինէր։ Կը հաւատաք, եթէ ասեմ որ այդ մարդու բերանից ես ոչ մի անգամ չը լսեցի ես դերանունը։

Ամբողջ մի ժամ էր, մենք մեն էինք գալիս և ծերունի դիտնականը չէր ցոյց տալիս բնաւ լոգնածութեան նշան։

—Հայր սուրբ, օգտուեցի ես դէպքից, երբ նա իմ հարցին պատասխանեց թէ դեռ վաստակած չէ,—հայր սուրբ, դուք կարող էք ճանապարհորդել Հայաստան։

—Երուսաղէմ պիտի հանապարհորդեմ, կատակ արաւ նահապետը, ակնարկելով վերին Երուսաղէմը։

—Ո՛չ, ոչ դեռ վաղ է. դուք դեռ բաւական առուգ էք ձեր սիրած հայրենիքը ճանապարհորդելու համար։

—Ուղիղն ասեմ, լրագրերուն մէջ երբեմն այնպիսի բաներ կու կարդամ, այն կողմի քաղաքներուն վրայ որ կը զգուեմ։

—Ի՞նչ...

—«Սատկոտած կատուներ, շներ...», չարունակեց նա կատակը։

Պարզ է որ ծերունի բանաստեղծը չէ ուզում սիրտը մորմոքել և «անդէն ի տեղւոջն տեսնելով անփառունակ հայրենիքի» ողբալի վիճակը, որ այսպիսի սրտաշարժ խօսքերով է պատկերացնում ինքն իրան։

Տեսէք դեղանքն ու քաղաքընին խառնուփընդոր,
Սառնապաղուկ գետոց ջրերն՝ չարիւր լորդոր.
Տեսէք ռամիկն ու մեծատուն ամէքն աղքատ,
Ցընակորոյս բարբարական դաշտէ ի դաշտ.
Փախչեն գընան, չը գիտեն ուր, լետք չը նային,
Զի սուրն անգութ փրուէ զայնոնք ցուրտ ի գետին.
Դոքա այլ ուր ըզփախ առել ըշտապ կ'երթան,—
Ամէնքն ի մէկ տեղ. ոհ. ամենքն ի գերեզման։
Ահա ծերեր, որ հարկեսր ալիքն առել
Փախչիլ փորձեն, փորձանք գոչեն, ընկնին մեռել.
Ահա անսիրտ խեղճ կընկրտիք, որ անլաչակ,
Ցետ երկնուն կանչուռտելով, մընան մինակ.
Պարկեշտ աղջկունքն, որ արեէն ծածկըւէին,
Գազանակերպ մարդկան ձեռքէ ի ձեռք ընկնին.
Ահա մատղաշ մայրն, որ զըստենի տըղեկն առեր,
Լեղապատառ խոլոռ մոլոր կ'երթայ վըհեր,
Պահ մի թողու զտըղայն ի վայր, դէմ դայ զահճին,
Ցամքած ծոցիկն առել՝ մօտ գութ լիչէ նմին.
Բայց սուրն անեղ ոչ մօտ դիպայ ոչ որդեկին,
Ծաղիկն ու ճուղ մէկտեղ կըտրէ վառ մոռ նուին.
Կաթն ու արիւն զինչ եղ ու մեղր (?) հետ կաթկթին...
Հրնչանակք, թէ գութ ունիք՝ հանէք դայս կաթս ի երկին։—

Հասաւ իմ գնալու ժամը։ Պարտիզում արդէն ցուրտ էր։ Թեթև հողմից ս. Ղազարու ծառերի տերևները դողում էին. ծովը չորերի վերայ նստում էր խոնաւութիւն։ Վանքի մուտքի մօտ, որտեղ ինձ սպասում էր Մխիթարեան նաւակը կանգնած էին մի քանի միաբաններ։

—Գրոց վիշտակարաններ ղրկեցէք, ասաց ինձ հ. Ալիշան, երբ ես վերջին անգամ համբուրեցի նորա աջը։

Ես սեղմեցի հ. Գարեգին Զարբհանալեանի ձեռք, որ այնքան սիրալիր ընդունելութիւն արաւ ինձ, չնորհակալութիւն և մեացեք բարեաւ ասացի միւս վարդապետներին և ճանապարհ ընկայ, հետս տանելով քաղցր տպաւորութիւններ։ Բայց դեռ երկար երկա՛ր նայում էի ես ս. Ղազարու կանաչազարդ կղզեակի վերայ, մինչև բոլորովին ծածկուեց աչքից։

Հետևեալ օրը՝ առաւօտեան, երբ երկաթուղու կառախումբը տանում էր ինձ դէպի «պաւիտենական քաղաքը» և ես հաչիւ էի պահանջում ինձանից Վենետիկ ստացած տպաւորութիւնների մասին,—ինձ ծանօթ մարդկանց բազմութեան միջից՝ երևակայութեանս մէջ կենդանի պատկերացաւ մի ալեոր ծերունի՝ կանտ գլխով, խորշոմներով պատած լայն ճակատով, թաւ-չօնքերով հովանաւորուած խոշոր աչքերով և ձիւնի պէս սպիտակ մօրուքով։

—Գրոց վիշտակարաններ ղրկեցէք, մտաբերեցի ես հ. Ղևոնդ Ալիշանի՝ ինձ ասած վերջին խօսքերը։

ԹԷ ԻՆՉՊԷՍ Է ՊԱՐԶՈՒՄ «ԱՐՁԱԳԱՆՔ»-Ը ԺՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

(Իմ վերջին հաշիւը պատկերազարդ շաբաթաթերթի հետ)

Մեր պատկերազարդ շաբաթաթերթը, որի աշխատակիցը ինձ հրաւիրել էր Թիֆլիզ՝ իւր գրաղարանը և ինքը ճանապարհ ընկել դէպի Բերլին, այժմ (Արձագանք, № 21) իւր քննադատի ընկած վարկը բարձրացնելու և իմ գրքոյկի վարկը վայր ձգելու համար, չարախնդաց տաղնապով առաջ է բերում Հ. Սուքիաս Պարոնեանի կարծիքը իմ «Փաւստոս Բիւզանդ»-ի մասին։ Այն նախաբանը, որով պատկերազարդ շաբաթաթերթը ձգտում է որոշ տրամադրութիւն հաղորդել իւր ընթերցողին՝ առաջ բերած քննադատութեան նկատմամբ, այնքան բնորոշ է «Արձագանք»-ի ոգու և ուղղութեան համար, որ մենք ամբողջապէս դնում ենք այստեղ ընթերցողի աչքի առաջ։

« Կ. Պոլսի Իզմիրեանց կտակի յանձնաժողովին, ասում է «Արձա-
« գանք»-ը, 'ի միջի այլոց, այս տարի ներկայացած է և ուսուսանալ ն-
« Մաղաթեանի «Փաւստոս Բիւզանդ» գրքոյկը մրցանակ տանելու համար։
« Յանձնաժողովը այս աշխատութիւնը յանձնել էր՝ Սուքիաս վ. Պարո-
« նեանին քննադատելու։ Որովհետև այս գրքի մասին «Արձագանք»-ում
« տպւած էր մի քննութիւն և այդ քննութեան հեղինակի, մեր աշխա-
« տակից պ. Ն. Քարամեանի դէմ պ. Մաղաթեան մի քանի (իմն մէկ
« ու կէս) յարձակողական յօդուածներ տպեց «Մուրճ» ամսագրում, ուստի
« ասելորդ չենք համարում, ճշմարտութիւնը պարզելու համար, առաջ բերել
« հայր Պարոնեանի կարծիքը վիշտալ գրքոյկի մասին, որի հեղինակ պ.
« Մաղաթեանը այնքան վրդովուած է «Արձագանք»-ի քննադատի անանուն կարծիքից
« պարզապէս։» Ով հետևել է իմ և «Արձագանք»-ի աշխատակցի միջև տեղի ունեցած բանակռուին, անշուշտ նկատած կը լինի, որ ես երբէք չեմ վրդովուել իմ փորձի մասին յայտնած անանուն կարծիքների պատճառով («Մուրճ», №№ 4,6)։ Եւ ինչպէս կարող էի ես վրդովուել այդ պատճառով, երբ ես ինքս խոստովանում եմ իմ գրքոյկիս խոշոր պակասութիւնները, անւանում եմ իմ փորձը թոյլ, և ցանկութիւն եմ յայտնում որ Բուզանդարանը արժանանայ աւելի լուրջ և հիմնաւոր հետազօտութիւններ։ («Փաւստոս Բուզանդ», VII-VIII, 52)։ Այդ տեսակ բացարձակ ծանուցումներից վատ միայն կրքից կուրացած զրպարտիչը կարող է ասել թէ ես վրդովւած եմ քննադատների «անանուն կարծիքի պատճառով»։ Ո՛չ, պարոններ, իմ վրդովմունքի պատճառը բոլորովին ուրիշ բան է եղել։ Կրիտիկոսի մէջ ես ամենից աւելի յարգում եմ նրա ազնւամտութիւնը և այդ է պատճառը որ ինձ ոչ այնքան զրաղեցրել է այդ է պատճառը որ ինձ ոչ այնքան զրաղեցրել է այն ինդիրը՝ թէ որքան նպաստաւոր կամ անանուն կարծիք են յայտնել եմ փորձի մասին, որքան այն՝ թէ որքան մաքուր խղճմտանքով են մատեցել իմ կրիտիկոսները իրանց սուրբ պաշտօնին։ Այդ է

պատճառը որ իմ բարեխիղճ կրիտիկոսներին ես պատասխանել եմ կարճ ի կարճոյ, իսկ այն կրիտիկոսին, որ «համեստութիւն և ազնուութիւն» բառերով դիմակաւորուած, աչքակապութիւնը արդար դատաստանի տեղ էր ուզում անցկացնել, ես չարաչար հարուածել եմ մի չարք անողորմ մերկացումներով։ Արդ, ինչից է ուրախանում «Արձագանք»-ը։ Նրանից որ Հ. Սուքիաս Պարոնեանն [1]) էլ է իւր աչխատակցի պէս անենպատ կարծիք յայտնում իմ դրքոյկի մասին։ Բայց համեմատելէք վերը մատնացոյց արած խօսքերս Հ. Պարոնեանի վերջնական վճռի հետ, և կը տեսնէք թէ որքան ուրախանալու տեղիք ունի «Արձագանք»-ը։

«Վերջնական դատաստանս այս է, եզրակացնում է Հ. Պարոնեան, «որ այս երկասիրութիւնս («Փ. Բուզանդ») գիտնական պարբերական «հանդիսի մը մէջ, նոյն իսկ գիտնոց օգտակար և հաճելի ընթերց- «ուած մը հայթայթող, արժանաւոր լօդուածներ կարող էր կազմել, «բայց ոչ և առանձին մատեան մը, որ ունկի պարտաւորութեանց տակ «դնող ձև մի է զգործն»։ Սակայն և այնպէս, չարունակում է Հ. Պարո- «նեան, նկատելով աչխատասիրեալ նիւթոյն դժուարութիւնը, և միանգա- «մայն,—ինչպէս ինչ ինչ ակնարկութիւններով կը նկատեմ,—հեղինակին «երիտասարդական հասակն, և չաջողելն վերջապէս, իւր ամէն թերու- «թեամբքն, մասամբ լիրմէ և մասամբ նախորդ բանասէրների համառա- «ւաքեալ ամփոփ ձևոյ տակ Բուզանդեան մատենին վերաչ պիտանի տե- «սութիւնս և հմտութիւնս ներկայացնել, և վերջապէս Պ. Հեղինակին ե- «բաչխաւորելն մեզ իւր այս առաջին փորձովն որ լապագային բանասի- «րութեան օգտակար երկասիրութիւններ կարող է ընծայել, արժանի կը «տեսնեմ քաջալերանաց ըստ չափուն որով արժան կը դատի վարձա- «արութեան պատ. լանձնաժողովդ»։

Այժմ ձեզ եմ դիմում ես՝ այս անդամ արդարև անհամեստս, «ազնիւ և համեստ» պարոններդ, այդ ինչ ազնիւ զգացմունքից դրդուած դուք թաղցնում էք ձեր ընթերցողներից Հ. Սուքիաս Պարոնեանի վերջին խօսքերը [2])... Այդպէս էք պարզում դուք ճշմարտութիւնը, աչքակապները։

---

[1]) Հմտ. «Արձագանք» № 21 և «Արևելք» № 1931. և դէպ այստեղ յիշենք որ Հ. Պարոնեանն «Արևելք»-ում ասում է թէ ես իմ փորձիս մէջ ցոյց եմ տալիս իմ «սիրած արևելտին վերաբերեալ» վերլուծական կարողութիւն, իսկ «Արձագանք»-ում արևելտին բառը փոխել է հարաւտին։ Կեղծիք է այս, թէ տպագրական սխալ... յամենայն դէպս հարաւտին բառը շատ կասկածների պղբիւր կարող է դառնալ։

[2]) Շուտով ես կը հրատարակեմ իմ պատասխանը Հ. Պարոնեանին։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

«ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ.

	Ր.	Կ.
«ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով. . .	12	—
ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱՒ.— *«Ազգաբնակութիւնը և ազգաբնակչական շարժումները»*	—	40
ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿ. — *«Հողասիրութիւնը և հասարակութիւնը»*	—	40
ԲՕԿ *բժիշկ.*— *«Ֆիզիքական և մտաւոր զարգացման մասին»*	—	30
ԱՐԱՍԽԱՆԻԱՆՑ Ա.— „Закавказская хлѣбная торговля“.	—	75
— „Закавказскіе шелкометальные заводы“	—	80
ՊՈՕՇԵԱՆՑ ՊԵՐՃ.— *«ՅԵՅՆԵՐ»—(վէպ)*	1	—
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (Ղզլարցի)՝ *Մանկատածութիւն.*	—	50
ԱՏԲՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ.—*«ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ»—վէպ հայ-կաթոլիկների կեանքից*	1	—
Ի.Է.Օ.—*«ԿՈՐԱԾՆԵՐ»—(վէպ)*	—	50
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ, *բժշկ.* (Ղզլարցի)՝ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ. ՄԻ ՔԱՆԻ ՀԻԱՆԴՈՒԹԻՆՆԵՐԸ»—		5
ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ ՍՈՂՈՄՈՆ.—*«ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ։ (կեանքից պատկեր)*	—	40

Ճանապարհածախսը խմբագրութեան վերայ է։ Դրամի տեղ կարելի է ուղարկել պօստի մարկաներ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱՊԻՐ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ Յ. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց, Գործապիր Մնայուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանաստէրներն՝ որք ազգային դպրութեան և Պատմութեան վերաբերեալ ո՛ր և է աշխատութեամբ մը կը փափաքին մասնակցիլ Սահակ-Մեսրոպեան գրական Մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1891 տարւոյ Յունվարի վերջ առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն, Յանձնաժողովոյս հասցէին։

Տպագրեալ աշխատութիւնք պէտք է երեք օրինակ յուղարկուին. իսկ ձեռագիրք բնաւ յետ չեն դարձուիր։

РЕСТОРАНЪ ПУРЪ-ГВИНО

На Головинскомъ проспектѣ, въ домѣ князя Багратіонъ-Мухранскаго (подъ Тифлисскимъ собраніемъ).

Ежедневно приготовляютъ кушанья Европейской и Азіятской кухни. Спеціальность гурійскихъ блюдъ. Обѣды по-мѣсячно изъ 2-хъ блюдъ отъ 12 руб. Отпускаются также и на домъ.

Напитки и вина изъ лучшихъ фирмъ кн. И. К. Багратіонъ-Мухранскаго и другихъ фирмъ отъ 40 коп. бутылка и дороже. Пиво мѣстныхъ заводовъ, а также одесское и жигулевское.

При ресторанѣ отдѣльные семейные кабинеты. Билліарды русскій и французскій, нардъ и шахматъ. Получаются журналы и газеты мѣсячныя и столичныя. Для пріѣзжихъ меблированныя комнаты отъ 50 коп. до 1 р. 50 коп. по-суточно и отъ 12—30 руб. по-мѣсячно. Русскій билліардъ пріобрѣтенъ на кавказской выставкѣ, гдѣ получилъ первую награду.

TECHNIKUM MITTWEIDE

ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԷ

Սաքսոնիայում

ԴԻՐԵԿՏՈՐ՝ **ԻՆԺԵՆԵՐ Կ. ՎԷՅՅԵԼ**

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ-ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՑ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑ

23-ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այս դպրոցը, որը գտանւում է Միտվայդէ քաղաքում, Գերմանիայում, (թագաւորութիւն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն ՄԵՔԵՆԱՆԵՐ շինելու և դորա ամենամօտ առարկաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ էլեքտրո-տեխնիկ և ջրաղացների շինութիւն։

Սիստեմական ուսումով այդ հիմնարկութիւնը պատրաստում է հետեւեալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կոնստրուկտորներ՝ մեքենաներ շինելու, էլեքտրոտեխնիկի և ջրաղացներ շինելու համար։

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իրանց ստորադրեալների չափ պէտք է հասկացողութիւն ունենան, այդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւն։

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, ուր հարկաւորւում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փայտենիների գործարաններ, շոգի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրախմալի, շաքարի, ասեղների, պողպատէգրիչների, կահ-կարասիների, քիմիական գործարաններ, գազի, լուցկիի գործարաններ և այլն և այլն։

4. Դիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար փչած գործարանների համար։

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ այդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար։

Ընդունելութիւնը լինում է ամեն տարւայ ապրիլի և հոկտեմբերի միջին։

ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ ուսման առաջին դպրոցում, նայած աշակերտի նախապատրաստութիւններին, լինում է $2^1/_2$ կամ 3 տարի, երկրորդ դպրոցում $1^1/_2$ տարի։

ՏԱՐԻՔԸ ընդունւողի պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս։

Սոլն $18^{89}/_{90}$ թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, որոնցից Ռուսաստանից՝ 66 հոգի։

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է դիմել՝ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, ուր ի միջի այլոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտվայդէի կեանքի, և դպրոցի վարչութեան պահանջմունքների մասին։

„ՄՈՒՐՃ“

ԱՄՍԱԳՐԻ

1890 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է։

Տարեկան բաժանորդագինը	10 ր.
Կէս տարուանը	6 ր.
Երեք ամսուանը	1 ր.
Մի դրքոյկը	1 ր. 50 կ.

Ընդունուում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս ստացին կիսամեսիկում ամբողջը վճարելու պայմանով։

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների աշակերտները վայելում են զիջումներ, համեմատ ստանձին տպած յայտարարութեան։

«ՄՈՒՐՃ»-ի ծաւալը տարէցտարի մեծացնելը միանգամայն կախուած է բաժանորդագրութեան յաջողութիւնից։ Ծաւալին և կախուած նիւթերի հարստութիւնը։ Այդ պատճառով մենք յորդորում ենք մեր ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը չը խնայել «Մուրճ»-ը իրանց ծանօթի շրջաններում տարածելու համար։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

Ամենական մի երեսի համար.	10 ր.
„ կէս երեսի համար	6 ր.
„ քառորդ երեսի համար	1 ր.

Դրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարուած դրքերով՝ սոցա գների համեմատ։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Խմբագրութիւնը գտանուում է՝ Գանձակեան փողոց, նախկին տուն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ бывш. Іоаннисіани), բոլորովին մօտ Երևանեան հրապարակին։

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».